ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

# ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ՎԱՆՔԸ



ՄՈՒՂՆԻ
MOUGHNI

KAREN MATEVOSYAN

# HAVUTS TAR MONASTERY

КАРЕН МАТЕВОСЯН

# МОНАСТЫРЬ АВУЦ ТАР

MOUGNI PUBLISHERS • ИЗДАТЕЛЬСТВО “МУГНИ”
YEREVAN • 2012 • ЕРЕВАН

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՒՈՍՅԱՆ

# ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ՎԱՆՔԸ

«ՄՈՒՂՆԻ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 2012

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

Մ 151

**Տպագրվել է բարեգործությամբ**
**Ռաֆայել եւ Գալինա Թերզյանների**
**(Սոչի, Ռուսաստան)**

**Книга издана на пожертвования**
**Терзяна Рафаела и Галины**
**(Сочи, Россия)**

Մաթեւոսյան Կարեն
Մ 151 Հավուց թառի վանքը/ Կարեն Մաթեւոսյան. – Եր.:– Մուղնի, 2012 – 120 էջ:

Գրքում ներկայացված է միջնադարյան Հայաստանի նշանավոր վանքերից մեկի՝ Գառնիից ոչ հեռու գտնվող Հավուց թառի պատմությունը եւ մշակութային ժառանգությունը: Վանքում եկեղեցիներ են կառուցվել 11-14-րդ դարերում, այն եղել է գրչության կենտրոն եւ նշանավոր «Ամենափրկիչ» սրբազան խաչի պահպանության վայրը: 17-րդ դարում այս վանքը եղել է Երեւանի հոգեւոր առաջնորդների նստավայրը:
Նախատեսված է պատմաբանների, Հայոց պատմությամբ եւ մշակույթով հետաքրքրվող ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

© Մաթեւոսյան Կարեն, 2011
© «Մուղնի» հրատարակչություն, 2012

ISBN 978-99941-33-70-3

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հավուց թառը Հայաստանի հնագույն վանքերից է, որի հիմնադրումն այս վանքի եկեղեցական ավանդությունը կապում է Սուրբ Սահակ Պարթեւ (348-439) կաթողիկոսի եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի (360-440) անվան հետ: Հանրահայտ Գառնիի եւ Գեղարդի միջեւ գտնվող Գողթ գյուղի դիմաց, Ազատ գետի Գողթ վտակի ձախափնյա բլուրների վրա ընկած վանական համալիրը բաղկացած է երկու հիմնական եւ հարակից հուշարձանախմբերից:

Հավուց թառը միջնադարում հռչակված է եղել այստեղ պահված «Ամենափրկիչ» անունը կրող փայտյա փորագրազարդ խաչի շնորհիվ (այժմ գտնվում է Ս. Էջմիածնում), որը բյուզանդական Վասիլ կայսեր նվերն է եղել Հայոց Գագիկ Ա թագավորին, որն էլ այն հանձնել է Քեղի (Գեղի) բերդի տիրոջը՝ Գեւորգ իշխանին, իսկ նա սրբությունը նվիրել է Հավուց թառին, որտեղ մինչ այդ եկեղեցի էր կառուցել: Հետագայում Հավուց թառի Ամենափրկիչ խաչի վայելած հռչակը պատճառ է դարձել նրա ծագման շուրջ հյուսված տարբեր ավանդությունների եւ այն անգամ համարվել է անձեռակերտ: Ժամանակի ընթացքում սրբազան խաչն իր անունն է տվել բուն վանքին, որն սկսել են կոչել Ամենափրկչի վանք:

13-15-րդ դարերում Հավուց թառը եղել է արդյունավոր գրչության կենտրոն, որտեղ գրված տասնյակ մատյաններ են հասել մեր օրերը: Վանքը նշանավոր է եղել նաեւ ուշ միջնադարում: Բավական է նշել, որ 17-րդ դարում Հավուց թառի վանահայր առաջնորդները համարվել են նաեւ Երեւան քաղաքի առաջնորդները: Սիմեոն Երեւանցի կաթողիկոսը (1763-1780) «Ջամբռ» աշխատության մեջ շատ մանրամասն ներկայացնում է վանքի 15-17-րդ դդ. ունեցած կալվածքները, որից պարզ է դառնում, որ այդ շրջանում այն իր հողային կարողություններով Հայաստանի առավել աչքի ընկնող վանքերից էր:

Բարեբախտաբար վանքի մասին նախկինում հայտնի աղբյուրներին բոլորովին վերջերս ավելացել են Հավուց թառի 14-րդ դարի կեսերի վանահայր Նաթանայել եպիսկոպոսի գրչին պատկանող ժամանակագրական տեղեկությունները: Այս նոր տվյալները գումարվելով արդեն հայտնի մատենագրական եւ վիմագրական նյութերին, թույլ են տալիս հիմնական գծերով ամբողջացնելու նշանավոր վանքի պատմությունը:

Հեղինակը խորին շնորհակալություն է հայտնում Հարավային Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մովսես եպիսկոպոս Մովսիսյանին եւ նրա հորդորով սույն գրքի տպագրության հովանավորությունը սիրահոժար հանձն առած տեր եւ տիկին Ռաֆայել եւ Գալինա Թերզյան ամուսիններին:

# ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես Հայոց մյուս խոշոր վանքերի, այնպես էլ Հավուց թառի պատմության սկզբնաղբյուրներն են պատմիչների երկերում պահպանված վկայությունները, տեղի եկեղեցիների պատերին կամ կոթողների ու տապանաքարերի վրա եղած վիմագիր արձանագրությունները եւ ձեռագիր մատյանների հիշատակարանները: Հավուց թառը տարբեր առիթներով հիշատակում են պատմիչներ Վարդան Արեւելցին, Կիրակոս Գանձակեցին, Մխիթար Այրիվանեցին, Ստեփանոս Օրբելյանը (13-րդ դ.), Թովմա Մեծոփեցին (15-րդ դ.), Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին եւ Առաքել Դավրիժեցին (17-րդ դ.), ինչպես նաեւ կաթողիկոս Սիմեոն Երեւանցին (18-րդ դ.), որի «Ջամբռ» աշխատությունը գրվել է 1765-1767 թթ., հրատարակվել 1873-ին[1]:

Հավուց թառի բազմաթիվ վիմագրերը, ինչպես նաեւ այստեղ գրված ձեռագրերի հիշատակարանները նույնպես հարուստ փաստական նյութ են պարունակում, որոնք ստորեւ ներկայացվում են համապատասխան բաժիններում:

Ինչպես վերեւում նշվեց, վանքի մասին նախկինում եղած մատենագրական նյութերին ավելացել են Նաթանայել Հավուցթառեցու վերջերս հայտնաբերված ժամանակագրական տեղեկությունները, որոնք նա մուծել է 1343 թվականին իր ձեռք բերած մատյանի մեջ, որը պարունակում է 12-րդ դարի հեղինակ Սամվել Անեցու Ժամանակագրությունը (Մատենադարան, ձեռ. թիվ 3681)[2]: Լինելով գրասեր մարդ՝ Նաթանայելն այդ ձեռագրում գրառել է Հավուց թառի վանքի եւ Գառնիի պատմության իրեն հայտնի տեղեկությունները, որոնց մի մասը բացառիկ կարեւորություն ունեն, քանի որ չեն հիշատակվում այլ աղբյուրներում: Նաթանայելի տեղեկությունները նաեւ պարզություն են մտցնում վանքի պատմության ցայժմ անորոշ կամ վիճելի համարվող մի շարք հարցերում:

1. Ջամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոց շրջակայից վանօրէիցն, համաժողովեալ եւ շարագրեցեալ ի Սիմէօնէ կաթուղիկոսէ Երեւանցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 275-280: Աշխարհաբարը՝ տե՛ս Սիմէոն կաթողիկոս Երեւանցի, Ջամբռ (թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի), Երեւան, 2003, էջ 385-392 (այսուհետեւ՝ Ջամբռ):
2. Կ. Մաթեւոսյան, Հավուց թառի վանքի եւ Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, «Բանբեր Մատենադարանի», 17, Երեւան, 2006, էջ 147-167, նույնի Սամվել Անեցու Ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009, էջ 129-142:



Հավուց թառի պատմության գիտական ուսումնասիրության սկիզբը կարելի է համարել Հովհաննես Շահխաթունյանցի 1842 թ. հրատարակված պատմաաշխարհագրական աշխատությունը: Հեղինակը նախ տեղում լինելով, ապա իրեն հասու աղբյուրներից օգտվելով, ներկայացնում է վանքի համառոտ պատմությունը, իսկ վերջում՝ վանահայրերի ցանկը[3]: Հավուց թառին բավական հանգամանորեն է անդրադարձել բազմահմուտ Ղեւոնդ Ալիշանը[4]: 1907 թ. վանք է այցելել Ռուսաստանի կայսերական հնագիտական ընկերության արշավախումբը (ղեկավար՝ Վ. Մ. Սիսոեւ), կազմել կառույցների հատակագծերը եւ հավաքել ու հրատարակել որոշ վիմագրեր[5]:

Հավուց թառի մասին առավել ընդգրկուն ուսումնասիրություն է հրատարակել Գարեգին Հովսեփյանը (1867-1952): Նրա «Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանման յուշարձանները հայ արուեստի մէջ» աշխատության առաջին մասը նվիրված է վանքի պատմությանը եւ վիմագրական ու հիշատակարանային հարուստ նյութ է պարունակում, իսկ երկրորդը՝ Ամենափրկիչ խաչին եւ հայկական նմանատիպ հուշարձաններին[6]: Հավուց թառի պատմության եւ մշակութային ժառանգության հարցերին անդրադարձել են նաեւ այլ հեղինակներ[7]: Իսկ վերջին տարիներին վանքի, հատկապես վիմագրական ժառանգության ուսումնասիրությամբ զբաղվել է հնագետ եւ վիմագրագետ Գագիկ Սարգսյանը[8]:

3. Յովհ. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842, էջ 293-297:
4. Ղ. Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 354-358:
5. Материалы по археологии Кавказа, вып. 13, Москва, 1916, с. 38-50.
6. Գ. Յովսեփեան, Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանման յուշարձանները հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937, վերահրատարակությունը տե՛ս Գ. Հովսեփյան, Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, հ. Բ, Երեւան, 1987 (հղումները կատարվում են վերահրատարակությունից, այսուհետեւ՝ Հավուց թառի Ամենափրկիչը):
7. Հ. Եղիազարյան, Հավուց թառի վանքը, «Էջմիածին», 1963, Ե, էջ 25-31, Զ, 38-49:
8. Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, «Լրաբեր» հաս. գիտ., 1988, N 4, էջ 65-71, նույնի, Վիմագրագիտական նորոյթներ. Հաւուց թառ, «Հանդէս ամսօրեայ», 2001, էջ 230-254:

# ՎԱՆՔԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄՆ ՈՒ ԱՆՎԱՆ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հավուց թառի հիմնադրումն այս վանքի եկեղեցական ավանդությունը վերագրում է Սուրբ Սահակ Պարթեւ կաթողիկոսին (387-436) եւ Սուրբ Մեսրոպ Մաշտոցին: Գարեգին Հովսեփյանը այս եւ մերձակա վանքերի հիմնադրման վերաբերյալ նկատում է. «Առհասարակ Գառնիի այդ շրջանի վանքերի՝ Գեղարդ, Աղջոց Ս. Ստեփանոս, Հավուց Թառ, հնությունը կապում են Լուսավորչի եւ Սահակ Պարթեւի հետ»[9]: Այնուհետեւ նա հղում է անում Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցու (898-929) պատմությանը, որտեղ վերջինս նշելով արաբներից սպասվող վտանգի պատճառով Դվինից դեպի Սեւանա կղզի իր հապճեպ հեռացման մասին, նշում է, որ անցել է «քարայրների վանքով» (ընդունված է համարել Այրիվանք-Գեղարդը), որը կոչում է Սուրբ Սահակի կացարան («…Ելեալ ի վանաց անտի՝ այրից՝ ի կցորդից սրբոյն Իսահակայ, որ ի ծործորս լերինն Գեղայ, ի ձորակի միոջ…»)[10]: Իսկ Աղջոց Ս. Ստեփանոս վանքի հիմնադրման մասին Հայսմավուրքի մեջ մուծված ավանդություն է պահպանվել, ըստ որի, Հռիփսիմյանների ընկերակից Ստեփանոսը հալածվելով ու փախչելով, այդ վայրում նահատակվել է, եւ որոշ ժամանակ անց նրա գերեզմանի տեղում վանք է հիմնել Սուրբ Գրիգոր Լուսավորիչը[11]:

Իր վերոնշյալ ուսումնասիրության մեջ Գարեգին Հովսեփյանը վկայաբերում է մի հատված Նաթանայել Հավուցթառեցու հիշատակարանից (ձեռագիրը ժամանակին պահվել է Սեբաստիայի Ս. Նշան վանքում, այժմ տեղն անհայտ է), որտեղ հեղինակն առանց թվական նշելու հայտնում է վանքի՝ սուրբ թարգմանիչների ձեռամբ հիմնված լինելու մասին, նաեւ Գրիգոր Լուսավորչի աղոթատեղ կոչում, եւ ավելացնում, որ հետագայում այն վերաշինել է Գեւորգ սպարապետը. «Գիրքս Հայոց թառոյ է, որ է աղաւթատեղ Սուրբ Լուսաւորչին, եւ հաստակառոյց հաստատեաց եւ հանդիսացոյց տեղի թարգմանութեան, եւ առն իմաստութեամբ սուրբ հայրապետն Սահակ եւ սուրբ վարդապետն Մեսրովբ եւ յետոյ նորոգեաց սպարապետն Հայոց Գորք իշխան»[12]:

9. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 15-16:
10. Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն (գրաբար, աշխարհաբար) աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երեւան, 1996, էջ 336-337 (այսուհետեւ՝ Հովհաննես Դրասխանակերտցի):
11. Տե՛ս Է. Զաքարյան, Աղջոց Սուրբ Ստեփանոս, Երեւան, 2007, էջ 11:
12. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 24, հմմտ. Զուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշան վանուց ի





*Հավուց թառ վանքի շրջանը*

Լեւոն Խաչիկյանը 14-րդ դարի հիշատակարանների ժողովածուում հրատարակել է մեկ այլ հիշատակարան, ըստ որի Հավուց թառի հիմնադրումը տեղի է ունեցել 426 թվականին, Սահակ Պարթեւ կաթողիկոսի (387-436) եւ Մեսրոպ Մաշտոցի ձեռամբ. «Շինեացաւ սուրբ եւ հռչակաւոր բազմաժողով մեծ մենար[ան]ն Հայոց Թառ ի սուրբ թարքմանչացն՝ ի Սահակ հայրապետէ Հայոց եւ ի Մեսրոփ վարդապետէ ԴՃ եւ ԻԳ (426) ամի ծնընդեանն Քրիստոսի, ի թագաւորութեանն Հայոց Վռամշապ[հ]ոյ, ի թագաւորութեան Հոռոմոց Արկադէոսի եւ Ոնորիոսի, եւ ի պատրիարգութեան Յոհաննու Ոսկեբերանի»[13]:

Նաթանայել Հավուցթառեցու Սամվել Անեցու ժամանակագրության մեջ մուծած տեղեկություններում նույնպես նշվում է վանքի հիմնադրման մասին: Ժամանակագրության ՆԻԳ (423) թվականի սյունակում Նաթանայելը նախ խոսում է վանքի հիմնադրման եւ անվան նշանակության մասին. «… **[հայրա]պետն Սահակ եւ Մաշտոց վարդապետն հիմնարկեցին եւ անուանեցաւ Աթոռ Հայոց եւ Թառ թարգմանութե(անց)** /// [Հաւ]ուց թառ ան[ուան]աւ»: Ցավոք, նախադասության երկրորդ մասի եղծված լինելու պատճառով չենք իմանում, թե հեղինակն ինչպես է «Հայոց թառի» (Աթոռ Հայոց եւ Թառ թարգմանության) մեկնաբանությունից հետո բացատրում նաեւ «Հաւուց թառի» իմաստը: Ավելացնենք, որ 15-րդ դարում վանքին նվիրված չափածո երկում Մանվել (Մանուել) եպիսկոպոս Բջնեցին նույնպես օգտագործում է

Սեբաստիա, կազմեց Թորգոմ արքեպս. Գուշակեան, Վիեննա, 1961, էջ 101-102:
13. ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1950, էջ 351:



*Հեթանոսական տաճարը Գառնիի ամրոցում*

«թառ թարգմանութեան» բնորոշումը՝ «Մեծդ մենաստան, Հայու թառ անուն, թառ թարքմանութեան»[14]:

Ղեւոնդ Ալիշանը վանքի անվան մասին գրում է. «Անծանօթ է պատճառ անուանս. ոմանց ստոյգ թուի *Հաւուց* ասել՝ զի յանկագոյն է զուգորդ *թառ* բառի, այլ հաւանագոյն թուի *Հայոց* լինել»[15]: Նկատենք, որ աղբյուրներում վանքի անվան երկու տարբերակն էլ կիրառվում է հավասարապես: Նաթանայելն ինքը, երբեմն միեւնույն պարբերության մեջ օգտագործում է վանքի երկու անվանաձեւն էլ, այսինքն, երկուսն էլ ճիշտ է համարում: Կարծում ենք, որ նա անվան մեջ «հաւ» բառը կիրառում է պապ, նախահայր նշանակությամբ[16], որով «Հաւուց թառը» ստուգաբանվում է Պապոնց կամ Մեծ հայրերի՝ այսինքն Սահակի եւ Մեսրոպի օթեւան:

Չպետք է բացառել նաեւ, որ «Հավուց թառ» տեղանունը գոյություն է ունեցել վանքի հիմնումից շատ ավելի առաջ, քանի որ թավ կանաչով ծածկված գեղատեսիլ բլուրները, որոնց վրա կառուցվել է վանքը, կարող էին հնուց անտի կոչված լինել Հավուց թառ, իբրեւ հավքերի բնակատեղ: Հիշենք, որ դա Արշակունյաց թագավորական ամրոցի՝ Գառնիի մերձակա մի վայր է, որտեղից

14. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 92, զանձն ամբողջությամբ տե՛ս գրքի հավելվածում:
15. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 354:
16. «Հաւ – Նախահայր, պապ, հայր հօրն կամ մօրն… նախնիք» (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, Վենետիկ, 1837, էջ 71):






*Հավուց թառի տեղը՝ Գառնիի ամրոցից դիտված*

հավանորեն անցել է դեպի արքունական որսատեղեր տանող ճանապարհը: Խոսրովի անտառի հիմնումն այդ կողմերում դրա անուղղակի վկայությունն է:

Վերադառնանք Նաթանայելի տեղեկություններին: Ժամանակագրական աղյուսակի ՆԻԶ (426) թվականի դիմաց նա գրում է. «Յասմ ամի **շինեց սուրբ հայրապետն Հայոց Սահակ զՍուրբ Կաթողիկէն ի Գառնոյ Ձորին ի վերա գետին** եւ ժողովեց բազում կրաւնաւորս հնտակեր եւ բոկագնայ եւ հաստատեց վանք եւ ինքն առանձնանայր ի **Հայոց թառոյ ի յաստ եւ անուանեցաւ Գետոց վանք** [եւ այ]**ժմ ունի զտեղիս զայս սուրբ ուխտն** [**Հաւուց**] **թառ»:**

Նաթանայելն ըստ էության ասում է, որ Սահակն ու Մեսրոպը 423-ին հիմնել են Հայոց թառը, ակնարկելով, որ այստեղ նրանք զբաղվել են թարգմանությամբ («անուանեցաւ Աթոռ Հայոց եւ Թառ թարգմանութե(անց)»): Այնուհետեւ 426 թ. Սահակը Գառնու ձորում, գետի մոտ հիմնել է մեկ այլ եկեղեցի (Սուրբ Կաթողիկե), Հայոց թառից տեղափոխվել այստեղ, կրոնավորներ ժողովել ու վանք հիմնել: Տեղն այդ անվանվել է Գետոց վանք, եւ Նաթանայելի ժամանակ այն Հավուց թառի ուխտի մաս է կազմել: Նշենք, որ մեզ ծանոթ սկզբնաղբյուրներում սա միակ տեղն է, ուր հանդիպում է «Գետոց վանք» անվանումը, որը Նաթանայելն օգտագործում է նաեւ 11-րդ դարի սկզբի դեպքերի առնչությամբ (դրան կանդրադառնանք քիչ հետո):

Այսպիսով Հավուց թառից ծագող տեղեկությունները վանքի հիմնադրումը վերագրում են Ս. Սահակին եւ Ս. Մեսրոպին, որը կարելի է տեղական եկեղեցական ավանդություն համարել: Սակայն Հովհաննես Դրասխանակերտ-

ցի կաթողիկոսի վկայությունն այն մասին, որ Գառնու ձորում է եղել Սահակ Պարթեւի կացարանը, հիմք է տալիս այստեղ ավանդությունից անդին նաեւ պատմական հիմք տեսնել:

Այս հարցի առնչությամբ ուշադրության է արժանի Նաթանայելի մեկ այլ հաղորդումն այն մասին, որ 877 թվականին Գեւորգ Բ Գառնեցի (877-897) կաթողիկոսը Հավուց թառը նորոգել եւ իր համար ամառային նստոց է դարձրել. «Սուրբ հայրապետն եւ մեծ **պատրիարգն Հայոց սուրբն Գէորք վերստին նորոգեց զնախադրական ուխտն Հաւուց թառ** եւ պայծառացոյց, փարթամացոյց գոյիւք **եւ ա[րա]ր իրն բնակ[ար]ան յամար[այ]նի ժամանակս**»: Ըստ երեւույթին Արարատյան դաշտի շոգ ամառվա պատճառով այստեղ (Վաղարշապատ, Դվին) աթոռակալող կաթողիկոսները հոգացել են ոչ հեռու գտնվող զով վայրում ամառային նստոց ունենալու մասին: Հավանաբար այդ նույն դերն է ունեցել Բյուրականը, քիչ հետո աթոռակալած Հովհաննես Դրասխանակերտցու համար, որտեղ նա նաեւ եկեղեցի է կառուցել (այն կաթողիկոսական ամառանոց է նաեւ այսօր): Այս համատեքստում անհավանական չէ, որ Սահակ Պարթեւն էլ, զով վայրում առանձնանալու եւ թարգմանությամբ զբաղվելու համար, ինչ-որ ժամանակ հաստատված լինի Գառնու ձորում գտնվող վանքերում: Ենթադրությունն ավելի հավանական է թվում, երբ նկատի ենք ունենում, որ Գառնիի ամրոցն այդ ժամանակ Արշակունի թագավորների ամառանոցն էր, եւ տրամաբանական է, որ կաթողիկոսն էլ դրան մոտիկ տեղում պիտի գտնվեր:

Հավուց թառի հիմնադրումը Սահակ Պարթեւին եւ Մեսրոպ Մաշտոցին վերագրող ավանդությունը պահպանվել է նաեւ հետագայում: 15-րդ դարի սկզբին Մանվել եպիսկոպոս Բջնեցին Ամենափրկչին նվիրված գանձում գրում է. «Ի դիր Մեսրոպայ, ի տեղ Սահակայ, թարքմանչացն ի սմայ բնակի բազմամեայ»: Հավուց թառի 17-րդ դարի վանահայրերից Սիմեոն Ջուղայեցին էլ վանքին ձոնած դրվատում գրում է.

«Սուրբ Սահակ, Մեսրովբ թարքման,
Որ Սուրբ Հոգովն զարդացան,
Սորա ըսկիզբն շինութեան,
Ի նոցանէ հաստատեցան»[17]:

Ասվածն ի մի բերելով պետք է արձանագրենք, որ Հավուց թառի մասին գրելիս այսուհետեւ պետք է անպայման նշել, որ տեղական եկեղեցական ավանդույթը վանքի հիմնադրումը կապում է Ս. Սահակ Պարթեւի եւ Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան հետ, որի մասին կան միջնադարյան մի շարք վկայություններ:

17. Դրվատն ամբողջությամբ տե՛ս գրքի հավելվածում:



# ԳԵՒՈՐԳ ԻՇԽԱՆԸ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԵ ԵՒԵՂԵՑՈՒ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

10-րդ դարի վերջը եւ 11-րդ դարի սկիզբը՝ Գագիկ Ա Բագրատունու (989-1017) թագավորության եւ կաթողիկոս Սարգիս Ա Սեւանցու (990-1019) աթոռակալության տարիները, Հայոց պատմության բուռն վերելքի ժամանակաշրջաններից մեկն էր: Անի մայրաքաղաքում Գագիկ թագավորը 1001 թվականին՝ Քրիստոսի ծննդյան 1000-ամյակին, կառուցեց Ս. Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցին, Զվարթնոցի փառահեղ տաճարի նմանությամբ, նրա կինը՝ Կատրամիդե թագուհին, այդ տարիներին ավարտին հասցրեց Անիի Մայր Տաճարի կառուցումը: Թագավորական ընտանիքին հետեւելով նշանավոր իշխաններն էլ հիմնեցին տոհմական վանքեր ու եկեղեցիներ: Պահլավունիներն Անիում կառուցեցին Ս. Գրիգոր (Աբուղամրենց), Ս. Փրկիչ, Ս. Առաքելոց եկեղեցիները, սպարապետ Վահրամ Պահլավունին՝ Մարմաշենի վանքը (11-րդ դ. սկիզբ), մեծ իշխան Գրիգոր-Ապիրատը՝ Կեչառիսը (1003), Սմբատ Մագիստրոսը՝ Բագնայրը (1010 թ.) եւ այլն:

Այդ նույն տարիներին Հավուց թառում եկեղեցի է կառուցել Քեղի բերդի (հայտնի է նաեւ Կաքավաբերդ ունունով) Գեւորգ իշխանը: Մինչեւ Նաթանայել Հավուցթառեցու տեղեկությունների ի հայտ գալը, Գեւորգ իշխանի Հավուց թառում կատարած եկեղեցաշինության մասին հայտնի էր միայն Մխիթար Այրիվանեցու կարճ հաղորդումը, որը զետեղված է նրա՝ տասնամյակների պարբերականությամբ կազմված ժամանակագրության 1001-1011 թթ. հատվածում: Պատմիչը նախ նշում է Անիի Գագկաշեն Ս. Գրիգորի կառուցումը, որն ինչպես նշվեց կատարվել է 1001 թ. (երկրաշարժից քանդվել է մի քանի տասնամյակ անց), այնուհետեւ Հավուց թառի եկեղեցու հիմնումը. «**Շինին Սուրբն Գրիգոր աննման ի յԱնի, որ այժմ հանգուցեալ է: Շինին եւ Հաւուց թառն ի Գէորգեայ իշխանէ Քեղւոյ**»[18]: Երկար ժամանակ միայն այս փոքրիկ նշումին ծանոթ պատմաբանները չեն իմացել, թե վանքի ո՞ր եկեղեցին է կառուցել Գեւորգ իշխանը, կամ թե ի՞նչ տոհմից էր նա սերում:

Այս հարցերին պատասխանել է Նաթանայելն իր մատյանի ժամանակագրական աղյուսակի 1002 թվականի դիմաց գրելով հետեւյալը. «**Գէորք իշխանաց[19] իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին, վերըստին նորոգեց զնախադրական հռչակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ եւ շինե(ա)ց**

18. Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 57:
19. Բառը կրկնված է:



*Նաթանայել եպիսկոպոսի տեղեկությունը Կաթողիկե եկեղեցու կառուցման մասին*

**զփառաւոր զհրաշալի Կաթողիկէն Թ (9) խորանաւ: Եւ արար գանձագին զմերձակա գեղն զԿոխք ի Գագիկ շահանշահէ եւ Յովանիսէ եւ ետ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք, եւ ետ ի հայրենե(ա)ց իր զԳետոց վանսն, եւ զՀովայսն՝ վանքագեղ եւ ժողովեց ԳՃ (300) կրաւնաւոր**»:

Նաթանայելը նախ ներկայացնում է Գեւորգ իշխանի հորը եւ եղբորը, որի շնորհիվ հայտնի է դառնում Գեւորգի տոհմը եւ պարզվում է, որ 1003 թ. Կեչառիսի վանքը կառուցողը նրա եղբայրն է՝ Ապիրատը, որ այլուր հիշվում է նաեւ Գրիգոր անունով եւ Մագիստրոս պատվաստիճանով (չշփոթել Պահլավունի Գրիգոր Մագիստրոսի հետ)[20]: Այնուհետեւ նա պատմում է Գեւորգի ձեռամբ վանքի պայծառացման, 9 խորանով Կաթողիկե եկեղեցու կառուցման եւ վանքի տված մեծարժեք նվիրատվությունների մասին: Նշվում է, որ Գեւորգ իշխանը Գագիկ Ա թագավորից եւ նրա որդի Հովհաննես Սմբատից գնել՝ «գանձագին» է արել, մոտակա Կոխք (Գողթ) գյուղը եւ նվիրել նորաշեն Կաթողիկե եկեղեցուն իբրեւ սեփականություն (հայրենիք), իսկ ի՛ր սեփականությունից («ի հայրենեաց իր») տվել է Գետոց վանքը, նաեւ Կոտայքի Ովա գյուղը՝ որպես «վանքագեղ», եւ ապահովել 300 կրոնավորների կեցությունը:

Այսպիսով 11-րդ դարի հենց սկզբին Հավուց թառը վերածաղկում է, ունենալով հզոր հովանավոր, հանձինս Հասանի որդի Գեւորգ իշխանի: Նրա եղբայրը, որն իր կենդանության շրջանի աղբյուրներում կոչվում է Գրիգոր Մագիստրոս, իսկ ավելի ուշ ապրած պատմիչների երկերում՝ Ապիրատ, հորջորջվում էր Հայոց մեծ իշխան՝ ինչպես Մատթեոս Ուռհայեցին է գրում՝ «Ապիրատ ոմն, որ էր մեծ իշխան Հայոց, որդի Հասանայ»[21]: Արդեն 1001 թվականին նա մագիստրոսի պատվաստիճան ուներ, ինչպես երեւում է Արզականի Ս. Ստեփանոս եկեղեցու արձանագրությունից, որտեղ հիշատակվում է թագավորի անունից հետո. «...ի թագաւորութեան Գագկա աշխարհակալի, Գրիգորի՝ Հայոց մագիստռոսի...»[22]: Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր եկեղեցու 1003 թ. շինարարական արձանագրության մեջ նա նշում է՝ «...ի թագաւորութեան Գագկա եւ ի Հայրապետութեան Տ(եա)ռն Սարգսի, ես՝ Գրիգոր Մագիստռոս, որդի Հասանա, շինեցի զէկեղեցիս...»[23]: Շատ հնարավոր է, որ Հավուց թառում եւս եղել է նրան պատկանող՝ «Գրիգոր Մագիստրոս» անվան նշմամբ արձանագրություն (1013 թ.), որը հետագայում վերափոխել են եւ շարունակել արդեն Գրիգոր Պահլավունուն հատկանշող տվյալներով[24]:



*Հեծյալի հարթաքանդակ Հավուց թառից*

Վարդան Արեւելցին 12-րդ դարի պատմիչ Մխիթար Անեցու այժմ կորած պատմությունից քաղած տեղեկությամբ ավելացնում է, որ այս իշխանը 12 հազար հեծյալներից կազմված զորք ուներ[25]: Ահա այս զորեղ տոհմից էր Գեւորգը, որը եւ Հավուց թառ բերվեց Ամենափրկիչ խաչը: Սակայն մինչեւ դրան անդրադառնալը փորձենք առկա սակավ նյութերի միջոցով տեղեկանալ Գեւորգ իշխանի նախնիների եւ հետնորդների մասին:

20. Այս մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում, «Բանբեր Մատենադարանի», թիվ 18, Երեւան, 2008, էջ 67-93, նույնի՝ Անի-Շիրակի պատմության էջեր (հոդվածների ժողովածու), Երեւան, 2010, էջ 101-137:
21. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն (աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Երեւան, 1991, էջ 16 (այսուհետեւ՝ Մատթեոս Ուռհայեցի):



22. Գ. Սարգսյան, Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), «Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երեւան, 2002, էջ 111:
23. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 259, Գ. Հովսեփյան, Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 159:
24. Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի պատմության էջեր, էջ 110-111:
25. Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, (գրաբար տեքստը ըստ Վենետիկի 1862 թ. տպագրության), աշխարհաբար թարգմանությունը Գ. Թոսունյանի, Երեւան, 2001, էջ 102-103:

# ԳԵՒՈՐԳ ԻՇԽԱՆԻ ՏՈՀՄԸ

Գեւորգ իշխանի պապի, այսինքն՝ Հասանի հոր անունը հայտնի չէ: Սակայն չի բացառվում, որ նա եղած լինի Աշոտ Երկաթի (914-929) հավատարիմ զորական, ականատես պատմիչ Հովհաննես Դրասխանակերտցու բնութագրմամբ՝ թագավորի պատվավորներից («ոմն ի պատուաւորաց»)[26] Գեւորգը, որին հետագայում Մարզպետունի կարծեցյալ տոհմանունն են տվել: Այս նույնացման համար կարելի է երեք փաստարկ բերել: Առաջինը ժամանակի համապատասխանությունն է, երկրորդն այն, որ Գեւորգը, որը Հասանի ավագ որդին էր[27], ժառանգական անխախտ ավանդույթով պիտի պապի անունով անվանակոչված լիներ: Երրորդ եւ հիմնական փաստարկն այն է, որ Հովհաննես Դրասխանակերտցու պատմածի համաձայն, երբ Բեշիր զորավարի գլխավորած արաբները Սեւանի կղզու մոտ Աշոտ Երկաթից պարտվելով (924 թ.) շարժվում են Քեղի ամրոցի վրա, այստեղ գտնվող Գեւորգ «Մարզպետունին», փոքրաթիվ զորականներով բերդից դուրս գալով ու համարձակորեն հարձակվելով՝ պարտության է մատնում նրանց[28]: Ուշագրավ է նաեւ պատմիչի այն վկայությունը, որ մի կերպ փրկված ու Դվին հասած արաբները մտածում են վրեժխնդիր լինել ամրոցի բնակիչներից՝ «սպառնալեօք ջանային վրէժս ի բնակչաց ամրոցին պահանջել»[29], այսինքն Գեւորգը Քեղի ամրոցի զորքի հրամանատարն էր: Հայտնի չէ, թե նա այդ ժամանակ արդեն բերդի տերն էր, թե՞ պատերազմի ավարտից հետո է այն ստացել որպես պարգեւ եւ ժառանգական սեփականություն, բայց փաստն այն է, որ նրա քաջագործությունը տեղի է ունեցել հենց Քեղիի պատերի տակ: Կարծում ենք բավարար հիմք կա եթադրելու համար, որ Մխիթար Այրիվանեցու եւ Նաթանայել Հավուցթառեցու հիշատակած «Քեղի ամրոցի իշխան Գեւորգը» Գեւորգ «Մարզպետունու» թոռն է եղել:

Այժմ պարզաբանենք, թե ինչու ենք վերապահությամբ նշում «Մարզպետունի» տոհմանունը եւ տեսնենք, թե որտեղից է ծագել գրականության մեջ շրջանառվող նրա կարծեցյալ Գոռ անունով որդու մասին տեղեկությունը: Բանն այն է, որ չկա ոչ մի պատմիչի վկայություն կամ այլ սկզբնաղբյուր, որտեղ նշված լինի «Մարզպետունի» բառը կամ այդ դարաշրջանի համար՝ Գոռ անձնանունը: Որտեղի՞ց են դրանք առաջացել: Մատթեոս Ուռհայեցին

26. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 354:
27. Այս մասին տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի-Շիրակի…, էջ 109-114:
28. Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 356-357:
29. Նույն տեղում:





*Քեղի (Գեղի) բերդը*

Աբաս Բագրատունու որդու՝ Աշոտ Գ Ողորմածի (953-977) թագադրության եւ Անին երկրի մայրաքաղաք հռչակելու մասին պատմելիս (961 թ.), նշում է, որ այդ առիթով Հայոց բանակի հրամանատարը (անունը չի տալիս) հավաքել է մարզպետական գունդը (45 000) եւ արքունական գունդը, այսինքն Հայոց բանակի երկու բաղկացուցիչ մասերը: Նա գրում է. «…**ժողով արար զօրապետն Հայոց զմարզպետական գունդն քառասուն եւ հինգ հազար**…» եւ այլն[30]: Միքայել Չամչյանը, որը 18-րդ դարում շարադրել, ամբողջացրել է Հայոց պատմությունը, այս հատվածից բխեցրել է զորապետի անունը: Ենթադրելի է, որ նրա օգտագործած ձեռագրում «**զմարզպետական գունդն**» ձեւակերպման երկրորդ բառը եղծված է եղել եւ կարդացվել «**զմարզպետական Գոռն**»[31], որն էլ, ըստ պատմաբանի՝ «**ժողովեաց զօր բազում մինչեւ ցքառասուն եւ հինգ հազար**»[32]: Մ. Չամչյանի գրքում «մարզպետականն» էլ իր հերթին վերջածանցի փոփոխմամբ դարձել է պաշտոն հիշեցնող տոհմանուն՝ «Մարզպետունի»: Բայց տարօրինակն այն է, որ այդ արհեստականորեն առաջացած տոհմանունը հետադարձ ընթացքով միացել է Գեւորգի անվանը, որին, այդուհետեւ կոչել են Գեւորգ Մարզպետունի: Իսկ վիպասան Մուրացանի հանրահայտ «Գեւորգ

30. Մատթեոս Ուռհայեցի, էջ 8:
31. Չի բացառվում, օրինակ, որ «գունդն» բառը տողադրաձվել է, տողավերջը մաշված է եղել կամ եզրահատված (մնացել է «գո»-ն) իսկ հաջորդ տողում «դ» տառի ստորին մասնիկը մաշված լինելով կարդացվել է «ռ», եւ ստացվել է «գոռն»:
32. Մ. Չամչեան, Պատմութիւն Հայոց, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 837:



*Հավուց թառի 1081 թ. խաչքարը*

Մարզպետունի» վեպի տպագրությունից հետո, այն դարձել է անվիճարկելի եւ պատահական չէ, որ տեղ է գտել անգամ Հայոց պատմության ակադեմիական հրատարակության մեջ[33]:

Հավուց թառի հովանավոր Գեւորգ իշխանի ծագման մասին խոսքն ավարտելով՝ նշենք նաեւ այդ առնչությամբ 15-րդ դ. սկզբին ապրող Մանվել Բջնեցու մի բնութագրումը՝ «Գէորգ իշխանի՝ ոստ Բագրատունի»[34]: Դժվար է ասել, արդյոք հեղինակն ունեցել է որեւէ աղբյուր այդ արտահայտության համար, թե՞ այն պարզապես թելադրվել է չափածո ստեղծագործության փառաբանական ոճով: Բայց չպետք է բացառել, օրինակ, որ Գեւորգ «Մարզպետունին» հեռավոր ազգակցական կապ ունեցել է Բագրատունիների հետ (նկատի ունենալով նաեւ նրա անսասան հավատարմությունը շատերի կողմից լքված Աշոտ Երկաթին): Փաստերը վկայում են, որ Գեւորգ իշխանի եղբայր Գրիգոր Ապիրատն էլ անմիջական մերձավորություն է ունեցել Գագիկ Ա-ի որդիներ Հովհաննես Սմբատի ու Աշոտ Դ-ի հետ: Հենց Գեւորգն ինքը, ինչպես նշվեց, Ամենափրկիչ խաչը ստացել է Գագիկ Ա Բագրատունուց: Հետեւաբար հեռավոր տոհմակցության (Արշակունյաց ժամանակների նմանությամբ այս տոհմի «ոստանիկ» լինելու) հնարավորությունն անհավանական չէ:

Այժմ տեսնենք, թե արդյո՞ք Հավուց թառում պահպանվել են վկայություններ Գեւորգ իշխանի հետնորդների մասին: Վանքի տարածքում այժմ պահպանված հնագույն թվակիր արձանագրությունը, որը խաչքարի[35] վրա է, հետեւյալ բովանդակությունն ունի. «Յիշէ Քրիստոս **զՀասան**, զորդի **Սմբատա**, զծառա քո եւ ողորմեա նմա, ամեն, թվ. ՇԼ (1081) էր»[36]: Եթե նկատի ունենանք հայկական իշխանական տոհմերի մոտ ավագ թոռանը պապի անունով կոչելու կայուն սովորությունը, ապա կարող ենք ենթադրել, որ Գեւորգ իշխանի որդին կրել է պապի անունը՝ Հասան, եւ նրա ժառանգներն են Սմբատն ու նրա որդի Հասանը[37]:

Հավուց թառի խաչքարի առնչությամբ ավելացնենք, որ այն հավանաբար պատահականորեն չի կանգնեցվել հենց 1081 թվականին: Այդ տարի Գրիգոր Ապիրատի թոռը՝ Անիի եպիսկոպոս Բարսեղը (Բարսեղ Ա Անեցի), Հաղբատում կաթողիկոս ձեռնադրվելով, մեծ շուքով վերադարձավ Անի, եւ ինչպես Մատթեոս Ուռհայեցին է գրում՝ «...եղեւ օրն այն օր մեծ եւ ուրախութիւն ամենայն Տանն Հայոց, վասն զի տեսին նորոգեալ զաթոռ հայրապետութեանն ի քաղաքն յԱնի»[38]: Եթե Հավուց թառի արձանագրության մեջ հիշված Սմբատը Քեղիի տեր Գեւորգի թոռն էր, ապա նրա ու Բարսեղի պապերը, փաստորեն, եղբայրներ էին, եւ հավանական է, որ Սմբատի որդի Հասանը 1081-ին խաչքար կանգնեցնելով յուրովի արձագանքել է կաթողիկոսական աթոռի՝ Անիում վերահաստատվելու տոնին, որի գլխավոր դերակատարն իր տոհմակիցն էր:

13-14-րդ դարերում Հավուց թառը հայտնվել է Զաքարյան տոհմին պատկանող տարածքում՝ դատելով 1214, 1297 թթ. հիշատակարաններից եւ 14-րդ դարի կեսերին Նաթանայելի գրած հիշատակագրություններից:

33. Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 3, Երեւան, 1976, էջ 45:
34. Մանվել Բջնեցու երկը տե՛ս հավելվածում:
35. Չնայած պարզ կառուցվածքին, այս խաչքարը հայ խաչքարագործական արվեստում մի քանի նորություն պարունակող ամենաարժեքավոր նմուշներից է (տե՛ս Հ. Պետրոսյան, Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Երեւան, 2008, էջ 115):



36. Հավուց Թառի ամենափրկիչը..., էջ 17:
37. Անուղղակիորեն այս ենթադրության օգտին է խոսում այն, որ Գեւորգի եղբայր Գրիգոր Ապիրատի երկու որդիները Ապլջահապ եւ Վասակ անուններն ունեին: Գրիգոր Ապիրատն իր զավակներից մեկին հոր անունով Հասան չի անվանակոչել ամենայն հավանականությամբ այն պատճառով, որ իր ավագ եղբոր՝ Գեւորգի որդին արդեն կրում էր այդ անունը:
38. Մատթեոս Ուռհայեցի, էջ 236-238:

# ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԽԱՉԸ

Հավուց թառի Ամենափրկիչ փայտյա խաչը միջնադարյան Հայաստանում ամենից մեծ հռչակ վայելած սրբություններից էր: 11-րդ դարի սկզբին վանքին նվիրաբերվելով, այն ժամանակի ընթացքում ավելի ու ավելի մեծ ճանաչում է գտել եւ աստիճանաբար իր անունն է տվել բուն վանքին: Հայ արվեստի հետազոտողներն Ամենափրկիչը համարում են 9-10-րդ դարերի գործ[39]:

Հավուց թառի Ամենափրկիչը ներկայացնում է Քրիստոսի խաչից իջեցման տեսարանը, որն ամրացված է 72 սմ բարձրությամբ եւ 32 սմ լայնք ունեցող տախտակի վրա: Կենտրոնում խաչն է եւ Հիսուսի պատկերը՝ թեքված գլխով եւ փակ աչքերով: Նրա աջ ձեռքն իջնում է Հովսեփ Արիմաթացու ուսին, իսկ ձախից՝ Նիկոդեմոսն աքցանով հանում է մեխը: Միջնադարյան արվեստի հմուտ մասնագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանն այս քանդակապատկերն համարում է եզակի՝ մի շարք կողմերով: Նա գրում է. «Խաչն ինքը ակնակուռ է: Քրիստոսի գլխավերեւում երեւում են աղավնակերպ Սուրբ Հոգին եւ Աստծո Աջը: Որպեսզի դիտողի ուշադրությունը կենտրոնացվի Քրիստոսի կերպարի վրա, քանդակագործը նրան շատ մոտ է զետեղել այն մարդկանց, որոնք հանում են նրա ձեռքերի ու ոտքերի մեխերը՝ առանց աստիճանի վրա կանգնած լինելու: Իր պարզության մեջ այնքան հուզիչ այս ստեղծագործությունը երբեք նույն ձեւով չի կրկնվել»[40]: Հավուց թառի Ամենափրկիչը նախօրինակ է ծառայել հայ խաչքարագործության մեջ հանդես եկած այն սակավաթիվ օրինակների համար, որտեղ խաչի վրա պատկերված է խաչված Քրիստոսը (կամ՝ «Խաչից իջեցումը»), եւ որոնք, որպես կանոն, կոչվում են Ամենափրկիչ:

Հավուց թառի Ամենափրկչի ծագման մասին ավանդապատում պատմությունների պակաս չի զգացվում: Միջնադարում համարվել է, որ այն Աստվածամոր խնդրանքով, Խաչափայտի առաջ կանգնած հրաշքով պատրաստել կամ ստացել է որպես անձեռագործ պատկեր, Քրիստոսի սիրելի աշակերտ Հովհաննեսը (Հովհաննես ավետարանիչ) եւ տարել, ընծայել Աստվածամորը: Հետագայում այն տարվել է Հռոմ կամ Բյուզանդիա, որտեղից 7-րդ դարի վերջին Հայաստան է բերել Աշոտ պատրիկ Բագրատունին (Հայոց իշխան է եղել 685-689 թթ.)՝ որդու՝ Սմբատի միջոցով, եւ դրել իր նստավայր Դարույնքում կառուցած եկեղեցում: Այս մասին հայտնում է պատմիչ Ղեւոնդը՝ գրելով,

39. Ա. Աղասյան, Հ. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Վ. Ղազարյան, Հայ արվեստի պատմություն, Երեւան, 2009, էջ 219:
40. Էջմիածնի գանձեր, Ս. Էջմիածին, 1984, ներածական (գիրքն էջակալում չունի), տե՛ս նաեւ՝ S. Der Nersesian, Armenian Art, Paris, 1977, p. 114.



որ Աշոտը «շինէր զեկեղեցին Դարիւնից... եւ զկենդանագրեալ զպատկեր մարդեղութեանն Քրիստոսի ածեալ ի մտիցն արեւու մեծասքանչ զօրութեամբ հանգուցանէր ի նմա»[41]: Այս պատկերը հետագայում Հավուց թառ տարված Ամենափրկչի հետ նույնացնողները չեն անդրադարձել, որ Աշոտի Արեւմուտքից բերածը եղել է «կենդանագիր պատկեր», այսինքն՝ ներկերով կատարված նկար՝ սրբանկար, եւ ոչ թե փայտյա քանդակված խաչ: Հայտնի է, որ Աշոտին նախորդած եւ հաջորդած Հայոց իշխանները՝ Գրիգոր Մամիկոնյանը (661-685) եւ Ներսեհ Կամսարականը (689-692) համապատասխանաբար իրենց նստավայր Արուճում եւ Թալինում կառուցել են մեծադիր եկեղեցիներ եւ դրանք զարդարել որմնանկարներով: Այսինքն, այս շրջանում եկեղեցում Քրիստոսի պատկերով որմնանկար կամ սրբանկար ունենալն ընդունված բան էր եւ Դարույնքի պատկերը չի կարող նույնացվել Հավուց թառի Ամենափրկիչ խաչի հետ:

Մեկ այլ տարբերակում Ամենափրկիչը, որպես կայսերական ընծա, ստացել է Հայոց Աշոտ թագավորը, երրորդում՝ Աշոտ Պատրիկի ու նրա որդու փոխարեն հանդես են գալիս Գրիգոր Մագիստրոս Պահլավունին եւ նրա որդին՝ Ամենափրկիչը Հռոմից բերող Վահրամը: Սկզբում Ամենափրկիչը դնում են Դարույնքի (կամ Տարոնի) եկեղեցում, ապա տեղափոխում Հավուց թառ:

Սա «Ամենափրկչի» ոդիսականի ամենահամառոտ շարադրանքն է, իսկ ահա Գ. Հովսեփյանը, որն իր հանգամանալից ուսումնասիրության մեջ փորձել է այս եւ հարակից պատմությունները մեկ տրամաբանական շղթայի մեջ դնել, ակամա խոստովանել է՝ «հակասությունների մի բավիղ, որ թվում է, թե դժվար է միջից դուրս գալ»[42]:

Այժմ այդ նույն պատմությունները կրկնելու կարիք չկա, քանի որ առկա են հարցին իրազեկ հեղինակի՝ Նաթանայելի տեղեկությունները: Ամենափրկիչ խաչի՝ Հայաստան եւ ապա Հավուց թառ բերվելու մասին նա ունի երկու վկայություն: Առաջինը Հայոց ՆԻԵ (976) թվականի դիմաց՝ «Եւ ոմանք ասէն թե Վասիլ կայսրն Աշոտ թագաւորին պարգեւեց զԱմենափրկիչ խաչն եւ մասն Տէրունական խաչեն, որ Աստուածընկալ ասեն եւ մնան երկուքն ի Հա[ւու]ց թառ մեծափայծառ փառաւք»: Նաթանայելը որոշ վերապահությամբ նշում է՝ «ոմանք ասէն թե» եւ շարունակում, որ Ամենափրկիչը եւ Տերունական խաչի մասունքը, որն անվանում է «Աստուածընկալ», Հայոց Աշոտ թագավորին է տվել Վասիլ կայսրը: Հիշատակության 976 թվականը նկատի ունենալով՝ այստեղ խոսք կարող է լինել Վասիլ Բ (976-1025) կայսեր եւ Աշոտ Գ Ողորմածի (953-977) վերաբերյալ, սակայն քիչ հավանական է, որ Վասիլը դեռ նոր գահ բարձրացած նվեր ուղարկեր Աշոտին:

41. Ղեւոնդ, Արշաւանք արաբաց ի Հայս, Փարիզ, 1837, էջ 37:
42. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 10:

Երկրորդ վկայությունը Հայոց ՆԿԲ (1013) թվականի դիմաց է, ցավոք, վերջնամասը եղծված, սակայն հիմնական բովանդակությունը հասկանալի է. «Եւ աստ ասեն եկե(ա)լ ի Հայս Վա[սի]լ կայսրն [եւ ուն]ել ընդ ինքե[ա]ն զխաչն փրկչական եւ զպատկե[րն] տիրական զսուրբ Ամենափրկիչն եւ պարգեւ[ե-աց] արքային Հայոց Գա[գկայ] շահանշահի եւ թագ[աւորն] պարգեւե(ա)ց Գեորգայ իշխ[ան]ին/// զարեգակն/// մ[եծ մ]ենարանն եւ խաչն մեծահրաշ եւ բազում ակամբ յաւրինե(ա)լ եւ [ո]ր ի գլուխս դրոշային [որ] կայս/// յԵրեւան գեղա[ք]աղաքն, որ ասեն երկ[ու]/// եւ ի սուրբ նշան եւ է անունն ///այ Տէրու-նական սուրբ նշանն»:

Նաթանայելն այս հատվածում ներկայացնում է Հավուց թառի Ամենափր-կիչ խաչի ծագման ցայժմ անհայտ տեսակետ, քանի որ Վասիլ կայսրից Ամե-նափրկիչը ստացողի դերում հանդես է գալիս Գագիկ Ա Բագրատունին, որն էլ իր հերթին այն տալիս է Գեւորգ իշխանին: Ամենափրկիչ խաչի ծագման այս պատմությունը մեզ ավելի հավանական է թվում, որովհետեւ ստույգ հայտնի է, որ Գագիկ Առաջինը Վասիլ Բ կայսրից սրբազան մասունքներ ու առարկաներ է նվեր ստացել: Մասնավորապես, Ստեփանոս Օրբելյանը վկայում է, որ Գա-գիկ թագավորն ու նրա կինը՝ Կատրամիդե թագուհին, որը Սյունյաց թագավո-րի դուստրն էր, 1006 թ. Անիում նոր ձեռնադրված Սյունիքի Հովհաննես մետ-րոպոլիտին են նվիրել Տերունական խաչի մի մասունք, որը նրանց ուղարկել էր Վասիլ կայսրը՝ «զոր առաքեալ էր նոցա ինքնակալ կայսրն Յունաց՝ Վասիլ Ծիրանածին...»[43]:

Նկատենք, որ Վասիլն ընդհանրապես հայտնի էր կրոնական ջերմեռան-դությամբ եւ Հայոց թագավորին մասունքներ ուղարկելու այս փաստերը մի-անգամայն հարազատ է նրա կերպարին[44]: Այս ամենը թույլ են տալիս Հավուց թառի Ամենափրկչի ծագման մասին ցայժմ եղած ավանդապատում զրույց-ների շարքից դուրս, պատմական հենք ունեցող տեսակետ առաջ քաշել, որը հիմնվում է մի կողմից Նաթանայելի վկայության, մյուս կողմից՝ Օրբելյանի հայտնած զուգահեռ տեղեկության վրա:

Նախկինում Ամենափրկիչ խաչի ծագման եւ Հավուց թառին ընծայման պատմության մեջ (նաեւ այլ հարցերում) առաջնային տեղ է հատկացվել Գրի-գոր Մագիստրոսի անունով 1013 թվակակիր արձանագրությանը, ուստի այն արժանի է առանձին քննության:

43. Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Տփղիս, 1910, էջ 304:
44. Ուշագրավ է, որ 11-րդ դարում հայերի մեջ Վասիլին դրական ներկայացնող զրույցներ են տարածված եղել, իբրեւ թե նա գաղտնաբար հայկական ծեսով վերամկրտվել է եւ ան-գամ կոչվել «Հայոց աշխարհի հայր», իսկ մահից առաջ իր եղբայր եւ հաջորդ Կոստանդինին պատգամել «վասն աշխարհին Հայոց՝ զի հայրաբար սիրով խնամեսցէ զազգն զայն» (Մատ-թեոս Ուռհայեցի, էջ 58-59):



# 1013 Թ. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Հավուց թառի վանքի պատմության մեջ չափազանց մեծ դեր է հատկաց-վել այժմ գոյություն չունեցող մի արձանագրության, որի համաձայն Գրիգոր Մագիստրոսը 1013 թվականին «վերստին շինել» է վանքը, եւ նվի-րել «անձեռակերտ» Ամենափրկիչ խաչը: Վանքի պատմությանը վերաբերող հրապարակումների մեծ մասը, այդ թվում ամենամեծ տարածում ունեցող հանրագիտարանային հոդվածներն ու համացանցի նյութերը, սկսվում են հենց այդ տեղեկությամբ: Մինչդեռ շատ հավանական է, որ արձանագրու-թյան տեքստը հորինվել է ավելի ուշ շրջանում: 1988-ին այս հարցը հատուկ հոդվածում համակողմանիորեն քննած Գագիկ Սարգսյանը եկել է այն եզրա-կացության, որ արձանագրության հայտնաբերման եւ տեղադրության հան-գամանքները հնարովի են, հեղինակն է «ընդօրինակողը», որը 19-րդ դարի առաջին կեսին ապրած Էջմիածնի վանքի գրագիր Քուրդ-Հովհաննես վար-դապետ Բագրեւանդցին է[45]:

Մենք չենք անդրադառնա շատ կողմերով համոզիչ այդ վարկածին, ինչ-պես նաեւ նախորդ ուսումնասիրողների հայտնած մյուս կարծիքներին, որոն-ցից Գ. Հովսեփյանն, օրինակ, համոզված է, թե արձանագրությունն իրական է, մինչդեռ Ն. Ակինյանն այն համարում է կեղծ[46]: Կնշենք միայն հարցի առնչու-թյամբ նոր հայտնի դարձած տվյալներից բխող կամ նորովի մեկնաբանվող մի քանի կետեր: Դրանցից հիմնականն այն է, որ եթե Հավուց թառում իրոք լի-ներ 1013 թվականը կրող եւ ստորեւ ներկայացվող հետաքրքրական բովան-դակությամբ արձանագրությունը, ապա 14-րդ դարի կեսերին ապրող եւ վան-քի պատմության հարցերով հետաքրքրված Նաթանայել Հավուցթառեցին չէր կարող այն անտեսել, կամ չօգտագործել այնտեղ եղած փաստերը: Մինչդեռ նրա գրառումներում Գրիգոր Մագիստրոսի անունն ընդհանրապես չկա, իսկ Ամենափրկիչ խաչի վանք բերվելը, ինչպես տեսանք, վերագրվում է Գեւորգ իշխանին: Միակ զուգահեռն այն է, որ Նաթանայելը Ամենափրկիչը վանք բե-րելու պատմությունը նշել է ժամանակագրության 1013 թվականի դիմաց: Դա կարող է երկու բան նշանակել. կամ Մագիստրոսի արձանագրությունը եղել է, բայց Նաթանայելը դրանից միայն թվականն է վերցրել, իսկ ողջ բովանդակու-թյունը՝ զանց առել, որը քիչ հավանական է, կամ գոյություն է ունեցել այժմ ան-

45. Գ. Սարգսյան, Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, էջ 68-71:
46. Մանրամասները տե՛ս Գ. Սարգսյանի վերոնշյալ հոդվածում:

հայտ մի աղբյուր (օրինակ, վանքի ավանդամատյան՝ քյոթուկ), որտեղ նշված է եղել խաչի բերման 1013 թվականը, եւ որի վրա հենվել են ե՛ւ Նաթանայելը, ե՛ւ հետագայում արձանագրության տեքստը կազմողները:

Արձանագրության ուսումնասիրության առնչությամբ հետաքրքրություն է ներկայացնում նաեւ Բջնիի Մանվել եպիսկոպոսի՝ Ամենափրկչին նվիրված գանձը (15-րդ դ. սկզբներ)[47]:

Ներկայացնենք արձանագրությունը.

«**Թուին ՆԿԲ** (1013) **ի թագաւորութեանն Գագկայ եւ ի հայրապետութեան տեառն Սարգսի, ես՝ Գրիգոր Մագիստրոս վերստին շինեցին զեկեղեցիս յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց նաեւ ի տերանց աշխարհիս գանձագին արարի զվայրս սորա լերամբն եւ դաշտամբն եւ ամենայն կազմութեամբն, որ ի սմա, քառադէմք, չորս անկեամբ՝ յաջամբ եւ ահեկամբ, ի դիմաց եւ ի թիկանց, եւ տուաք յիշատակ անջնջելի արձանագրով եւ աշխարհակալ թագաւորի թղթովն եւ կայսերական կնքովն, հաստատեցաք ձեռագրով եւ հայրապետական նամակաւն, եւ ի նաւակատիս տաճարիս՝ զոր շինեցաք, ընծայեցաք զհայրենիս մեր սուրբ եկեղեցւոյս՝ որ է Հայոց թառ, հանգստարան եւ օթարան անձեռագործ սուրբ պատկերին Յիսուսի Քրիստոսի՝ որ ի փայտին, խնդրել ին Յոհաննու սուրբ աւետարանչին, հրամանաւ մօր տեառն մերոյ սուրբ Ա(ստուա)ծածնին, եւ նորոգեալ վերստին հաստատեցաք զսուրբ ուխտս վերջինս քան զառաջինն, աստ եդաք զվէմն հաւատոյ, հիման սուրբ եկեղեցւոյ, Գրիգոր Վահրամ պատանին**»[48]:

Արձանագրության վերջին բառը թեեւ Սիմեոն Երեւանցու եւ Հովհ. Շահխաթունյանցի մոտ «պիտանին» է, բայց Ղ. Ալիշանն այն իրավացիորեն ուղղել է «պատանին», նրան հետեւել են Գ. Հովսեփյանը եւ ուրիշներ: Այն, որ արձանագրության այս հատվածում խոսքը Գրիգոր Մագիստրոսի որդու՝ Վահրամի մասին է, եւ ոչ թե վիմագիր գրչի, ինչպես փորձել է մեկնաբանել

47. Մանվելը հիշվում է 1405-1414 թվականներին (տե՛ս ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Ա, Երեւան, 1955, էջ 51, 162, 731 (այսուհետեւ՝ Հիշատակարաններ ԺԵ, հ. Ա), ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Գ, Երեւան, 1967, էջ 316: Նա եղել է գրասեր մարդ, հայտնի է, որ Անիի վերջին եպիսկոպոս Հովհաննես Ոսկեփորիկին պատվիրել է մի շքեղ Աստվածաշունչ (Վիեննա, ձեռ. թիվ 55):

48. Յովհ.. Շահխաթունեանց, Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի…, էջ 293, Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 7, Գ. Սարգսյան, Հաւուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, էջ 65: Արձանագրության աշխարհաբար տեքստը տե՛ս գրքի հավելվածում, Սիմեոն Երեւանցու Ջամբռից բերված հատվածի սկզբնամասում:



Գ. Հովսեփյանը[49], բխում է տեքստից: Հատվածի բովանդակությունից ելնելով է, որ արձանագրության առաջին հրատարակիչները՝ Սիմեոն Երեւանցին եւ Հովհ. Շահխաթունյանցը նշում են, թե Գրիգոր Մագիստրոսն իր Վահրամ որդուն Հավուց թառի վանահայր է կարգել: Նույն բանը հաստատում է Մանվել Բջնեցին իր գանձում, ուր նշում է, որ Մագիստրոսի որդին ուղարկվել է Հռոմ Ամենափրկիչը բերելու, եւ նրան կոչում է Վահրամ պատանի՝ «Ի սմանէ (Գրիգոր Մագիստրոսի – Կ. Մ.) որդի, **Վահրամ պատանի**, ի Հռոմ յուղարկի»:

Արձանագրության այս հատվածը միաժամանակ վկայում է, որ այն չէր կարող գրված լինել Գրիգոր Մագիստրոսի կենդանության օրոք: Բանն այն է, որ Մագիստրոսի որդու անունը Վահրամ էր, նա աշխարհական էր, զինվորական, ամուսնացած: Հետագայում, 1066 թ., երբ արդեն ամուրի էր, կաթողիկոս ընտրվեց եւ ձեռնադրության ժամանակ ստացավ Գրիգոր անունը: Բնականաբար, 1058 թվականին մահացած Գրիգոր Մագիստրոսը չէր կարող Հավուց թառի արձանագրության մեջ որդուն **Գրիգոր Վահրամ** կոչել:

Ուշագրավ է նաեւ, որ Գրիգոր Վահրամը կամ հետագայում Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը մահացել է 1105 թ., հետեւաբար 1013 թվականին հավանորեն դեռ չէր էլ ծնվել: Թերեւս այս բանը գիտակցելով արձանագրության հեղինակները փորձել են շեշտել, որ Գրիգոր Վահրամն այդ ժամանակ գտնվում էր վաղ հասակում՝ պատանի էր: Բայց այստեղ էլ փակուղու առաջ են հայտնվել, քանի որ այդ «պատանին» բնութագրվում է որպես «զվէմն հաւատոյ, հիման սուրբ եկեղեցւոյ», որը կարող էր նրա մասին ասվել, բայց միայն այն բանից հետո, երբ, որպես Պահլավունի, այսինքն՝ Գրիգոր Լուսավորչի արյունակից ու ժառանգորդ, նստել էր Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռին (արդյո՞ք սա չէ պատճառը, որ այլ լուծում չգտնելով «պատանին» դարձրել են «պիտանին»):

Այսպիսի բովանդակությամբ արձանագրություն չէր կարող գրված լինել 1013 թվականին, քանի որ Գրիգոր Պահլավունին այդ ժամանակ դեռ շատ երիտասարդ էր եւ դեռեւս մագիստրոս չէր (նա մագիստրոսության պատիվ ստացել է Կոստանդին Մոնոմախ կայսրից Անիի վերջին թագավոր Գագիկ Բ-ի գահազրկումից հետո՝ 1045-ին, երբ հայրենի Բջնին հանձնելով բյուզանդիային եւ կուսակալի պաշտոն ստանելով տեղափոխվել է Տարոն): Բացի այդ, Գագիկ Առաջինի ժամանակ Բագրատունյաց թագավորության մեջ որեւէ հողային տարածքի ձեռքբերման կամ նվիրատվության համար կայսերական փաստաթղթերով դրա վավերացման կարիքը չկար (այդպիսի նախադեպ գոյություն չունի):

Կրկնենք, որ մեզ համար ելակետային է մնում այն իրողությունը, որ վանահայր Նաթանայել Հավուցթառեցին ծանոթ չէ այս արձանագրությանը, հե-

49. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 12:

տեւաբար այն պետք է ստեղծված լինի 14-րդ դարի կեսերից հետո: Կարծում ենք, որ Մանվել Բջնեցու գանձը հնարավորություն է տալիս պարզաբանելու արձանագրության տեքստի որոշ առանձնահատկությունները եւ որոշակիացնելու ստեղծման ժամանակը: Գարեգին Հովսեփյանն անդրադարձել է այդ գործին, բայց քանի որ համոզված էր, թե այն հիմնված է 1013 թ. արձանագրության վրա, առաջարկում է անգամ չափածոյի որոշ տողերի տեղափոխություն կատարել[50]: Մինչդեռ գանձը սահուն շարադրանք ունի եւ այն խմբագրելու կարիք չկա (ամբողջովին տե՛ս հավելվածում):

Որոշ հանգամանքներ թույլ են տալիս ենթադրելու, որ ոչ թե 1013 թ. արձանագրության տվյալներն են օգտագործվել գանձի մեջ, այլ ընդհակառակը՝ գանձում եղած ձեւակերպումներն են նյութ տվել արձանագրությանը, եւ դրանք երկուսն էլ ստեղծվել են մոտավորապես նույն շրջանում՝ 15-րդ դարի սկզբներին:

Ամենափրկչին նվիրված գանձը բաղկացած է 12-17 տողից կազմված 9 տնից, որոնցից առաջին յոթի սկզբնատառերը հոդում են «ՄԱՆՎԻԵԼ»: Առաջին տունը Ամենափրկիչ քանդակազարդ խաչի ճշգրիտ նկարագրությունն է, երկրորդը՝ պատմում է Աստվածածնի խնդրանքով Հովհաննես ավետարանչին Քրիստոսի պատկերի հրաշքով տրվելու մասին: Այս հատվածի արձագանքը կա վիմագրում: Չորրորդ տան մեջ ասվում է, որ Ամենափրկիչը տարվել է Հռոմ, իսկ Գրիգոր Մագիստրոսը ուխտատեղ է կառուցել «ի Տարուն երկրի», ապա որդուն՝ Վահրամ պատանուն, Հռոմ ուղարկել խաչը բերելու համար: Այնտեղ նա չի մերժվել, այլ Ամենափրկիչն ստացել, բերվել է հայրենիք, Մագիստրոսն ընդառաջ գնալով, այն ուսին դրած տարել է իր եկեղեցին: Դրանից հետո ասվում է հետեւյալը՝

«Իսկ յետ այս բանի, յետ ժամանակի աւուրք անցանի,
Վասիլ արքայի՝ Գէորգ իշխանի, ոստ Բագրատունի,
Փոխելով անտի, բերեն հըրճիւալ ի տունս Այրարադին»:

Եթե ըստ արձանագրության Ամենափրկիչը Հավուց թառ է բերել Գրիգոր Մագիստրոսը, ապա այստեղ նշվում են Վասիլ արքան եւ Գեւորգ իշխանը: Բայց հաջորդ տան մեջ նրանց է միանում նաեւ Մագիստրոսը եւ տոնախմբություն են անում «յոթ օր միասին», որի ընթացքում Մագիստրոսն Ամենափրկչի հանդիման երգում է «Զոր ըստ պատկերին» շարականը: Այնուհետեւ Մանուել Բջնեցին այդ շարականի տեքստին համահունչ ամբողջ երկու տուն է լրացնում:

50. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 9:



Յոթերորդ տան մեջ նա Ամենափրկչի մասին կրկին գրում է. «Մեզ տըրեալն ընծա յարքաէն Վասլայ եւ Գորգ իշխանայ»: Եթե Մանվել Բջնեցին որպես սկզբնաղբյուր օգտագործած լիներ 1013 թ. արձանագրությունը, ապա Ամենափրկիչը Հավուց թառ բերող պիտի համարեր միմիայն Գրիգոր Մագիստրոսին, բայց քանի որ նա որպես այդ գործը կատարողների երկիցս նշում է Վասիլ կայսեր ու Գեւորգ իշխանի անունները, կարելի է ենթադրել, որ նա նույնպես ծանոթ չի եղել արձանագրությանը, որի տեքստը կազմվել է գանձի գրվելուց հետո:

Այժմ անդրադառնանք «Զոր ըստ պատկերին քում» շարականին, որ երբեմն վերագրվել է Աշոտ պատրիկին, երբեմն Գրիգոր Մագիստրոսին[51]: Այն, որ շարականի տեքստը զուգահեռներ ունի 1013 թ. արձանագրության հետ, նշում են արձանագրությանն անդրադարձած գրեթե բոլոր ուսումնասիրողները: Սակայն թվում է, որ այդ ազդեցությունը միջնորդավորված է Մանվել Բջնեցու գանձով: Ասվածն առարկայական դարձնելու համար ներկայացնենք երկու հատկանշական զուգադրում, բովանդակային մերձավորության հաջորդականությամբ:

| *«Զոր ըստ պատկերին քում» շարական* | *Մանվել Բջնեցու գանձ (15-րդ դար)* | *Հավուց թառի արձանագրություն* |
|---|---|---|
| «Կեցո զորդի ծառայի քո, զոր ի Հռովմայ գահիցն վերապատուեցեր, ուր եդին զվէմն հաւատոյ, հիման սուրբ եկեղեցւոյ»: | «Իսկ Մագիստրոսի… որդի Վահրամ պատանի, ի Հռոմ յուղարկի…»<br><br>«Եւ կեցո զորդին քում, Տեառն ծառաին, զտիպս քո բերողին, զպատուեալն ի Հռոմին, անդ ուր կա շիրիմ հաւատոյ վիմին»: | «…աստ եդաք զվէմն հաւատոյ, հիման սուրբ եկեղեցւոյ, Գրիգոր Վահրամ պատանին»: |
| «Զպանծալի եւ զփայլեալ փառս տանս, այս վերջինս քան զառաջինն»: | «Ով Աստուծոյ տուն, կանկնեալդ ի վերջնոյն, գեր քան զառաջնոյն»: | « … հաստատեցաք զուրբ ուխտս վերջինս քան զառաջինն»: |

51. Շարականի հեղինակի հարցը հատուկ քննության նյութ է դարձրել Աննա Արեւշատյանը եւ հանգել այն եզրակացության, որ հեղինակը Գրիգոր Մագիստրոսն է (Ա. Արեւշատյան, Ո՞վ է «Զոր ըստ պատկերին քում» շարականի հեղինակը, Էջմիածին, 1997, Դ-Ե, էջ 106-115): Տե՛ս նաեւ Ն. Թահմիզյան, Գրիգոր Նարեկացին եւ հայ երաժշտությունը V - XV դդ., Երեւան, 1985, էջ 178:

Առաջին հատվածում, շարականի մեջ խոսվում է Հռոմի գահից պատվված, Աստծո ծառայի որդու մասին: Մաղաքիա Օրմանյանը նշում է, որ այստեղ խոսքը Աշոտ պատրիկի (Աստծո ծառա) եւ նրա Սմբատ որդու մասին է, Հռոմն էլ՝ երկրորդ Հռոմն է, այսինքն՝ Կոստանդնուպոլիսը[52], որտեղից Փրկչի պատկերը Դարոյնք էր բերել Սմբատը: Այստեղ, սակայն, բաց է մնում «հավատի վեմ» արտահայտության պարագան, քանի որ Քրիստոսի հայտնի բնութագրմամբ՝ վեմը Պետրոս առաքյալն է, որի տեղը (աթոռը) Հռոմն էր: Նկատենք, որ շարականի այս տողերի համար միանշանակ մեկնաբանություն չի կարողացել գտնել նաեւ շարականների հմուտ մեկնաբան Գ. Ավետիքյանը[53]: Մանվել եպիսկոպոսի գանձի մեջ գրեթե նույն բանն է նշվում, միայն թե այստեղ արդեն հստակ է, որ «Տիրոջ ծառան» Գրիգոր Մագիստրոսն է, որդին՝ Վահրամ պատանին, որն իբրեւ Հռոմից բերել է Քրիստոսի պատկերը: Գանձում ավելի որոշակի է նաեւ Հռոմի բնութագրումը եւ Պետրոսի մասին անկարկը («անդ ուր կա շիրիմ հաւատոյ վիմին»):

Մինչդեռ արձանագրությունը նույն բառապաշարի կրկնությամբ միանգամայն այլ իմաստ է արտահայտում՝ որպես հավատի վեմ եւ եկեղեցու հիմն ներկայացնելով կամ Ամենափրկիչ խաչը, կամ Գրիգոր Վահրամին՝ ապագա Հայոց կաթողիկոսին:

Երկրորդ հատվածում շարականը եւ գանձը ներկայացնում են եկեղեցին ընդհանրական իմաստով՝ որպես Աստծո տուն, իսկ արձանագրության մեջ խոսվում է կոնկրետ ուխտի՝ վանքի հաստատման մասին:

Վերադառնալով արձանագրությանը նկատենք, որ նրան խորթ է 10-11-րդ դարի վիմագրերի չոր լեզուն, փոխարենն այն գրական գործի հյութեղ շարադրանք է հիշեցնում:

Ուշադիր դիտարկումից պարզվում է, որ արձանագրության երկրորդ մասն անգամ չափածո շարադրանք ունի.

«Եւ ի նաւակատիս տաճարիս՝ զոր շինեցաք,
Ընծայեցաք զհայրենիս մեր սուրբ եկեղեցւոյս (որ է Հայոց թառ),

52. Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 888-889, տե՛ս նաեւ Կ. Կոստանեանց, «Հին յիշատակներ», «Արարատ», 1897, էջ 339:
53. Բացատրութիւն շարականաց, աշխատասիրեալ՝ Գաբրիէլի Աւետիքեան, Վենետիկ, 1814, էջ 521-525: «Զոր ըստ պատկերին քում» շարականը նվիրված է Քրիստոսի կենդանագիր պատկերին (սրբապատկեր) եւ այն եկեղեցում զետեղելուն: Տեքստը բաղկացած է չորս տնից, ընդ որում երեքը՝ չորսական տողից կազմված կանոնավոր տներ են, միայն երրորդ տունը՝ երեք անկանոն տող է: Հենց այդտեղ է նշվում ինչ-որ մեկի՝ Հռոմի գահից պատվված որդու մասին (այնտեղից պատկեր բերելու վերաբերյալ խոսք չկա): Շարականի հեղինակ կարող էր լինել ինչպես Աշոտ պատրիկը (նրա պատվերով՝ ինչ-որ մեկը), կամ Գրիգոր Մագիստրոսը, սակայն առանց այդ երեք տողի, քանի որ Հռոմի ու Պետրոսի գահի պանծացված հիշատակումը խորթ է 7-րդ կամ 11-րդ դարի հայ իրականության համար:



Հանգստարան եւ օթարան անձեռագործ սուրբ պատկերին,
Յիսուսի Քրիստոսի՝ որ ի փայտին,
Խնդրելին Յոհաննու սուրբ աւետարանչին,
Հրամանաւ մոր տեառն մերոյ սուրբ Ա(ստուա)ծածնին,
Եւ նորոգեալ վերստին
Հաստատեցաք զսուրբ ուխտս՝ վերջինս քան զառաջինն,
Աստ եդաք զվէմն հաւատոյ, հիման սուրբ եկեղեցւոյ,
Գրիգոր Վահրամ պատանին»:

Այս հանգամանքը հուշում է, որ տեքստը կազմողը եղել է հանգավոր աղբյուրի ազդեցության ներքո, որպիսին կարող էին լինել «Զոր ըստ պատկերին քում» շարականը եւ Մանվել Բջնեցու գանձը:

Կարծում ենք, որ մեծ առումով խնդրի հանգուցալուծման բանալին կարելի է գտնել Սիմեոն Երեւանցու վկայություններում: Նրա համար 1013 թ. արձանագրությունն ստույգ վկայագիր է, որի վրա հենվելով պատմում է վանքի առաջնորդների մասին եւ գրում. «Ապա վերոհիշյալ Գրիգոր Մագիստրոսը մինչ վերանորոգեց այս վանքը, նաեւ հարստացրեց այն հողերով եւ ջրերով, եւ իր որդուն դնել տվեց սրա առաջնորդ: Որի համար էլ դրանից հետո, որպես հայրենի մուլք (սեփականություն) ունենալով այս (վանքը), որդիները, թոռները եւ հաջորդ տոհմակիցները մեկը մյուսին հաջորդելով (եղան) սրա առաջնորդը՝ ոչ միայն Հայոց իշխանության, այլեւ Պարսից թագավորների ժամանակներում, գրեթե մինչեւ մեր ժամանակները»: Հավուց թառի 15-րդ դարի վերջի վանահայր Զաքարիայի մասին գրելիս հեղինակն ակամա պարզաբանում, է թե այդ տոհմն ինչպես էր վարում վանքի գործերը: Պատմելով այն մասին, որ Զաքարիան մի տաճիկից ինը գյուղ է գնում, նա շարունակում է՝ «**Զաքարիա վարդապետը, երբ գնում է սրանք, գնում է իր անունով, եւ Ամենափրկչի անունը երբեք չի նշում կալվածագրում, ոչ էլ գրել է տալիս, որ վախմ է** (այսինքն՝ «վանքապատկան» - Կ. Մ.)**: Սրա պատճառն այն է, որ սրանք հնուց ի վեր եղել են ազատներ եւ անվանի մարդիկ, ազգով շատ եւ հարուստ, որոնցից թեպետ ոմանք դառնում էին վանականներ, ոմանք աշխարհիկներ, սակայն (ապրում) էին մեկ տան մեջ եւ (նույն) ունեցվածքով, եւ իրենցն էին համարում գյուղը եւ վանքը՝ հավասարապես**»[54]:

Այսպիսով պարզ է դառնում, որ 15-րդ դարում Հավուց թառի վանահայրությունն անցել է մի տոհմի, որն իրեն համարել է Գրիգոր Մագիստրոսի սերունդ, պարոնտեր, եւ ժառանգական իրավունքով, ըստ իր կամքի՝ տնօրինել վանքն ու նրա ունեցվածքը: Ի՞նչ էր անհրաժեշտ այս տոհմին Հավուց թառում

54. Ամբողջովին տե՛ս հավելվածում:

իր իշխանությունը սրբագործելու եւ «մշտնջենական» դարձնելու համար: Անհրաժեշտ էր մի զորավոր «անջնջելի արձանագիր», որը հաստատեր, թե վանքն այդ շինել կամ վերաշինել է Գրիգոր Մագիստրոսը, որը նրա սեփականությունն է եղել, որ նա երկրի տերերից գնել է վանքի չորս կողմի բոլոր հողերը (լեռ ու դաշտով եւ ամենայն կազմությամբ) եւ այդ սեփականությունն ամրագրել է ժամանակի ամենաբարձր իրավական փաստաթղթերով՝ աշխարհակալ թագավորի՝ կայսեր կնքված թղթով եւ կաթողիկոսական նամակով, որ Մագիստրոսն է վանք բերել մեծահռչակ, անձեռագործ Ամենափրկիչ խաչը եւ վերջապես, որ Մագիստրոսն իր անմիջական ժառանգին՝ որդուն, կարգել է այդ վանքի վանահայր: Այս վերջինը հատկապես կարեւոր էր, քանի որ ենթադրում է վանքի առաջնորդների ժառանգական հաջորդականության սկզբնավորում:

Ահավասիկ, այն ամենը, ինչ որ իրենց պետք էր, Գրիգոր Մագիստրոսի մահից շուրջ չորս դար հետո իրենց նրա սերունդ հայտարարած տոհմի անդամները գտել են 1013 թվականի արձանագրության մեջ կամ, որ ավելի ճիշտ կլինի ասել, գրել են 1013 թվականի արձանագրության մեջ:

Իհարկե, պատմական առեղծվածները հեշտությամբ չեն բացահայտվում, ու այս արձանագրության հարցում եւս մեր տեսակետն ընդամենը վարկած է: Ավելացնենք, որ արձանագրության իսպառ անհետացումը նույնպես տարակուսանք է հարուցում: Բանն այն է, որ նրա տեքստը բավական ընդարձակ է, ուստի պիտի գրված լիներ բազմաթիվ քարերի վրա: Այստեղ մեջբերենք Քուրդ Հովհաննեսի փոքրիկ վկայությունը, թե որտեղից է քաղել ու արտագրել արձանագրությունը. «Վերոյգրեալ արձանս գրեալ կայր ի վերայ Սուրբ Ամենափրկչին արքայաշէն դարպասին դուրս կոյս հարաւկողմն ի վերայ մեծ լուսանցոյց պատուհանին, որ ի շարժմանէն խախտեալ կայր: ՌՃՀ (1721) թուին Աստուածատուր կաթողիկոսն կամեցաւ վերստին նորոգել, ի քակելն ես մեղաւոր ծառայ սուրբ տանս (Մայր Աթոռի – Կ. Մ.) Քուրդ Յոհաննէս իմ ձեռամբս վերառի զարձանս զայս եւ գրեցի աստ»[55]: Այսինքն, պատը, որի վրա եղել է արձանագրությունը, քանդվել է, եւ հնարավոր է, որ դրա քարերն օգտագործել են նոր (անավարտ մնացած) եկեղեցու կառուցման համար:

Հուսանք, որ վանական համալիրի հետագա ուսումնասիրության ու պեղումների ժամանակ կգտնվեն արձանագրության որոշ հատվածներ: Վիմական գրչության նմուշ ունենալու դեպքում արդեն 1013թ. արձանագրության առեղծվածն ավելի մոտ կլինի իր վերջնական բացահայտմանը:

55. Յովհ. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 293:



# ԳՐՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Հավուց թառի վանքը եղել է միջնադարյան Հայաստանի գրավոր մշակույթի եւ գրչության նշանավոր կենտրոններից մեկը: Այստեղ գրվել ու նաեւ պահվել են բազմաթիվ արժեքավոր մատյաններ: Հայերեն հնագույն ամբողջական ավետարաններից մեկը, նշանավոր «Վեհամոր ավետարանը» (Մատենադարան, ձեռ. թիվ. 10668)[56], որը ենթադրաբար 7-րդ դարի մատյան է, մինչեւ 1294 թվականը պահվել է Հավուց թառում: Այդ թվականին այն «ի գաւառեն Գառնու, ի վանացն Հաւու թառու» գնել է Ամենավագ անունով մեկը[57]: Այժմ այդ Ավետարանի վրա են երդվում ՀՀ նախագահները:

Հավանորեն Հավուց թառի վանքին է նվիրվել նաեւ 1190թ. Այրիվանքում գրված Տոնապատճառ ժողովածուն (Մատենադարան, ձեռ. թիվ. 3795), որի գրիչ եւ ստացող Փիլիպոս քահանան 1191թ. հիշատակարանում նշում է. «եւտու զիմ Տաւնապատճառս՝ յԱստուածընկալ Սուրբ Նշ[ան]ին… հրամանաւ տեառն Գրիգորի սպասաւորի Սուրբ Նշանի: Եւ նա խոստացաւ մեզ Դ (4) քառասունք ժամ զկնի ելից ի յաշխարհէս՝ Բ (2) քառասունք Փիլիպոսի եւ Բ (2) քառասունք զուգակցի իւրոյ Մարեմտիկնայ»[58]: Պարզ է, որ Գրիգորը վանահայրն է, քանի որ իրավասու է նվիրատուների հիշատակը 4 քառասունքի մատուցմամբ պահպանելու խոստում տալ իր եւ իր հաջորդների անունից: Ինչ վերաբերում է «Աստվածընկալ Սուրբ Նշան» անվանմանը, ապա պետք է նշել, որ Ամենափրկչից բացի Հավուց թառում եղել է Խաչափայտի մասունքով մեկ այլ խաչ, որ կոչվել է Աստվածընկալ եւ որի մասին հայտնում է Նաթանայել Հավուցթառեցին՝ «զԱմենափրկիչ խաչն եւ **մասն Տէրունական խաչէն, որ Աստուածընկալ ասեն** եւ մնան երկուքն ի Հա[ւու]ց թառ մեծափայծառ փառաւք»[59]: Կարծում ենք, որ Փիլիպոսի հիշատակարանում հենց այս խաչի մասին է խոսքը: Այլուր մենք տեսնում ենք, որ երբեմն մարդիկ նշում են, թե ինչ-որ բան նվիրում են Ամենափրկչին, նույն կերպ վարվել է Փիլիպոսը, իր ձեռագիրը նվիրելով Աստվածընկալ սուրբ խաչին: Պատահական չէ, որ նվերն ընդու-

56. Ա. Մաթեւոսյան, Վեհափառական երկու Ավետարան, «Էջմիածին», 1994, Թ-Ժ, 32-33: Մատյանը 1975-ին Մատենադարանին է նվիրել Վազգեն Ա կաթողիկոսը, իսկ «Վեհամոր Ավետարան» է կոչվել նրա մոր՝ Սիրանույշ Պալճյանի հիշատակին:

57. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984, էջ 741 (այսուհետեւ՝ Հիշատակարաններ, ԺԳ): Ձեռագիրը 15-րդում՝ Մաքենոցաց վանքում, 16-րդում՝ Արցախի Գարդման գավառի Մեծ Բանանց գյուղում, «Ծեր ավետարան» մականունով, որ ստացել էր հնության համար:

58. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988, էջ 264:

59. Նաթանայելի բոլոր վկայությունները տե՛ս հավելվածում:

նող Գրիգորն էլ, ոչ թե կոչվում է, օրինակ՝ «հայր վանացս», այլ «սպասաւոր Սուրբ Նշանիս»[60], քանի որ տվյալ դեպքում նա հանդես է գալիս որպես այդ սրբազան խաչի սպասավոր: Իսկ իր հիշատակարանի վերջում նա շեշտում է, որ նվիրատուին տրված խոստումը չկատարողները կդատապարտվեն Աստծուց եւ Աստվածընկալ նշանից («յԱստուածընկալ նշանէս»), այսինքն՝ այս բոլոր հիշատակություններում Սուրբ Նշանը ոչ թե վանքի կամ եկեղեցու անուն է, այլ սրբազան խաչի անվանումը:

Թվում է, որ Հավուց թառի այս նույն Գրիգոր վանահոր անունն է տրվում բլրի եկեղեցու սալահատակմանը վերաբերող արձանագրության մեջ[61]:

Հավուց թառի գրչատանն ստեղծված մատյանների հիշատակարանները վանքի պատմությանն ու միաբաններին վերաբերող բազմաթիվ հետաքրքրական տվյալներ են պարունակում, որոնք երբեմն զուգադրվելով մատենագրական եւ վիմագիր արձանագրությունների տեղեկությունների հետ, թույլ են տալիս վերականգնել առանձին ժամանակահատվածների պատկերը:

Հարկ է նշել, որ վանքը 11-րդ դարից հետո նոր վերելք է ապրել Զաքարյանների շրջանում: 1206 եւ 1207 թ. Լոռեի եւ Անիի եկեղեցական ժողովների մասնակից Հավուց թառի վանահայր Եղիայի մասին պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եղիայ ի Հաւուց թառոյ, ա՛յն, որ գեղեցիկ կարգաւորեաց զպաշտօն վանից իւրոց, որպէս թէ ամենեցունց ընդ մի բերան հնչէլ՝ եթէ բարձր եւ կամ ցած, եւ ո՛չ հարստահարել ընկեր՝ զընկեր»[62]: Պատմիչի առաջին խոսքերը վերաբերում են վանքում երգեցողության կարգավորմանը:

Հավուց թառում գրված մեզ հայտնի առաջին ձեռագիրը պատկանում է 13-րդ դարի ամենանշանավոր հայ գրիչ-մանրանկարիչներից մեկին՝ Իգնատիոսին: 1214 թվականին գրված այդ Ավետարանը (Վենետիկի Մխիթարյանների մատենադարան, ձեռ. թիվ 134) Իգնատիոսից պահպանված առաջին մատյանն է: Հետագայում նա արդյունավետ գրչական գործունեություն է ծավալել Անիի շրջանում եւ մասնավորապես Հոռոմոսի վանքում[63]:

60. «Ես՝ տէր Գրիգոր, խոստացա հաստատութեամբ կատարել զյիշատակ սոցայ, եթե ի մեր յաւուրքս լինի վախճան սոցայ՝ մեք առնեմք, ապա թե ոչ, ով եւ լինի զկնի մեր սպասաւոր Սուրբ Նշանիս, նա կատարեսցէ աներկբայ... եւ թե ոք անփոյթ առնէ, ով եւ է, դատապարտեալ է Աստուծոյ եւ յԱստուածընկալ նշանէս» (Նույն տեղում):

61. «...ես Մխիթար քահանայ վարդպետ, հրամանաւ Տ(է)ր Գրիգորիս, սալեցի զեկեղեցիս...» (Գ. Սարգսեան, Վիմագրագիտական..., էջ 233):

62. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք Օհանջանյանի, Երեւան, 1961, էջ 172: Պատմիչի առաջին խոսքերը վերաբերում են վանքում երգեցողության կարգավորմանը:

63. Իգնատիոսից մեզ հասած ձեռագրերից երեքը եւ մի պատառիկ պահվում են Մատենադարանում (թիվ 1519, 6202, 9649, պատառիկ՝ 928), երկու ձեռագիր՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներում (Չիկագոյի համալսարանի գրադարան, Վ. Սիմոնյանի մասնավոր հավաքածու), մեկական ձեռագիր՝ Վենետիկի Մխիթարյանների մատենադարանում (թիվ 134) եւ Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքում (թիվ 36): Իգնատիոսի գրչական ու մանրանկարչական



Ձեռագրի նկարազարդումն ամբողջական չէ. պահպանվել են միայն Մարկոսի եւ Հովհաննեսի ավետարանների անվանաթերթերը, լուսանցազարդեր ու զարդագրեր, որոնց քննությունը, սակայն, Բ. Սարգիսյանին դրդել է գրելու՝ «...ակներեւ կը տեսնուի ծաղկողի թե՛ ճարտար արուեստը եւ թե՛ նուրբ ճաշակը միանգամայն»[64]:

Հովհաննեսի ավետարանի վերջում զետեղված է ձեռագրի գլխավոր հիշատակարանը՝ գրված Իգնատիոսի ձեռքով, ստացողներ, Հավուց թառի միաբաններ Թադեոս եւ Հայրապետ եղբայրների անունից, որտեղ ասվում է. «Տուաք գրել եւ նկարել Իգնատիոս գրչի ոսկւով եւ երանգ երանգ խառնուածով զարդարեալ, **ի վանքս որ կոչի Հաւու թառ, ընդ հովանեաւ Սուրբ Կաթողիկեիս եւ մեծահռչակ սուրբ նշանիս՝ Ամենափրկիչ կոչեցեալ**, յառաջնորդութեան սուրբ ուխտիս՝ հեզի եւ ամենաբարւոյ Պաւղոս վարդապետի»[65]: Հիշատակարանում այնուհետեւ նշվում է տեղի աշխարհիկ իշխանավորը՝ Իվանե Զաքարյանը («ի տերութեան տեղւոյս Իւանէի») եւ ժամանակի կաթողիկոսը՝ Հովհաննես Զ Սսեցին (1203-1221): Ստացողներն Ավետարանն ընծայել են Հավուց թառի վանքին:

Հավուց թառի պատմության համար արժեքավոր է հատկապես վանքի միաբանների հիշատակությունը: Ստացողները խնդրում են հիշել. «զփակակալ սուրբ ուխտիս՝ զՅակովբ ընտրեալ քահանայ, եւ զՄարկոս ամենագովելի նպաստաւորն մեր..., եւ զԵղիայ սրբասէր քահանայ եւ զԳեորգ եւ զՎարդիկ ծերունի կրաւնաւոր», գրիչ Իգնատիոսն էլ հիշատակարանի իր հատվածում խնդրում է հիշել՝ «զԵղիայ վարդապետն եւ զՄխիթար վարդապետն նաեւ զՆերսես պատանի՝ աշակերտ Թադեոսի»[66]: Իսկ մի առանձին էջի վրա, կարճ հիշատակագրությամբ նշված է. «Զաստուածապատիւ եւ զմեծայնուն զվարդապետն Եղիա յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր, աղաչեմ»[67], որը կարող է վերաբերել վանքի 13-րդ դարի առաջին վանահայր Եղիային: Կարելի է ենթադրել, որ նա այդ ժամանակ թեեւ ողջ էր, սակայն վանահայրը վերեւում նշված Պողոս վարդապետն էր: Եղիան եւ Պողոսը միասին հիշատակվում են նաեւ ավելի վաղ գրված մի անթվական արձանագրության մեջ, որը նվիրված է Կաթողիկե եկեղեցու փակակալ Հովհաննեսի գերեզմանի վրա խաչքարի կանգ-

ժառանգությանն անդրադարձել ու այն բարձր են գնահատել Գ. Հովսեփյանը, Հ. Քյուրտյանը, Ա. Երեմյանը, Ս. Տեր-Ներսեսյանը եւ ուրիշներ (տե՛ս Կ. Մաթեւոսյան, Գրիչ եւ մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցի, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1982, N 1, էջ 121-133):

64. Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Ա, Վենետիկ, 1914, էջ 591: Ղ. Ալիշանը մատյանը կոչում է «յոյժ գեղեցկագիր» (Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 27):

65. Հիշատակարաններ, ԺԳ, էջ 83:

66. Նույն տեղում, էջ 84:

67. Նույն տեղում:



*Հավուց թառի 1214 թ. Ավետարանի անվանաթերթ (գրիչ Իգնատիոս)*

նեցմանը[68]: Մեկ այլ անթվական արձանագրության մեջ նշված Մխիթար վարդապետը հավանաբար նույնն է այս հիշատակարանի նույնանուն վարդապետի հետ[69]:

1214 թ. հիշատակարանի վերջին տողից պարզվում է, որ մինչ այդ ձեռագիրը Իգնատիոսը գրել, նկարազարդել է մեկ այլ Ավետարան, որը դրվել է ոսկե կազմի մեջ եւ պահվել է Հոռոմոսի վանքում: Հնարավոր է, որ այդ մատյանի վայելած հռչակի շնորհիվ է Իգնատիոսը շուտով Հավուց թառից տեղափոխվել Հոռոմոսի վանք, քանի որ նրա հաջորդ թվակիր Ավետարանը գրվել է այնտեղ 1232 թ., Զաքարյանների քեռորդի պարոն Խոռասի պատվերով (Մատենադարան, ձեռ. թիվ. 1519):

Սույն ձեռագրի՝ Հավուց թառին նվիրաբերման մասին վանքի «բլրի» եկեղեցու հյուսիսային պատին հատուկ արձանագրություն է գրվել, ուր նշվում է, որ եղբայրները դրա դիմաց ստացել են տարեկան 2 ժամ պատարագ[70]: Հետաքրքրական է նաեւ, որ ձեռագիրը Հավուց թառում է մնացել բավական երկար ժամանակ եւ 1618 թ. այստեղ նորոգվել է առաջնորդ Համազասպ եպիսկոպոսի հոգածությամբ:

Հավուց թառից ծագող հաջորդ մատյանն Ավետարան է, գրված 1236 թ. (Մատենադարան, ձեռ. թիվ 4160) աշխարհական Սիմէոն եւ ձեռնադրությամբ Պետրոս անվանված քահանայի ձեռամբ. «ի վանս Հաւո[ւց թառ ը]նդ հովանեաւ Սուրբ Կարապետիս Յովանու»[71]: Հավուց թառում Ս. Կարապետի անունով մատուռ է կառուցվել 1213 թ., որի վերաբերյալ պահպանված արձանագրության մեջ նշվում է, որ երեք աշակերտ՝ Սոսթենեսը, Մատթեոսն ու Գրիգորեսն այն կառուցել են իրենց երկու ուսուցիչների՝ Սեթի եւ Սիմավոնի համար. «Թվ(ականիս) ՈԿԲ (1213) Շնորհիւն Ա(ստուծո)յ, մեք՝ նուաստ աշակերտք Սիթա եւ Սիմաւոնի՝ Սոսթանէս եւ Մաթէոս եւ Գրիգորէս, շինեցաք զս(ուր)բ Կարապետս ի վերայ շիրմացս սոցա եւ առաջնորդք ս(ուր)բ ուխտիս սահմանեցին Բ (2) հրագալոյցն վ(ա)ս(ն) հոգոց նոցա եւ այլ ննջեցելոց որ յայսր հանգստարանի»[72]:

Ձեռագրի գլխավոր հիշատակարանը տեղեկություններ է պարունակում Պետրոս գրչի ազգականների մասին, նշվում են ծնողները՝ «զՅովանէս եւ զՆրջիս», հորեղբայրները՝ Վարդան եւ Գրիգորես վարդապետներ, քույրերը՝ Շապազար եւ Արեւտիկին: Հիշատակարանում նշվում են նաեւ գրչի մտերիմները՝ Խոցադեղը, Արքան, Սարգիսը, Հզարդեղը:

Տեղեկությունների երկրորդ խումբը կարեւոր է վանքի պատմության համար: Նշվում է, որ այդ թվականին մահացել է վանահայր Հովհաննեսը, որը մեկնել էր «առ մեծ եպիսկոպոսն տէր Գրիգոր»: Դրանից հետո նոր վանահայր է նշանակվել նույն Գրիգոր եպիսկոպոսի եղբորորդին՝ Գեւորգը. «Նստաւ յաթոռ ընտրեալ եւ պատուական սուրբ քահանայն Գէորգ…»: Առանձին էջում գրված մեկ այլ հիշատակարան տեղեկացնում է այդ թվականին սկսված մոնղոլական արշավանքի, Լոռե եւ Սուրբ Մարի բերդաքաղաքների գրավման մասին[73]: Հնարավոր է, որ այստեղ նշված Գեւորգ վանահորն է պատկանում բլրի եկեղեցու հյուսիսային պատի անթվական նվիրատվական արձանագրություններից մեկը[74]: Իսկ թե ո՞վ է Գրիգոր «մեծ եպիսկոպոսը», կարելի

68. «Այս արձան ս(ուր)բ աւծեալ արեամբ Ք(րիստոս)ի կանգնեցաւ ի վերա գերեզմանաց ա(ստուա)ծասէր քահանաի Յոհաննիսի փակակալի սրբոյ Կաթողիկէիս, եւ երկու եղբարց իւր, թաղեալք ընդ աջմէ եւ ընդ ահէկս՝ Յովսէփա եւ Վարդա, ձեռաւք սպասաւորաց բանի Եղիաի եւ Պաւղոսո եւ միաբան եղբարց, աղաչեմ յիշեցէք ի Ք(րիստո)ս»: (Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 22):
69. 1236-ից վանահայր դարձած Գեւորգի արձանագրության շարունակության մեջ Մխիթար վարդապետն իր քույր Թամարի հետ նշում է կատարած նվիրատվության մասին (Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 24):
70. «Կամաւն Աստուծոյ, մեք նուաստ քահանայք Թադէոս եւ Հայրապետ ստացաք Աւետարան զարդարեալ ոսկով եւ արծաթով ի մեր արդեանց եւ տուաք ի ս(ուր)բ ուխտս եւ այլ արդիւնք եւ սպասաւորք ետուն Բ (2) աւր ժամ մեզ ամի-ամի, կատարիչքն աւրհնին ի Տ(եառն)է» (Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 22):
71. Հիշատակարաններ, ԺԳ, էջ 191:
72. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 23-24: 1211 թվականի մեկ այլ արձանագրության մեջ, որը պահպանվել է խաչքարի պատվանդանի վրա, հիշվում են մեկ այլ ուսուցիչ եւ աշակերտ. «ՈԿ (1211) ես Սարգիս անպիտան քահանայ կանկնեցի սուրբ նշան Ք(րիստո)սի ի բարեխաւսութիւն ինձ եւ ծնաւղաց իմոց եւ շնորհազարդ աշակերտի իմոյ՝ Աշոտոյ…» (նույն տեղում, էջ 23):
73. «Գոյժ աղաղակի յոյժ լուաք յայսմ ամի, որ է ՈՁԵ (1236) յամսեանն յարաց Ժ (10) յաւուր կիւրակէի, եթէ զքաղաքաբերդն զԼաւռէ, զՍուրբ Մարի առին անաւրէն այլասեռք՝ զաւրք Տաթարին…» (նույն տեղում):
74. «Շնորհիւն Ա(ստուծո)յ Գորգ՝ հայրն եկեղ(եցւոյ)ս, ետու զիմ այգին ի ս(ուր)բ ուխտս եւ սպասաւորքս ետուն Զ (6) աւր ժամ՝ Բ (2) ինձ, Բ (2) Շողոկաթ, Բ (2) Ստեփանոսի» (Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 24):

է ենթադրել, որ գուցե նա Այրարատյան նահանգի եպիսկոպոսն է, որի մասին 1267 թ. մի հիշատակարանում ասվում է՝ «սուրբ ծերունին աստուածապատուեալ արհիեպիսկոպոսն տէր Գրիգոր, որ ունէր վերատեսչութիւն… Այրարատեան նահանգին, ներկայան ունելով զամուրն Բջնի…»[75]:

Հավուց թառից հայտնի մյուս ձեռագիրն Ավետարան է, գրված 1297 թ. Գրիգոր գրչի ձեռամբ (Մատենադարան, ձեռ. թիվ 2838): Գլխավոր հիշատակարանը սկսվում է Հայոց աշխարհիկ ու հոգեւոր տերերի, եւ աշխարհակալ Ղազան խանի հիշատակությամբ[76], ապա հասնում տեղական իշխանավորներին՝ «…ի մերոյ նահանկի տէրութեան Խոշաքին եւ Զաքարիայի՝ որդոյ նորին եւ ի տէրութեան մերոյ սուրբ ուխտիս Հայոց թառոյ՝ պարոն Բեսութային եւ Խոյանձային»[77]: Բեսութայ, որդի պարոն Ամիրբեկի, թոռ Սահմադինի հիշվում է 1295 թ., թեթեւացրել է Օշականի հարկերը[78]: Իսկ Խոյանձա կամ Խուանդ անունով այդ շրջանի հայտնի իշխանուհին Իվանե Զաքարյանի որդի աթաբեկ Ավագի թոռն էր:

Գրչության վայրը հիշատակվում է հետեւյալ կերպ. «ի հռչակաւոր եւ յաստուածաքնակ ուխտիս Հայոց թառ յորջորջելոյ, ընդ հովանեաւ **Կաթողիկէ եկեղեցւոյ Սուրբ Սիոնի եւ աստուածընկալ Սուրբ Անենայփըրկչիս**», որից հետո նշանավոր սրբության վերաբերյալ ավելացվում է՝ «ի ձեռն սորա բազում սքանչելիք եւ պէս-պէս բժշկութիւնք կատարին»: Այստեղ առաջին անգամ Կաթողիկեն կոչվում է նաեւ Սուրբ Սիոն անունով: Գրիչը հիշատակարանում նշում է նախ իր ուսուցչին, ապա ծնողներին. «ես մեղաւոր Գրիգոր գրիչ աղաչեմ յիշել… զիս եւ ծնաւղսն իմ՝ զԱբրահամ ուսուցիչն իմ եւ զՄխիթարիչ հայր իմ եւ զՄամախաթուն մայր իմ»: Ուշագրավ է, որ Աբրահամ վարդապետին՝ որպես իր ուսուցչի, հիշատակում է նաեւ Ենոք (Էնոք) անունով մեկը, բլրի եկեղեցու մուտքի մոտ դրված խաչքարի արձանագրության մեջ («Աբրահամու վարդապետին իմո…»), իսկ եկեղեցու արեւմտյան կողմում պահպանվել է նրա տապանաքարը[79]: Գրիգոր գրիչը հիշատակում է նաեւ վանքի միաբան, իր հոգեւոր եղբորը «դեռաբոյս քահանա» Մխիթարին՝ «որ աւգնական եղեւ ի գործ սուրբ Աւետարանիս»: Ձեռագրի ստացողներն են Մահեւանի եւ Տաքտիկնոջ որդի Քուրդը եւ նրա կինը՝ Աւլերը[80]: Ձեռագրի հարդարանքը թեեւ սահմանափակվում է անվանաթերթերով եւ լուսանցազարդերով, սակայն երեւում է, որ դրանք վարպետ ծաղկողի ձեռքի աշխատանք են:

75. Հիշատակարաններ ԺԳ, էջ 350:

76. «Ի թագաւորութեանն… Հայւոց Հեթմոյ…, ի կաթողիկոսութեան Հայւոց տեառն Գրիգորի եւ յաշխարհակալութեան Ղազան ղանի…», Հիշատակարաններ, ԺԳ, էջ 796:

77. Նույն տեղում:

78. Ղ. Ալիշան, Այրարատ, էջ 190:

79. Գ. Սարգսեան, Վիմագրագիտական…, էջ 248:

80. Հիշատակարաններ, ԺԳ, էջ 796-797:



1298-ին Հավուց թառում՝ «ի մեծ մենաստանիս Հայոց թառ, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչիս» Սաղմոսարան եւ Աղոթամատույց է ընդօրինակել նույն Գրիգոր գրիչը Այրիվանքի Սարգիս քահանայի խնդրանքով (Մատենադարան, ձեռ. թիվ 6473): Հիշատակարանի վերջում կրկին հիշում է Մխիթարին՝ «զհոգեւոր եղբայր մեր զՄխիթար նորընծա քահանայ»[81]:

Սանահինում գրված մի Ավետարան (Մատենադարան, ձեռ. թիվ. 4435) 1424 թ. ստացել է Հավուց թառից Մատթեոս քահանան՝ «…սրբասէր քահանայս Մատթէոս՝ յԱրարատեան գաւառէ, սնընդեամբ ի բարձրադիտակ, յականաւոր եւ ի գերահռչակ սուրբ ուխտէն Հայոց թառոյ»: Հիշատակարանում նշվում են նրա հայրը՝ Ռատը եւ եղբայրը՝ Մելքիսեդեկը, սրա որդին՝ Ումեկը՝ «զվայելող սուրբ Աւետարանիս», որի անունից հետո ավելացված են նրա շրջապատի մարդկանց ու հավանաբար նաեւ Հավուց թառի միաբաններից ոմանց անունները՝ «ընդ նոսին եւ զսնընդակից զըստ հոգւոյ հարազատք նորին՝ զսրբասէր քահանայսն զպարոն-տէր Յովանէս, եւ զմեծ Յովանէս, եւ զտէր Սարգիս, եւ զԳրիգոր եւ զայլ միաբանեալսն սիրով ընդ նմա… այլ եւ զհիռն աւրհնութեան, զիշխանն իշխանաց զպարոն Չալապի…»[82]:

Իգնատիոս գրչի ընդօրինակած եւ ծաղկած մի Ավետարան (Նոր Ջուղա, ձեռ. թիվ 36), որն ստացողները 1236 թ. նվիրել էին Խծկոնքի վանքին, 1321 թ. ձեռք է բերել գառնեցի Կարապետը «որդի Տիրատրոյ ի շահաստան դղեկէս Գառնոյ» եւ կնոջ՝ Եսուականի հետ ընծայել Հավուց թառում իրենց կառուցած Ս. Կարապետ եկեղեցուն. «…վերստին ստացող եղաք սրբոյ Աւետարանիս ի հալալ արդեանց մերոց ես եւ կենակից իմ Էսուկանս եւ ընծայեցաք ի սուրբ մենաստանս Հայոց թառի մեր նորաշէն եկեղեցին ի Սուրբ Կարապետն մեր սրտի յաւժարութեամբ ի վայելչություն եւ ի պայծառութիւն սրբոյ տաճարիս»[83]: Հիշատակարանում նշվում է վանահայր Հովհաննեսը («ի յառաջնորդութիւն սրբոյ ուխտիս Հայոց Թառոյ, տէր Յովանիսի»):

14-րդ դարի կեսերին Հավուց թառի գրասեր վանահայրն էր Նաթանայել եպիսկոպոսը, որին կանդրադառնանք քիչ հետո:

1423 թ. Սարգիս եւ Դավիթ քահանաները Այրիվանքում եւ Գառնիում գրված մի Մաշտոց են նվիրել «ի սուրբ ուխտն Հաւուց թառ, **ի դուռն Սուրբ Կաթուղիկէին եւ Սուրբ Աստուածածնիս, եւ Սուրբ Յարութեան, եւ ամենազօր Սուրբ Անենափրկչին**»: Հիշատակարանում գրիչը նշում է. «Սարգիս ծերունի եւ պատուական քահանայն ի սուրբ ուխտէս Հաւուց թառ՝ զթուղտն

81. Նույն տեղում, էջ 828-829:

82. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Ա, էջ 315-316:

83. Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, հ. Ա, կազմ.՝ Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 151:

պատրաստեաց եւ ես՝ անյիշելի Դաւիթ՝ գրեցի գիրքս...»[84]: Որպես վանքի վանահայր հիշվում է Զաքարիան, որ հետո բավական ակտիվ դերակատարություն ունեցավ 1441 թ. Էջմիածնում, նախ Կիրակոս Վիրապեցու կաթողիկոսական ընտրության, ապա եւ 1443-ին նրա աթոռանկության գործերում:

1458 թվականին գրիչ Ստեփանոս կրոնավորը Հավուց թառում Հովհաննես կրոնավորի պատվերով ընդօրինակել է Շարակնոց (Երուսաղեմ, ձեռ. թիվ 1635): Մատյանը ծաղկել են գրիչը եւ Գրիգոր աբեղան: Խազագրված ձեռագրի բնագրի ստուգվածության մասին գրիչը նշում է. «Խլկեցի աւրինակաւ բանի եւ եղանակաւ ստուգեալ»: Հիշատակարանում տպավորիչ է վանքի սրբությունների թվարկումը՝ «Գրեցաւ... ի գերահռչակ ուխտս, որ կոչի Հայոց թառ, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչի եւ երկնանման սուրբ խորանաց եւ հրաշափառ սուրբ Կաթողիկէիս եւ լուսոյ մաւր սուրբ Աստուածածնի, եւ սուրբ Աջոյս Թադէոսի Առաքելոյ եւ Սուրբ Յակոբ նշանին եւ այլ համաւրէն սրբոցս որ աստ հաւաքեալ կան»[85]:

1464 թ. նույն Ստեփանոս գրիչը Դանիել վարդապետի համար ընդօրինակել է Ճաշոց (Մատենադարան, ձեռ. թիվ 3759): Հիշատակարանի սկզբում շատ կարեւոր տեղեկություն է հայտնում այս վարդապետի հոգածությամբ Կաթողիկե եկեղեցու նորոգման ու սալահատակման մասին. «սուրբ վարդապետն Դանիէլ եկն ի սուրբ ուխտս Հայոց թառ եւ միաբան եղեւ սուրբ Ամենափրկչիս եւ այլ սրբութեանցս: Եւ մեծաւ յուսով եւ փափաքմամբ սիրով ձեռն էարկ զսուրբ եւ **երկնանման եւ փառաւոր Կաթողիկէ եկեղեցիս եւ վերստին կրկին զարդարեաց եւ սալեց եւ նորոգեց**...»[86]: Այնուհետեւ Ստեփանոսը նշում է, որ ինքը եւ Դանիելը մանուկ հասակում աշակերտել են նույն վարպետին՝ «որ եւ մի վարպետի աշակերտեալ էինք ի տղայութենէ հասակից»: Այս նույն վարդապետը 1474 թ. Աղջոց վանքում պատվիրել ու ստացել է մի Ավետարան, որի հիշատակարանում կոչվում է «Դանիէլ վարդապետ Սեւանեցի»[87]:

Շատ կարեւոր են Ստեփանոսի հիշատակարանի տեղեկությունները

84. Գ. Սրուանձտեանց, Թորոս Աղբար, հ. Ա, Կ. Պոլիս, 1879, էջ 233, հ. Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 338: Նույն հիշատակարանը եղել է Տիվրիկի Ս. Լուսավորիչ վանքում պահվող Մաշտոցում եւ արտագրված մեկ այլ Մաշտոցում, որը պահվել է Խարբերդում, այդ պատճառով տեղ է գտել «Թորոս Աղբարի» զույգ հատորներում: Հմմտ. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Ա, էջ 303:

85. ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (կազմող՝ Լ. Խաչիկյան), մաս Բ, Երեւան, 1958, էջ 99 (այսուհետեւ՝ Հիշատակարաններ, ԺԵ, հ. Բ): Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. Ե, Երուսաղէմ, 1971, էջ 450: Ձեռագրի առաջին մասը ստացողը պատվիրել է 1424 թ. Հերմոնի վանքում: Մատյանը Երուսաղեմ է հասել 1616 թ.: Ձեռագրի այժմյան պահպանվածության մասին Ն. Պողարյանը գրում է՝ «հանգամանք ողբալի»:

86. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Բ, էջ 214: Ձեռագրի այս հատվածից թերթ է ընկել:

87. Նույն տեղում, էջ 315:



վանքի միաբանների մասին, որոնք ներկայացվում են երկու խմբով՝ ավագներ, որոնց թվում է նաեւ մեր գրիչը՝ «Յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր... զմիեղէն սուրբ եղբարքս՝ զմիաբանքս սուրբ Ամենափրկչիս՝ զտէր Սարգիս փակակալ, զտէր Յակոբ, զտէր Մաթէոս» եւ կրտսերներ, որոնց գրիչը կոչում է «զսիրասունսդ որդիքս մեր եւ հոգելից աշակերտքս՝ կուսակրաւն սուրբ քահանայքս», ապա անվանապես թվարկում. «զկազմաւղ սորա զտէր Յովանէս, եւ զտէր Յոհաննէս..., զտէր Անդոն, զտէր Աւետիք, զտէր Դաւիթ, զտէր Ղազար, զտէր Ղուկաս, զտէր Մանուէլ, զտէր Աբրահամ եւ զամենայն առհասարակ՝ զմեծ եւ զփոքր...»: Հիշատակարանի վերջում առանց անունը տալու նշում է մահացած հորը՝ որը ձեռագրի համար թուղթ է կոկել, եւ մորը՝ Էմինին:

1471 թ. Ստեփանոս գրիչը մի Ավետարան է ընդօրինակել «ի սուրբ ուխտս Հայոց թառ սուրբ Ամենափրկչիս, որ է պատկեր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Մատենադարան, ձեռ. թիվ 215): Հիշատակարաններից մեկում իրեն կոչում է «ծերացեալ մահդասի զՍտեփանոս»: Առանձին հիշատակարանում խնդրում է հիշել իր որդի եւ աշակերտ Հովհաննեսին, որ նաեւ ձեռագրի նկարազարդողն ու կազմողն էր՝ «Զմեղապարտ գրիչս՝ զՍտեփանոս, նաեւ զփոքրն իմ՝ զՅոհաննէս՝ մահդասիք՝ զնկարօղ եւ զկազմօղ յիշեսջիք»[88]: Այստեղից երեւում է, որ գրիչն ու որդին մահտեսի են, այսինքն՝ Երուսաղեմ ուխտի են մեկնած եղել: Ձեռագիրն ունի չորս ավետարանիչների մանրանկարները՝ համապատասխան անվանաթերթերով:

Նույն 1471 թ. Ստեփանոսը Հավուց թառում ընդօրինակել է մեկ այլ Ավետարան (Մատենադարան, ձեռ. թիվ 10154), որի վնասված հիշատակարանում թեեւ նրա անունը չի պահպանվել, բայց մոր՝ Էմինի (Էմին խաթուն), որը մատյանի ստացողն է, եւ որդու՝ Հովհաննեսի անունները թույլ են տալիս պարզելու գրչի ինքնությունը: Ձեռագրի հիշատակարանում նշվում են նաեւ գրչի հայրը՝ Յովանէս, քույրը՝ Սուլթան Մելիք, ազգականները՝ «Սանվէլ եւ Յովսէփ», իսկ մատյանը տոհմական է («կատարեցաք զսա յիշատակ մեզ եւ մեր ծնաւղացն») եւ նվիրվել է այս ընտանիքի՝ Հավուց թառում գտնվող գերեզմանատանը՝ «(ի) սուրբ ուխտս եւ մեր հայրենի գերեզմանատանս»:

Հիշատակարանում Հավուց թառի սրբությունների թվարկումը կատարված է հայտնի բանաձեւով, բայց բավականին ընդարձակ է. «Ի գերահռչակ սուրբ ուխտս Հայոց թառս, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչիս, որ է պատկեր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ մաւրս մերոյ՝ Սրբոյ Սիովնի, եւ Սուրբ Աստուածածնի, եւ աստուածընկալ սուրբ նշանացս՝ կենսատու Սուրբ Աստուա-

88. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Բ, էջ 315: Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, հ. Ա, Երեւան, 1984, էջ 971-973:

ծածնի…, կենսատու Սուրբ Յակոբի…»[89]: Ձեռագիրը զարդարված է 10 խորանով եւ 4 ավետարանիչների պատկերներով:

1482 թ. Վրթանես կրոնավորը Գրիգոր Խուլ ի օրինակից Շարակնոց է ընդօրինակում (Վենետիկ, ձեռ. թիվ 884) Արարատյան երկրի Արջառերկ անապատում՝ «ի խնդրոյ տէր Սարգիս կրօնաւորի Հայոց թառոյ» (ԺԵԳ 28):

1543 թ. Գրիգոր կրոնավորը Քանաքեռում սկսել եւ Հավուց թառում ավարտել է մի ժողովածու (Մատենադարան, ձեռ. թիվ 5614), որի ստացողն ինքն է՝ «…կատարումն եղեւ ի մեծ մենաստանիս Հայու թառա, ընդ հովանեաւ Ամենափրկչիս եւ Սուրբ Աստուածածնիս»[90]:

1627 թ. Տաթեւում գրված եւ 1628-ին Վարդան քահանայի ձեռք բերած մի Ժամագիրք-սաղմոսարանում (Մատենադարան, ձեռ. թիվ 6335) հիշվում է ծաղկող, Հավուց թառի քահանա Խաչատուր Երեւանցին[91]:

Փիլիպոս Աղբակեցի (1622-1655) կաթողիկոսի կարգադրությամբ 1640 թ. Հավուց թառի վանահայր նշանակված Սիմեոն Ջուղայեցին ժամանակի նշանավոր վարդապետներից էր, ուսուցիչ, նաեւ գրչության գործին նվիրված մարդ, նկարիչ-ծաղկող: Վանահայրության շրջանում, նա որպես ծաղկող հիշվում է մի քանի ձեռագրերում, որոնցից մեկը 1642-1648 թթ. ստեղծված, Մատենադարանի թիվ 2503 Ժողովածուն է: Մեկ այլ մատյանի (Մատենադարան, ձեռ. թիվ 1549, գրիչ Ստեփանոս Լեհացի, վայր՝ Էջմիածին) 1646 թվականի հիշատակարանում նրա մասին ասվում է. «զՍիմէօն շնորհազարդ եւ քաջ րաբունի, ծաղկօղ եւ կազմօղ սորին»[92]: 1651-ին «միջնորդութեամբ Սիմէօն քաջ րաբունապէտին Ջուղացւոյ», Հովհաննես Ջուղայեցի երեցը մի Ավետարան է նվիրել «Ս. Ամենափրկչին, որ ի Հայոց թառ»[93]: Սիմեոն Ջուղայեցին հեղինակել է նաեւ Հավուց թառին նվիրված մի չափածո ստեղծագործություն՝ դրվատ (տե՛ս հավելվածում):

89. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Բ, էջ 313-315: Ձեռագիրը պահվել է Վրաստանի պետական արխիվում, Լ. Խաչիկյանը հիշատակարանը հրատարակել է այնտեղից քաղելով:
90. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 39:
91. Նույն տեղում, էջ 40:
92. Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երեւան, 1984, էջ 211 (այսուհետեւ՝ Հիշատակարաններ, ԺԷ, հ. Գ):
93. Հիշատակարաններ, ԺԷ, հ. Գ, էջ 793:



# ՆԱԹԱՆԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀԱՎՈՒՑԹԱՌԵՑԻ

Հավուց թառի միջնադարյան բազմաթիվ երեւելի հոգեւորականներից միայն մեկին կարող ենք հանգամանորեն անդրադառնալ, քանի որ նրա մասին ունենք համապատասխան տեղեկություններ: Նաթանայել եպիսկոպոսի անունն առաջին անգամ հրապարակել է Գ. Հովսեփյանն իր վերոնշյալ աշխատության մեջ՝ վկայակոչելով վերջինիս հիշատակագրությունը ժամանակին Սեբաստիայի Ս. Նշան վանքում պահված ձեռագրում. «Աստանաւր յիշեցէք ի սուրբ եւ ի մաքրափայլ յաղաւթս ձեր՝ զիս՝ զմեղապարտ, զնուաստ եւ զհողոյ հաւասար Նաթանայէլ եպիսկոպոս եւ առաջնորդ սուրբ եւ հռչակաւոր մեծ մենարանիս Հայոց թառայ, որ է սկիզբն սորայ ի սուրբ Լուսաւորչէն նոցա եւ հիմնարկութեամբ հաստատե(ա)լ եւ հանդիսացեալ սուրբ թարգմանչացն՝ Սահակայ եւ Մեսրոպայ»[94]: Դրանից հետո նա գրում է. «Նաթանաել եպիսկոպոսն ապրում է ԺԴ դարի երկրորդ կեսում կամ, որ ավելի հավանական է, ԺԵ-ի վերջերում, որովհետեւ այդ ժամանակների համար միայն տեղեկություն չունինք վանքի մասին»[95]: Նաթանայելը Սեբաստիայի ձեռագրի մեկ հատկի տեղեկությամբ է հիշված նաեւ Հ. Աճառյանի «Անձնանունների բառարանում»[96]

Այժմ, Նաթանայել եպիսկոպոսի գրած 1343 թ. հիշատակարանի շնորհիվ, պարզ է, որ նա ապրել է 14-րդ դարում եւ առաջնորդ եղել դարակեսին: Բայց



*Նաթանայել եպիսկոպոսի 1343 թ. հիշատակարանը*

94. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 24-25, հմմտ. Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշան վանուց ի Սեբաստիա, էջ 102:
95. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 25:
96. Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Երեւան, 1948, էջ 14:

Սեբաստիայի ձեռագրի հիշատակարանը կարեւոր է նաեւ այն առումով, որ այնտեղ եպիսկոպոսն իր անունը գրել է ամբողջովին, մինչդեռ վերոնշյալ հիշատակարանում, ինչպես նաեւ Հավուց թառի երկու արձանագրություններում՝ կրճատ՝ «Նաք»: Ինքնագիր հիշատակարանում նշված է՝ «**Ես նուաստ Նաք եպ Հայոց թառոյ**…»: Իսկ արձանագրություններում անվան կրճատ գրված լինելը պատճառ է դարձել թյուրըմբռնման: Մասնավորապես, դրանք հրատարակած Գ. Հովսեփյանը, որը արձանագրությունների մեջ հիշատակված անձանց միջոցով միանգամայն ճիշտ է որոշում գրության ժամանակը՝ 14-րդ դարի կեսեր, այդ անունը կարդացել է «ԱԹՆ» եւ գրում է. «Երկու արձանագրություններն էլ ժամանակակից են իրար, նույն գրչի ձեռքով, նույն Աթանասի առաջնորդության ժամանակ»[97]:

Այն, որ այստեղ «Աթանաս» անուն չի կարող լինել, երեւում է այն բանից, որ երկու դեպքում էլ անվան առաջին երկու տառերը «ՆԱ» (կամ «ԱՆ») գրված են կցագիր, որին հաջորդում է «Թ»-ն: Այսինքն համառոտագրությունը «ԱԹՆ» կարդալու համար պետք է կցագրի մի տառը գրել «Թ»-ից առաջ, մյուսը՝ հետո: Այդպիսի բան կցագրության մեջ չի կիրառվում: Եւ Հավուց թառի վիմագիր գրիչն էլ ընդամենը գրել է Նաթանայելի կրճատ անունը՝ «ՆԱԹ»:

Արձանագրություններից առաջինը վերաբերում է Մանաս Երեւանցու դուստր Բեսուլունի նվիրատվությանը[98], իսկ երկրորդը հետաքրքրական է նրանով, որ սկզբում հիշատակվում են այն մարդիկ, որոնց անուններն առկա են նաեւ Նաթանայելի ստացած ժամանակագրության հիշատակագրություններում: «[Շնոր]հիւն Ա(ստուծո)յ եւ ողորմութ(եամ)ք մեր պ(ա)ր(ոն)ացն [դիտոփալ] Թամարին եւ աթաբակ Շահանշահի, մեք մեղուցեալ ծառայքս մուլահր Ամիր Սարգիս Նորագաւթեցի եւ ամուսին իմ Էրմանի եւ եղբայր իմ Ամիր, միաբանեցաք սրբոցս եւ տվաք յԷրեւան զմեր գանձագին հայրենիք այգին ի ջաղաց… մարծի տեղ ժամաբաժակ եկեղեցեացս: Տ(է)ր Նաթ(անայել) եւ այ[լ միաբան]քս խոս[տացան ի տ]արին Զ (6) պատ(արագ)՝ Բ (2) Ամիր Սարգսին, Բ (2) Էրմանէ, Բ (2) Ամիրին: Կատարիչքն օ(ր)հ(նուին)»[99]:

Այժմ անդրադառնանք Նաթանայելի ձեռք բերած մատյանի[100]՝ Սամվել

97. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 31:

98. «Կամաւն Ա(ստուծո)յ ես Բեսուլունս դուստր Մենասին Երեւանեցի, միաբան սրբոցս, տվի զիմ ձիթենե(ա)ց այգին ԺԵ (15) մրծի տեղ ս(ուր)բ եկեղեցույս (եկեղեցի բառի փոխարեն դրված է սղագրական եկեղեցույս («եկեղեցի» բառի փոխարեն դրված է սղագրական X նշանը, որը երբեմն կիրառվում է ձեռագրերում): Տ(է)ր Նաթ(անայել) եւ միաբանքս գրեցին Զ (6) պատ(արագ) ի տարուջն՝ Դ (4) ինձ, Ա (1) Մէնասին, Ա իմ հանին (նկատի ունի տատին՝ հանկանն), հաստատուն պահողքն ա(ր)հնին» (Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 30):

99. Հմմտ. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 30:

100. Ձեռագիրն ընդօրինակել է Հայրապետ կրոնավորը Արճեշի գավառի Ուռընկար վանքում 1315 թ.: Մատյանը գրված է թղթի վրա (16,5x12 սմ), բոլորգրով: Անեցու Ժամանակագրությունը զբաղեցնում է 2ա-89բ թերթերը: Ամբողջ մատյանն ունի 116 թերթ:



Անեցու ժամանակագրության թերթերի վրա թողած հիշատակագրություններին: Նաթանայել եպիսկոպոսը հավանաբար հալածանքների պատճառով մի որոշ ժամանակ ապաստանել է Անիի մերձակա Մաղասբերդում, իր բարեկամ պարոն Ամիրզայի ընտանիքում: Այս մասին նա գրում է բերդում վեց ամիս մնալուց հետո եւ պատահական չէ, որ հիշատակարանի առաջին բառը ամսանվան հիշատակությունն է՝ «սահմի»: Սա նաեւ ենթադրել է տալիս, որ նա հենց այդ ժամանակ է ձեռք բերել մատյանը եւ հիշատակագրել իր հետ կատարվածը: Հիշատակարանը հետեւյալն է. «ՉՂԲ (1343) սահմի: **Ես նուաստ Նաթ**(անայել) **եպ**(իսկոպոս) **Հայոց թառոյ** յոյժ …ե(ա)լ եւ անմխիթար տրտմե(ա)լ եւ ի լալագին աչա[ւք] …կացի ի Մաղըսբերդ Զ (6) ամիս եւ յԱստուած հաւատարիմ հո[գե]ւոր եղբայրն իմ Ամիրզայն մեծաւ սիրով ընկալաւ զիս եւ քաղցրութեամբ մխիթարեց, Աստուած զինքն մխիթարէ. ամէն»[101]:

Իր հյուրընկալ Ամիրզայի ընտանիքի անդամներին Նաթանայելը հիշատակում է ձեռագրի տարբեր էջերի, ցավոք վատ պահպանված հիշատակագրություններում[102]: Սակայն դրանց մեջ հիշվում են նաեւ Զաքարյան Շահնշահ Գ-ն ու նրա եղբայր Շրվանշահը, ինչպես նաեւ «պարոն Թամարը», ովքեր, ինչպես պարզ դարձավ վերը նշված արձանագրությունից, Հավուց թառի վանքի պարոններն էին: Հիշատակագրություններից մեկից երեւում է, որ այդ ընթացքում բերդը հարձակման է ենթարկվել: Ահավասիկ այդ կարճ եւ հատվածաբար պահպանված տողերը. «Աստուած լոյս արայ խաւարն, որ/// բազում զօրաւք եկն ի վերայ բերդիս **Մաղասայ**///» (92բ): «///աց սրբոցն միջնորդութեամբ ազա[տեա՞] [զՇահ]անշահն ի յանաւրի[նաց] (4ա): «///այ **զպարոն Թամարն** եւ **զՇրվանշահն** ի ձեռա/// եւ ժառանգեցայ զտունս հայրէնի. ամէն» (5ա): «(Քրիստոս) որդի Աստուծոյ, Աստուած ճշմարիտ, սուրբ Աստուածածնիդ միջնորդութեամբ եւ քո ///ած խաչիդ եւ սուրբ Ամենափրկչիդ եւ սուրբ/// (114բ), [զ]Շահան[շ]ահ եւ զՇրվանշահ[14] յանաւրինացն չարեն/// եա եւ հաստատեա///»(115ա):

Շահնշահ Գ-ն Անիում իշխած վերջին Զաքարյան իշխանն էր, իսկ Շրվանշահը՝ նրա եղբայրը: «Բագնայրի ավետարանի» 14-րդ դարի մի հիշատակարանի գրիչը խնդրում է հիշել «…աթապակ **Շահանշահին** եւ եղբաւր

101. Մատենադարան, ձեռ. թիվ 3681, թերթ 83բ-84ա: Մեկ այլ տեղում պահպանվել է հետեւյալը՝ « Ես Ն[աթանայել] /// ստացայ զգիրքս ի յիշա[տակ]///»(91ա):

102. «Քրիստոս Աստուած պահեայ զպարծանաց եղբայրքն զպարոն Ամիրզայն եւ զԹանզութն եւ փրկեայ ի չարեաց» (45բ): «Քրիստոս Աստուած քում արդ բարեխաւսութեամբ/// յարքայութիւնդ հոգեւոր մաւրն իմ Արազ Խաթունին, որ բազում ար[ար]/// զմեզ ///եայ զԱմիրզայն եւ զՄաղազ Խաթ[ունն]» (93բ-94ա): Այս հիշատակագրություններով ուրվագծվում է Ամիրզայի ընտանիքի կազմը: Թանզութը նրա եղբայրն էր, Արազ Խաթունը՝ հավանաբար մայրը, որին Նաթանայելը կարող էր իր հոգեւոր մայրը համարել: Մաղազ Խաթունը պետք է որ Ամիրզայի կինը եղած լինի:

իրոյ պարոն **Շրվանշահի**...»[103]: Հայտնի է, որ Շահնշահ Գ-ը «տաճկաց զորքի» հարձակման պատճառով մազապուրծ փախել է Անիից, ինչպես այդ մասին վկայում է 1357 թ. Անիում գրված մի հիշատակարան[104]: Նույն դեպքերն են ակնարկվում Հովհաննավանքի մի անթվական արձանագրության մեջ: Գրիգորի որդի Ամսայջանը գրում է. «...**պար(ոնաց) ձեռնէ զերկիրս առին**, ես չքաժանեցայ ի ծառայութենէս: Աստուած պարոնացն աջողում էրետ երկիրս էրեկ, Ոհանայվանք ինձ տվին հէրէնիք...», ապա նշում է Հովհանավանքում իր բարեգործությունները՝ «...վասն արեւշատութեան պարոնաց մերոց եւ պարոն **աթապակ Շահանշահի եւ Շրվանշահի**...»[105]: Նաթանայելի մատյանի հիշատակագրություններում կարելի է տեսնել այս նույն դրամատիկ դեպքերի արձագանքը:

Սամվել Անեցու Ժամանակագրության մեջ հավելումները նա հավանորեն կատարել է Հավուց թառ վերադառնալուց հետո, դատելով դրանցում եղած որոշ արտահայտություններից («յառ որ մերն կայ», «ի Հայոց թառոյ, ի յաստ») եւ Ամենափրկիչի հիշատակությունից: Ինչպես երեւում է, հիշատակագրություններում եպիսկոպոսն Աստծո ողորմածությունն է հայցում «պարոն Թամարի, Շահանշահի եւ Շրվանշահի» համար, որպեսզի նրանք ազատվեն անօրեններից եւ տեր դառնան իրենց հայրենի ժառանգությանը:

Ահա այսքանն են մեր տեղեկությունները Նաթանայելի մասին, բայց նա ինքը, ինչպես նշվեց, Հավուց թառի եւ Գառնիի պատմության իրեն հայտնի տվյալներով լրացրել է Սամվել Անեցու ժամանակագրությունը, ասես մի փոքրիկ պատմական տեղեկանք կազմելով:

103. Գ. Յովսեփեան, Յիշատակարանց ձեռագրաց, Անթիլիաս, 1951, էջ 891:

104. Մատենադարան, ձեռ. թիվ 6764, թերթ 264ա, Կ. Մաթեւոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997, էջ 364:

105. Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, Երեւան, 1948, էջ 101:



# ՎԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԵՒ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Հավուց թառի համալիրի գլխավոր եկեղեցիների անունները թեեւ հայտնի են մատենագրական աղբյուրներից, սակայն բուն հուշարձանախմբում դրանց տեղը հստակ որոշված չէ: Հավուց թառի վանքի համալիրն այսօր բաղկացած է իրարից 100, 200 եւ անգամ 500 մետր հեռու գտնվող մի քանի հուշարձանախմբից[106]:

**Առաջինը** եւ գլխավորը պարիսպներով շրջափակված հատվածն է, որի ներսում մի քանի շինություններ կան: Ինչպես երեւում է, 1679 թ. երկրաշարժից այս հատվածը շատ է տուժել եւ կաթողիկոս Աստվածատուր Համադանեցին (1715-1725) նախաձեռնել է ավերված հին եկեղեցու եւ գավիթի քարերով նույն տեղում մի նոր եկեղեցի կառուցել (1721 թ.): «Գմբեթավոր դահլիճ» հորինվածքով կառույցի շինարարությունն սկսվել է, պատերը բարձրացել են շուրջ 3 մետր, սակայն լեզգիների արշավանքի պատճառով, շինարարությունը դադարել է եւ հետագայում չի շարունակվել: Եկեղեցին չի անվանակոչվել եւ գրականության մեջ սովորաբար կոչվում է Աստվածատուր Համադանեցու եկեղեցի:

Այս եկեղեցու հարավային կողմում նախկին քառամույթ ժամատան մի հատվածն է, մեկ զույգ մույթերով: Սրանից հյուսիս-արեւելք՝ պատակից ուղղանկյուն մի փոքր կառույց կա, որի նշանակությունն անորոշ է (ենթադրաբար համարել են դամբարան կամ զանգակատուն): Իսկ պարիսպներին կից հարավ-արեւելքում կառուցված է ընդարձակ սեղանատուն, հյուսիս-արեւելքում՝ վանական խցեր:

**Երկրորդ** հատվածը գլխավոր համալիրի արեւմտյան կողմում է, բլուրի վրա, կենտրոնում ունի 13-րդ դարի սկզբներով թվագրվող եկեղեցի, որի անունը հայտնի չէ եւ գրականության մեջ սովորաբար կոչվում է «բլրի եկեղեցի»: Այն ներքուստ խաչաձեւ, անկյուններում ավանդատներով գմբեթավոր շինություն է, պատերը բազմագույն քարերով: Եկեղեցուն հարավից պատակից է երկու թաղածածկ մատուռ: Շուրջը կան խաչքարեր եւ գերեզմանաքարեր:

**Երրորդ** հատվածը գտնվում է գլխավոր համալիրից շուրջ 200 մ արեւելք, որտեղ կիսականգուն է 1213 թ. կառուցված Ս. Կարապետ մատուռը, իսկ շուրջը կան խաչքարեր ու տապանաքարեր:

Այս հիմնական հատվածներից բացի գերեզմանոցներ են պահպանվել

106. Տե՛ս Գ. Սարգսեան, Վիմագրագիտական..., էջ 230:

գլխավոր համալիրից շուրջ 500 մ հարավ-արեւմուտք եւ 200 մ՝ հարավ-արեւմուտք, ինչպես նաեւ դեպի բլրի եկեղեցի տանող հատվածում: Առանձին խաչքարեր կան նաեւ Գառնիից դեպի վանք տանող ճանապարհի վրա:

Այժմ փորձենք պարզել, թե որոնք են գրավոր աղբյուրներում հիշատակվող եկեղեցիները: Միանգամից նշենք, որ մի շարք գրքերում եւ հրապարակումներում՝ որպես վանքի եկեղեցիներից մեկի անուն կիրառվող Ս. Ամենափրկիչը[107], իրականում եկեղեցու անուն չէ, այլ վերը նշված նշանավոր փայտյա խաչը, որի ճանաչումն այնքան է մեծացել, որ 15-րդ դարի երկրորդ կեսից ամբողջ վանքը կոչվել է Ս. Ամենափրկիչ, սակայն տեղում այդ անունով եկեղեցի չի եղել: Դրա ապացույցներից են այստեղ գրված ձեռագրերի հիշատակարանները: 1214 թ. Իգնատիոսը գրում է. «ի վանքս որ կոչի Հաւու թառ, ընդ հովանեաւ **Սուրբ Կաթողիկեիս եւ մեծահռչակ սուրբ նշանիս՝ Ամենափրկիչ կոչեցեալ**...»[108], այսինքն՝ «Ամենափրկիչը» սուրբ խաչն է: 1297 թ. Գրիգոր գրիչը նշում է.՝ «յաստուածաբնակ ուխտիս Հայոց թառ յորջորջելոյ, ընդ հովանեաւ Կաթողիկէ եկեղեցւոյ Սուրբ Սիոնի եւ աստուածընկալ Սուրբ Անենայփըրկչիս, ի ձեռն սորա բազում սքանչելիք եւ պէս-պէս բժշկութիւնք կատարին»[109]: Այստեղ Կաթողիկեն կոչվում է նաեւ Սուրբ Սիոն անունով, իսկ «Ամենափրկիչը» դարձյալ ոչ թե եկեղեցու անուն է, այլ խաչը, որի միջոցով՝ «ի ձեռն սորա», բազում հրաշքներ ու բժշկություն է կատարվել:

Ժամանակի ընթացքում Ամենափրկչի հռչակն ավելի է մեծանում եւ նրա անունը սկսում են հիշատակել սկզբում, բայց ո՛չ որպես եկեղեցու անուն: 1458 թ. հիշատակարանում նշվում է. «Գրեցաւ... ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչի եւ երկնանման սուրբ խորանաց եւ հրաշափառ սուրբ Կաթողիկէիս եւ լուսոյ մաւր սուրբ Աստուածածնի, եւ սուրբ Աջոյս Թադէոսի Առաքելոյ եւ Սուրբ Յակոբ նշանին...»[110]: Գրիչն այստեղ նախ նշում է վանքի գլխավոր սրբությունը՝ Ամենափրկիչը, այնուհետեւ ակնարկում է, որ հիշելու է եկեղեցիները՝ «երկնանման սուրբ խորանները» եւ թվարկում Կաթողիկեն ու Ս. Աստվածածինը, որից հետո կրկին նշում է մյուս սրբությունները՝ Թադեոս առաքյալի Աջը եւ Սուրբ Հակոբ խաչը:

Արդեն 1464 թ. հիշատակարանում վանականներն իրենց մասին գրում են՝ «զմիաբանքս սուրբ Ամենափրկչիս»[111], այսինքն՝ Ամենափրկիչը հանդես է գալիս որպես վանքի ընդհանուր անուն: Հատկանշական է 1471 թ. Ստեփանոս

107. Տե՛ս, օրինակ, Հայկական սովետական հանրագիտարան, հ. 6, Երեւան, 1980, էջ 270, Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երեւան, 1992, էջ 243 եւ այլն:
108. Հիշատակարաններ, ԺԳ դար, էջ 83:
109. Նույն տեղում, էջ 796:
110. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Բ, էջ 99:
111. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Բ, էջ 214:



գրչի հիշատակարանը, ըստ որի մատյանն ընդօրինակվել է. «ի սուրբ ուխտս Հայոց թառ սուրբ Ամենափրկչիս, որ է պատկեր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»[112]: Գրիչը պարզորոշ նշում է, որ Հավուց թառի ուխտի Ս. Ամենափրկիչ անունը բխում է Քրիստոսի պատկերից (այդ պատկերով խաչից): Նույն թվականին Ստեփանոսը մեկ այլ մատյանի հիշատակարանում կիրառել է նույն ձեւակերպումը, միայն թե թվարկել է նաեւ եկեղեցիները՝ Կաթողիկեն (Ս. Սիոն) եւ Ս. Աստվածածինը. «Ի... սուրբ ուխտս Հայոց թառս, ընդ հովանեաւ սուրբ Ամենափրկչիս, որ է պատկեր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, եւ մաւրս մերոյ՝ Սրբոյ Սիովնի, եւ Սուրբ Աստուածածնի...»[113]:

Իսկ որո՞նք են վանքի այժմ պահպանված եկեղեցիները:

Ինչպես վերեւում տեսանք, Նաթանայել Հավուցթառեցին հիշատակում է Գեւորգ իշխանի 1002 թ. հիմնած Կաթողիկեն՝ «զփառաւոր զհրաշալի **Կաթողիկէն** Թ (9) խորանաւ»: Ձեռագրերի հիշատակարաններում Կաթողիկեն նշվում է որպես վանքի հնագույն կառույց: 13-րդ դ. սկզբի արձանագրություններից մեկում հիշվում է «սրբոյ Կաթողիկէիս»[114] Հովհաննես փակակալը:

Այս եկեղեցու 9 խորան ունենալու մասին վկայությունը, թույլ է տալիսասելու, որ այդպիսի եկեղեցի այժմ Հավուց թառում չկա: Հովհաննավանքի 1216-1221 թթ. կառուցված եկեղեցին, որը տեղի արձանագրության մեջ կոչվում է «Սուրբ Կաթողիկէն Թ (9) խորանաւ»[115], արտաքուստ ուղղանկյուն, ներքուստ խաչաձեւ, չորս անկյուններում երկհարկանի ավանդատներով գմբեթավոր կառույց է: Ինչպես երեւում է, ավագ խորանից բացի, այստեղ պատարագի սեղան են ունեցել նաեւ բոլոր 8 ավանդատները: Հավանորեն նման ճարտարապետական հորինվածք է ունեցել նաեւ Հավուց թառի Կաթողիկեն:

1464 թ. հիշատակարանից իմանում ենք, որ այդ ժամանակ Դանիել վարդապետի հոգածությամբ Կաթողիկե եկեղեցին նորոգվել ու սալահատակվել է («...վերստին կրկին զարդարեաց եւ սալեց եւ նորոգեց...»)[116]: Որ Կաթողիկեն կանգուն էր նաեւ Սիմեոն Ջուղայեցու վանահայրության ժամանակ՝ 17-րդ դարի 40-50-ական թվականներին, երեւում է նրա՝ Հավուց թառին նվիրված դրվատից, որտեղ առաջինը հիշատակում է Կաթողիկեն. «Կաթողիկէս հանդիսարան, հաստակառոյց վիմարդեան»[117]:

Նախորդ շրջանի ուսումնասիրողները փորձել են պարզել, թե որն է Կաթողիկեն: Գ. Հովսեփյանն այն համարել է Գրիգոր Մագիստրոսի կառուցածը եւ նույնացրել Ժամատնից հյուսիս-արեւելք պահպանված ուղղանկյուն շի-

112. Նույն տեղում, էջ 315:
113. Նույն տեղում, էջ 313-315:
114. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 22:
115. Կ. Ղաֆադարյան, Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, էջ 95:
116. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Բ, էջ 214:
117. Ամբողջովին տե՛ս հավելվածում:



*Վանքի պարսպապատ հատվածի հատակագիծը՝ 1. Աստվածատուր Համադանեցու կառուցած անավարտ եկեղեցին, 2. ժամատուն (գավիթ), 3. տապանատուն կամ զանգակատուն, 4. սեղանատուն, 5. միաբանական խցեր:*

նության հետ[118], իսկ նրան հյուսիսից կցված հին պատը՝ Գեւորգ իշխանի կառուցած եկեղեցու պատը: Հ. Եղիազարյանը Կաթողիկե է համարում բլրի եկեղեցին[119]:

Կաթողիկե եկեղեցու տեղը, կարծում ենք, որ ճիշտ է կռահել Գ. Սարգսյանը: Նա ժամատնից հյուսիս-արեւելք պահպանված ուղղանկյուն շինության հյուսիսային պատը համարում է հենց այդ եկեղեցու պատը: Սրա վրա կան արձանագրություններ, որոնք բացվել են ուղղանկյուն շինության հյուսիսային հատվածի փլվելու հետեւանքով: Արձանագրություններից մեկը հետեւյալն է. «Կամաւն Ա(ստուծո)յ Յակոբ Սարկ[աւագ]... տուի արդիւնս ի Ս(ուր)բ Կաթող[իկէս]... սալեցին եւ միաբանքս սահ[մանեց]ին ինձ Ա (1) աւր ժամ...»[120]: Այս արձանագրությունը վկայակոչելով Գ. Սարգսյանն իրավացիորեն եզրակացնում է. «Կարծում ենք, որ այս վկայությունը բավարար հիմք է ընձեռում ճշտելու Հավուց թառի Կաթողիկե եկեղեցու տեղադրությունը, այսինքն՝ Կաթողիկե եկեղեցին ոչ թե Գ. Հովսեփյանի նշած կառույցն է, այլ վերջինիս հյուսիսային կողմում գտնվող շինությունը, որից միայն հարավային պատն է պահպանվել»[121]:

Ավելացնենք, որ **ժամատան** պահպանված հատվածը՝ հարավային երկու մույթերով թույլ է տալիս հատակագծորեն վերականգնելու քառամույթ շինության իրական չափերը եւ ըստ այդմ ճշտելու Կաթողիկե եկեղեցու գրաված դիրքը: Բնական է, որ ժամատունը պետք է կառուցվեր վանքի գլխավոր եկեղեցու՝ Կաթողիկեի դիմաց՝ նրա արեւմտյան կողմում:

Ինչպես երեւում է, 1679 թ. երկրաշարժը հիմնովին ավերել է Կաթողիկեն, որից հետո որոշվել է այն այլեւս չվերականգնել, այլ դրա եւ ժամատան հյուսիսային հատվածում կառուցել ավելի մեծ մի եկեղեցի: 1720-1721 թթ. հիմնականում Կաթողիկեի եւ ժամատան քարերն օգտագործելով սկսել են շինարարությունը, որի հետեւանքով հնագույն եկեղեցու ավերակներն անհետացել են գետնի երեսից, իսկ այն ինչ որ մնացել է, ժամանակի ընթացքում ծածկվել է

118. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 16:
119. Հ. Եղիազարյան, Հավուց թառի վանքը, «Էջմիածին», 1963, Զ, 47-48:
120. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 35:
121. Գ. Սարգսյան, Հաւուց թառի հիմնադրման..., էջ 68:



հողի շերտով: Պահպանվել է միայն Կաթողիկեի հարավային պատը, քանի որ այն պատակից է մեկ այլ կառույցի:

Այսպիսով, կարելի է ասել, որ Գեւորգ իշխանի կառուցած Կաթողիկե եկեղեցու հիմքերը գտնվում են ժամատան արեւելյան կողմում: Սա նշանակում է, որ մաքրման աշխատանքների ու մասնակի պեղումների միջոցով առաջիկայում հնարավոր կլինի հողի տակից դուրս բերել 1002 թվականին կառուցված Հավուց թառի 9 խորանով Կաթողիկե եկեղեցու հիմնապատերը, հավանորեն նաեւ հնագույն վիմագրեր:



*Ժամատան վերականգնման եւ Կաթողիկե եկեղեցու տեղորոշման փորձ*

**Ս. Աստվածածինն** ու **Ս. Հարությունը** առաջին անգամ հիշատակվում են 1423 թ. հիշատակարանում («ի դուռն **Սուրբ Կաթուղիկէին** եւ **Սուրբ Աստուածածնիս** եւ **Սուրբ Յարութեան**...»)[122]: Բայց հնությամբ երկրորդը Ս. Աստվածածինն է, դատելով ինչպես այս, այնպես էլ Սիմեոն Ջուղայեցու դրվատում եկեղեցիների թվարկման հերթականությունից:

1458 թ. հիշատակարանում նշվում են միայն Կաթողիկեն եւ Ս. Աստվածածինը («...հրաշափառ սուրբ Կաթողիկէիս եւ լուսոյ մայր սուրբ Աստուածածնի»)[123], 1543 թ. հիշատակարանում՝ Ամենափրկիչն ու Ս. Աստվածածինը («ի մեծ մենաստանիս Հայու թառա, ընդ հովանեաւ Ամենափրկչիս եւ Սուրբ Աստուածածնիս»)[124]: Այստեղից երեւում է, որ Ս. Աստվածածինը հնությամբ ու նշանակությամբ վանքի երկրորդ եկեղեցին էր: Այն երկրորդն է նշվում նաեւ Սիմեոն Ջուղայեցու դրվատում, բնութագրվելով որպես «**յոյժ գեղեցիկ, ծաղկաց լման**», իսկ դիրքը՝ «**բարձր տեղի**»: Այս տվյալները մեծապես համապատասխանում են «բլրի» եկեղեցուն (պատերն աչքի են ընկնում կարմիր եւ սեւ քարերի գեղեցիկ գունախաղով, դիրքը՝ բարձրադիր է): Սակայն նույն դրվատում Ս. Աստվածածնի մասին ասվածի մեջ տարակուսելի է այն, որ եկեղեցին բնութագրվում է նաեւ «բարձրագումբեթ ու ինն խորան» բառերով: Ինչպես նշվեց, Հավուց թառում ինը խորան է ունեցել այժմ չպահպանված Կաթողիկեն, իսկ «բլրի» եկեղեցին 9 խորան չունի: Հնարավոր է,

122. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Ա, էջ 303:
123. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Բ, էջ 99:
124. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 39:



*«Բլրի» եկեղեցու հատակագիծը (Վ. Սիսոեւ)*

որ ինչ որ բան շփոթված է դրվատում եւ գուցե խնդիրը լուծում գտնի Կաթողիկեի հայտնաբերումից հետո:

**Բլրի եկեղեցին** կառուցված է 13-րդ դարի սկզբներին եւ դատելով արձանագրություններից, ոչ թե մեկ հովանավորի, այլ բազմաթիվ նվիրատու-աջակիցների համատեղ ջանքերով: Օրինակ, ավանդատներից մեկը (հարավարեւելյան), որը տեղում պահպանված արձանագրության մեջ կոչվում է պարզապես մատուռ, կառուցել է Վահրամ Երեւանեցին. «...Ես Վահրամ Երեւանեցի շինեցի զմի մատուռնս յիմ արդար վաստակոց եւ սպասաւորք ս(ուր)բ ուխտիս խաւստացան ինձ տարոջն ԺԲ (12) աւր պատարագ...»[125]: Հարավարեւմտյան ավանդատան մոտ էլ պահպանվել է շինարարության մեկ այլ նպաստավորի անունը՝ «...Ես՝ Վարդս նպաստ եղե շինութեան էկեղեցոյս յիմ արդար վաստակոց, եւ սպասաւորք ս(ուր)բ ուխտիս սահմանեցին Բ (2) աւր ժամ ի տարւոջն տունի քառասնիցն՝ Ա (1) ինձ, Ա (1)՝ ամուսնոյն իմ Թխկա...»[126]:

Եկեղեցու արեւմտյան պատին արձանագրված է. «...Ես Սարգիս Երեւանայ, որդի Մէհեւանա, թոռն Մարեմտրոյ, միաբան եղե ի Ս(ուր)բ ուխտ Հաւու թառա եւ յիմ արդար ստացուածոց ուժանդակ եղե ի շինութի(ւն) եկեղեցույս...»: (Սարգիսն իր եւ կնոջ՝ Բախտուտի համար ստացել է 10 պատարագ): Սրանից ներքեւ գրված է. «Շնորաւքն Ա(ստուծո)յ, ես Մխիթար քահանայ վարդպետ, հրամանաւ Տ(է)ր Գրիգորիս, սալեցի զեկեղեցիս եւ էտու այլ արդիւնք: Ա (1) Աւր ժամ առնեն ինձ եւ ծնողաց իմոց»[127]: Արձանագրությունից ենթադրվել է, որ գուցե Մխիթար քահանան եղած լինի ողջ կառույցի շինարար ճարտարապետը, մանավանդ, որ արձանագրության մեջ կոչվում է «վարդպետ», այսինքն՝ ճարտարապետ: Սակայն կարծում ենք, որ խոսքը միայն սալահատակման մասին է, քանի որ նա դրա դիմաց ստացել է մեկ պատարագ, այն

125. Գ. Սարգսեան, Վիմագրագիտական...., էջ 235: Այրիվանքի գլխավոր եկեղեցու ավանդատներից մեկի արձանագրության համաձայն այն՝ «զխորանս», կառուցել է Վահրամ անունով մեկը, որին Գ. Սարգսյանը նույնացնում է Հավուց թառի Վահրամ Երեւանեցու հետ:

126. Գ. Սարգսեան, Վիմագրագիտական..., էջ 251: Վիմագրի նախկին հրատարակությունների սխալները հմտորեն ուղղել է Գ. Սարգսյանը:

127. Գ. Սարգսեան, Վիմագրագիտական..., էջ 233:



դեպքում, երբ ինչպես վերը տեսանք, ավանդատներից մեկի խորանը կառուցած Վահրամ Երեւանեցին ստացել է 12 պատարագ:

Բլրի եկեղեցու հարավային կողմում գտնվում է մի մատուռ, որի բարավորի վրա եղած շինարարական արձանագրությունն այժմ թերի է պահպանվել, բացակայում է կառուցողի անունը. «...շինեցի զէկեղեցիս եւ էտու խազ եւ այգի յակին նպ... ծաղկոցն լանջովն եւ սպասաւորք Ս(ուր)ք ուխտիս էտուն Զ (6) աւր ժամ՝ Դ (4) ինձ, Ա (1)՝ Լիլիփարա, Ա (1)՝ Աշոտո, կատարիչքն աւրհնին, խափանողքն դատապարտին ի Տ(եառն)է»: Ըստ արձանագրության հրատարակիչ Գ. Սարգսյանի՝ «վկայագրում հիշված անձինք, ամենայն հավանականությամբ շինարար-նվիրատուի ընտանիքի անդամներն են՝ կինը եւ որդին»[128]:

«Բլրի» եկեղեցու եւ այս մատուռի արանքի հատվածում կա եւս մի փոքրիկ մատուռ:

**Ս. Հարությունը** եղել է գերեզմանոց եկեղեցի: Այստեղ է թաղված եղել Հովսեփ նոր վկան: Մեջբերենք Սիմեոն Ջուղայեցու դրվատի Ս. Հարությանը վերաբերող հատվածը.

«Եկեղեցիք պայծառ ծագման,
Սուրբ Յարութեան կոչի անուան,
Յովսէփ ընտրեալ սուրբ զաւրական
Նորին նշխարք ի յանդ եդան,
Եւ այլ խորանք գաւին զեռման,
Շուրջ զնովաւ հաստատեցան,
Նշանք բազում տերունական,
Յոյժ գեղեցիկ ծաղկանց նման
Կան հաստատուն անդ միաբան»:

Փաստորեն այս եկեղեցու շուրջը եղել են այլ մատուռներ (այլ խորանք) եւ բազմաթիվ խաչքարեր («նշանք բազում տերունական»): Սիմեոն Երեւանցու խոսքից երեւում է, որ այն բարձր դիրք ուներ: Խոսելով վանքի մոտակա մի պարտեզի մասին, նա նշում է, որ այն գտնվում էր «Սուրբ Հարություն եկեղեցու ներքեւում»: Դժվարանում ենք ասել, թե այժմ կանգուն մատուռներից որ մեկն է Ս. Հարությունը:

Հավուց թառի վանքի չպահպանված շինություններից է **զանգակատունը**, որը գուցե առանձին կանգնած շինություն է եղել: Սիմեոն Ջուղայեցու դրվատում այն հիշվում է հետեւյալ կերպ.

128. Նույն տեղում, էջ 237-238:

«Զանկակատուն որ ի յորջման,
Բարձրագումբէք երկնից նման…»:

Թե իրականում քանի եկեղեցի ու մատուռ է եղել Հավուց թառում, դժվար է ասել: Սակայն Սիմեոն Ջուղայեցու դրվատում պահպանվել է մի հետաքրքրական վկայություն խորանների թվի վերաբերյալ՝

«Ի սուրբ ուխտիս ընդանրական
Խ (40) սեղան ի սայ եդան,
Որ Քրիստոսի է զենարարան»:

Այսինքն, ըստ հեղինակի, վանքում կար պատարագ մատուցող 40 խորան: Պետք է ասել, որ պատարագի սեղանով խորանների բազմաքանակությունը միջնադարում նախ եկամուտի աղբյուր էր վանքի համար, քանի որ կիրակի օրերին ամեն մի խորանում միայն մեկ պատարագ կարող էր մատուցվել որեւէ նվիրատուի համար: Իսկ 40 խորանը մի առանձին իմաստ էր ստանում կապված այդ թվի խորհրդաբանական նշանակության հետ: Ուշ միջնադարյան մի աղբյուրում, օրինակ, Անիի մերձակա Հոռոմոսի վանքում, որը նաեւ Բագրատունի թագավորների դամբարանավայրն էր, նշվում է քառասուն խորան. «…կան բազում եկեղեցիք՝ Խ (40) խորան է, Խ (40) պատարագ կու լինի աւուրն»[129]: Թովմա Վանանդացին (17-րդ դ.) Հայաստանի վանքերին նվիրված իր չափածո գրվածքում քառասուն խորան է հիշատակում Սանահինում եւ Կեչառիսում[130]: Իսկ Վանա լճի հարավային ափից ոչ հեռու գտնվող Իլիի վանքը, որը 930-ական թվականներին կառուցել է Գագիկ Արծրունի թագավորը եւ դարձրել կաթողիկոսանիստ, կոչվել է նաեւ «Քառասուն խորան Ս. Աստվածածին վանք»: Ըստ էության Անիի 1000 կամ 1001 եկեղեցիների մասին տարբեր աղբյուրների հիշատակությունները նույնպես վերաբերում են խորանների թվին[131]:

Ինչեւէ, կարծում ենք, որ Հավուց թառի վանական համալիրի հետագա ուսումնասիրությունը ճշտումներ կմտցնի եկեղեցիների տեղորոշման մեջ:

129. Մատենադարան, ձեռ. թիվ 8100, թերթ 254բ:
130. Տե՛ս «Ճռաքաղ», Մոսկվա, 1860, էջ 122, 136:
131. Այս մասին հանգամանորեն տե՛ս Կ. Մաթեւոսյան, Անի, էջ 177-188:



# ԳԵՏՈՑ ՎԱՆՔԸ

Ինչպես վերեւում տեսանք, Գետոց վանքը Նաթանայելի մատյանում հիշատակվում է որպես Հավուց թառի վանքին ենթակա առանձին միավոր, որի հիմնադիրը Սահակ Պարթեւն էր: Գետոց վանք տեղանունը երկիցս հիշվում է միայն այս աղբյուրում (այն չի հիշատակվում որեւէ բառարանում):

Փորձենք պարզել, թե ո՞րն է այդ վանքը:

Հավուց թառի Կաթողիկե եկեղեցու կառուցումից շուրջ մեկ դար առաջ, 906 թ. Տաթեւի վանքի Պողոս-Պետրոս եկեղեցու մեծ հանդեսով տեղի ունեցած օծման ժամանակ, Հայոց Սմբատ Ա Բագրատունի (890-914) թագավորը վանքին է նվիրել իրեն պատկանած մի ավան Արեւիք գավառում (Մեղրի), մի գյուղ Սոթքում եւ, ինչպես պատմիչ Ստեփանոս Օրբելյանն է վկայում՝ «ի Գառնոյ ձորի զԳոտող վանս»[132]: Ստեփանոս Օրբելյանի Սյունիքի պատմությունն աշխարհաբար թարգմանած Ա. Ա. Աբրահամյանը վանքի անվան մասին գրում է. «Գառնու ձորի Գոտող (կամ Գոտոզ) վանքը միայն հիշատակվում է այստեղ: Անորոշ է, թե այդտեղի մեզ հայտնի ո՞ր վանքն էր»[133]:

Կարծում ենք, որ Նաթանայելի հիշատակած Գետոց վանքը եւ Օրբելյանի մոտ նշված Գառնու ձորի Գոտող վանքը՝ նույնն են, միայն թե անունը Սյունյաց պատմության բնագրում ինչ-որ պատճառով եղծվել է: Վանքի անվան սխալ գրությունը՝ երկրորդ եւ վերջին տառերի եղծված լինելու հետեւանքով, կարող էր առաջանալ երկու տեղում, կամ թագավորական ընծայագրում, որը՝ «գրեալ ի վերայ մագաղաթի»[134], Ստեփանոս Օրբելյանի ձեռքն անցնելու ժամանակ արդեն 300 տարվա հնություն ուներ, կամ հենց նրա երկն ընդօրինակողների թերացման պատճառով: Օրբելյանի պատմության մեզ հասած հնագույն ընդօրինակության մեջ (հավանաբար 14-րդ դար), վանքի անունը «Գոտոզ» է (Մատենադարան, ձեռ. թիվ 6271, թերթ 158բ): Քանի որ այլ ձեռագրերում (որոնց հիման վրա կատարվել են հրատարակությունները) այն «Գոտող» է, թվում է, որ հեղինակային բնագրում անունն իրոք եղծված է եղել, որի պատճառով առաջացել է վերջին տառի տարընթերցումը:

132. Ստեփանոս Օրբէլեան, էջ 229:
133. Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երեւան, 1986, էջ 470: Տեղանունների բառարանը «Գոտողը» համարում է Գողթ գյուղի հին անունը, որն անհամոզիչ է (Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Ստ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, Երեւան, 1986, էջ 950): Նաթանայել Հավուցթառեցին Գողթը հիշատակում է Կոխթ անունով, որն այս բնակավայրի հնագույն մատենագրական հիշատակությունն է:
134. Ստեփանոս Օրբէլեան, էջ 228:

Բայց Գետոց վանքը կամ այդ անունն ստացած բնակավայրը բավական երկար կյանք է ունեցել եւ հիշատակվում է նաեւ 15-րդ դարի (1489 թ.) պարսկերեն մի կալվածագրում: Ժամանակին այդ կալվածագիրը վկայաբերելով Սիմեոն Երեւանցին «Ջամբռում» տեղանունը գրում է «Կուտուց վանք» ձեւով: Հավանաբար Երեւանցու այս տառադարձությունը ազդել է նաեւ պարսկերեն կալվածագրի թարգմանության վրա, որի հրատարակության հայերեն հատվածում նշվում է «Կուտուց վանք», իսկ պարսկերեն բնագրում կարդացվում է «Քդուզ վանք»[135]: Շատ հավանական է, որ բոլոր թվարկված դեպքում խոսքը նույն տեղանվան մասին է, քանի որ այն գտնվում է միեւնույն տարածքում, բուն անվանումն էլ ուրիշ մեկի հետ չի շփոթվի, քանի որ երկմասյա է՝ Գետոց վանք, Գոտոզ վանք, Քդուզ վանք կամ Կուտուց վանք: Պարսկերեն կալվածագրում նշվում է նաեւ այդ անունով ագարակի տեղը. «Կուտուց-վանքի ագարակը գտնվում է Դարաղքիլանում, որի սահմանները հասնում են մինչեւ գետախառնուրդ եւ Սուր[բ Սարգիս] եւ Դրուսանկ եւ Շիկաքարին»[136]:

Սիմեոն Երեւանցին է՛լ ավելի կոնկրետ նշում ունի «Ջամբռում»: Հավուց թառի մուլքատու գյուղերը թվարկելիս նա գրում է. «Կուտուց վանք, որը նաեւ Թարաքյամի գյուղ է կոչվում»[137]: Իսկ թարգմանիչ Վ. Համբարձումյանն էլ ծանոթագրում է. «Կուտուցվանք – Թարաքյամի գյուղը (թրք. Թարաքյամալար) գտնվում էր Ազատի եւ Քեղոձորի ջրկցից ոչ շատ հեռու՝ Գառնի գյուղաքաղաքից շուրջ 2, 5 կմ հարավ (խորհրդային շրջանում վերանվանվել էր Բլրաշեն)»[138]: Սակայն ըստ տեղանունների բառարանի Բլրաշենի հին, օտարալեզու անունը՝ Ալիկրաղի կամ Ալիղրաղի է[139] եւ այն կապ չունի Թարաքյամի գյուղանվան հետ: Այդ լքված գյուղատեղին իրոք գտնվում է Ազատ գետի եւ Գեղարդի կողմից եկող Գողթ վտակի խառնման վայրի մոտերքում, որով էլ թերեւս բացատրվում է «Գետոց» (գետերի) անվան ծագումը: Կարծում ենք, որ այս տարածքի հնագիտական զննությամբ հնարավոր կլինի գտնել Հայաստանի հնագույն եկեղեցիներից մեկի հետքերը:

135. Մատենադարանի պարսկական վավերագրերը, կալվածագրեր, պր. Ա, կազմեց Հ. Փափազյան, Երեւան, 1968, էջ 83, 84, պարսկերենը՝ էջ 447:

136. Նույն տեղում, էջ 48: Հայերեն թարգմանության մեջ «Դարաղքիլանում»-ի փոխարեն գրված է «Գիլանի ձորում», գետախառնուրդը գրված է մեծատառով, որպես հատուկ անուն:

137. «Ջամբռ», էջ 387:

138. Նույն տեղում, էջ 497:

139. Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Ստ. Բարսեղյան, Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. Ա, էջ 703:



# ՎԻՄԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հայոց միջնադարյան վանքերի վիմագրերը դրանց քարագիր տարեգրությունն են եւ ամենատարբեր տեղեկությունների անգնահատելի աղբյուր: Բացառություն չեն նաեւ Հավուց թառի վիմագրերը, որոնք ուսումնասիրվել են տարբեր հետազոտողների կողմից, սակայն ցայժմ ամբողջական հրատարակության չեն արժանացել: Դրանց մեկտեղումն ու հրատարակությունն առաջիկայի գործ է (մանավանդ, որ վանքի փլատակների մաքրման եւ պեղումների շնորհիվ, անկասկած նոր արձանագրություններ կհայտնաբերվեն), եւ վստահաբար կիրականացվի հմուտ վիմագրագետ Գագիկ Սարգսյանի կողմից, որը տարիներ ի վեր զբաղվում է այդ նյութի ուսումնասիրության ու ամբողջացման գործով:

Ստորեւ համառոտաբար կներկայացնենք հրատարակված վիմագրերի պարունակած հիմնական տեղեկությունները: Ցավոք Կաթողիկե եկեղեցու կառուցման ժամանակից վիմագրեր չեն պահպանվել, սակայն Նաթանայելի հայտնած տեղեկության հատկապես նվիրատվությունների հատվածը, վիմագրական ոճ ունի, եւ չի բացառվում, որ քաղվել է ժամանակին գոյություն ունեցած արձանագրությունից: Հնարավոր է նաեւ, որ վանքում եղել է 1013 թվակիր մի արձանագրություն, բայց, ինչպես վերեւում տեսանք, նրա ստեղծման եւ ժամանակի հետ կապված հանգամանքները մշուշապատ են:

Հակիրճ անդրադառնանք այն արձանագրություններին, որոնք պահպանվել են ու հասել մեր օրերը: Դրանցից վաղագույնը 1081 թ. վերը հիշված խաչքարի՝ Սմբատի որդի Հասանի արձանագրությունն է, որն, ինչպես նշեցինք, հավանորեն պատկանում է Գեւորգ իշխանի հետնորդներին: Վանքի արձանագրությունների մեծ մասը **նվիրատվական** բնույթ ունեն (մի քանի շինարարական վիմագրերը ներկայացրեցինք վերեւում): Նվիրատվությունների դիմաց միաբանները պատարագ են մատուցել, ընդ որում մեկ պատարագի համար անհրաժեշտ է եղել վճարել 20 դահեկան կամ դրան համարժեք այլ գույք (առավել հաճախ՝ այգի): Նվիրատվությամբ վճարման այս նույն չափն է գործել նաեւ Հավուց թառի մերձակա վանքերում՝ Գեղարդում, Աղջոց վանքում եւ Վանստանում[140]: Որոշ դեպքերում նվիրատվությունն ավելի մեծ է:

Հավուց թառի նվիրատվական արձանագրություններում հազվադեպ է

140. Գ. Հովսեփեան, Խաղբակեանք կամ Պռոշեանք..., էջ 319-327, Լ. Զաքարյան, նշվ. աշխ., էջ 124-130, A. Kalantar, The Mediaval inscriptions of Vanstan. Armenia, Neuchatel-Paris, 1999, p. 41:

նշվում վանահոր անունը, սովորաբար օգտագործվում են «սպասաւորք Սուրբ Ուխտիս», «եղբարքս» կամ «վարդապետք եւ միաբանքս» ձեւակերպումները: «Բլրի» եկեղեցու մի վիմագրի համաձայն Գրիգոր «կատեպանը» նվիրել է 40 դահեկան եւ ստացել 2 ժամ պատարագ, իսկ եկեղեցու հյուսիսային պատին Քեղի բերդի բնակիչ Վարդանի անունից գրված է հետեւյալ արձանագրությունը. «Ես՝ Վարդան Քեղէցի, որդի Հազարշահիս էտու ի Ս(ուր)բ Ուխտս Ի (20) դահեկան, եղբարքս սահմանեցին ինձ Ա (1) աւր պատարագել զՔ(րիստո)ս»[141]:

Կաթողիկեի պահպանված միակ պատի 1307 թ. արձանագրության մեջ Սարգսի որդի Հովհաննես Անեցին նշում է, որ 80 դահեկան է տվել իր տապանատանը եւ ստացել ամեն տարի 3 օր պատարագ Զատկի տոնին. «Ես՝ Յովանէս Անէցի, որդի Սարգսի միաբան Ս(ուր)բ ուխտիս էտու Չ (80) դ(ա)հ(եկան) յիմ տապանատունս եւ սպասաւորք գրէցին յամէն ամ՝ Գ (3) աւր պատարագել զՔ(րիստո)ս՝ Զատկին, կատարիչքն աւրհնին ի Տ(եառն)է, ով խափանէ՝ մեր մեղացն տէր է առաջի Ա(ստուծո)յ»[142]:

Հավուց թառի 12-րդ դարի վերջի եւ 13-րդ դարի սկզբի ազնվազարմ նվիրատուներից են Տիկնացտիկինը[143] եւ նրա որդի պարոն Կուկորը: Ժամատան խոյակներից մեկի արձանագրության սկզբում նշվում է՝ «ես Տիկնացտիկին եւ հայր իմ եւ մայր իմ Սարգիս եւ Ամէնտիկին, միաբանք Ս(ուր)բ Ուխտիս…»: Նվիրատուն ստացել է 3 պատարագ: Հետաքրքրական է, որ Տիկնացտիկինը (որպես Կուկորի մայր) հիշատակվում է նաեւ Կեչառիսի մի արձանագրությա մեջ: Ինքը՝ Կուկորը, հանդես է եկել առանձին նվիրատվությամբ, որտեղ իրեն կոչում է «անարժան ծառա Ամէնափրկչին», եւ ստացել երեք պատարագ՝ իր, մոր եւ կնոջ՝ Մահանի համար[144]: Բլրի եկեղեցու մոտ պահպանվել է նաեւ «պարոն Կուկորի» 1246 թվակիր տապանաքարը[145]:

Հավուց թառի եւ Աղջոց Ս. Ստեփանոս վանքի արձանագրություններում հիշվում է Հավուց թառի պաշտոնյա Գրիգոր շպետը: Առաջինում ասվում է՝ «Անուամբն Ա(ստուծո)յ ես՝ Գրիգոր շպետ, ծառայեցի զեկեղեցիս եւ ետու զաւրդիւնս իմ եւ սպասաւորքս ինձ Գ (3) աւր ժամ գրէցին…»[146]: Իսկ Աղջոց վանքի արձանագրության մեջ՝ «Ես՝ Գրիգոր շպետս Հաւուց թառոյ, միաբանեցա Ս(ուր)բ Ստեփան(ոսի եւ ետու) Խ (40) դահեկան եւ առի Բ (2) աւր պա-

141. Գ. Սարգսեան, Վիմագրագիտական…, էջ 235:
142. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 34:
143. Տիկնացտիկին անձնանվան հնագույն հիշատակությունը պահպանվել է Տեկորի 1042 թ. արձանագրության մեջ: Վերջինս Գրիգոր Ապիրատի դուստրն էր եւ Վեստ Սարգսի կինը:
144. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 25:
145. Նույն տեղում, էջ 17:
146. Նույն տեղում, էջ 27:



տարագ յիմ անուն»[147]: Ինչպես տեսնում ենք, այստեղ Գրիգոր շպետի խոսքը տնտեսական գործարք է հիշեցնում (տվեցի եւ առա): Պաշտոնը, որը նա ունեցել է, ըստ Գ. Հովսեփյանի՝ «հովիվ» է[148] («շպետ» փոխառյալ բառի իմաստն է այդպիսին), ըստ Ս. Ավագյանի բառը տվյալ դեպքում օգտագործված է «փոխաբերական իմաստով՝ իբրեւ Հավուց թառի վանքի հոգեւոր հովիվ, քահանա կամ վանքի առաջնորդ, վանահայր»[149]: Բայց թվում է, որ Գրիգորն ինքը թողել է խնդրի լուծման բանալին: Հավուց թառի նույն ժամանակի մի վիմագրում կարդում ենք՝ «Ես՝ Գրիգոր տնտես, էտու զիմ հոգոց պահուստն ի Ս(ուր)բ Ուխտս եւ սպասաւորք ետուն Ա (1) պատարագ ամի-ամի»[150]: Տնտեսը վանքապատկան ունեցվածքի կառավարիչն էր: Հնարավոր է, որ այս նույն Գրիգոր տնտեսն է նախորդ արձանագրություններում իրեն կոչում Գրիգոր շպետ: Բանն այն է, որ այս բոլոր արձանագրություններում նա պատարագներ է ստացել միայն իր համար (ազգականներ չի նշում), իսկ անունը հիշատակում է նույն «կաղապարով»: Միաժամանակ երեւում է, որ Գրիգոր շպետը սովորական հովիվ չէ, բայց նաեւ Հավուց թառի վանահայրը չէ, քանի որ այդ դեպքում դժվար թե նվիրատվություն կատարեր հարեւան վանքին (այդպիսի նախադեպ, կարծես թե վիմագրերում չի հանդիպում): Հնարավոր ենք համարում, որ երեք արձանագրության մեջ էլ նույն Գրիգորն է հիշատակված, որն իր պաշտոնը նշել է «շպետ», իսկ ժամանակագրորեն վերջին վիմագրում, երբ, դատելով տեքստից, առաջացած տարիքում էր՝ «տնտես»:

13-րդ դարի առաջին կեսի հոգեւորական նվիրատուներից է Մխիթար վարդապետը, որը քրոջ՝ Թամարի հետ նվիրել է «Սեւահող» անունով, կամ այդ դաշտամասում գտնվող իրենց այգին եւ ստացել 7 պատարագ[151]: Նվիրատու՝ «Տէր Ներսէս Չարաբերդո, քվերորդի տէր Սարգսի» նվիրել է 140 դահեկան, ստացել 4 «աւր ժամ» պատարագ[152]: Տեր Սարգիսը հավանաբար Հավուց թառի վանահայրն է կամ միաբաններից:

Այլ վիմագրերի մեջ հիշվում են բազմաթիվ նվիրատուներ. Սարգսի որդի Գրիգոր քահանա Գոնթնոնցը նվիրել է «այգի եւ խաչ եւ այլ արդիւնք»[153], ստացել չորս պատարագ, Ամենադեկ անունով մեկը տվել է «սակաւ ար-

147. Լ. Զաքարյան, նշվ. աշխ, էջ 128:
148. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 26:
149. Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երեւան, 1978, էջ 260:
150. Գ. Սարգսեան, Վիմագրագիտական…, էջ 235:
151. «Եւ ես Մխիթար վ(ար)դ(ապետ) եւ քոյր իմ Թամար, որ զմեր այգին տուաք՝ զՍեւահողն, եւ ժամ գրեցին՝ Բ (2) ինձ, Բ (2) Թամարին, Բ (2) Սաթարին, Ա (1) իմ հաւրն եւ մաւրն» (Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 24):
152. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 33:
153. Նույն տեղում, էջ 31:

դիւնք», ստացել մեկ պատարագ[154], ինչպես որ Հովհաննեսի որդի Ներսեսը, ոմն Շիրիկ եւ մեկ ուրիշը՝ Խուցիկ անունով[155]: Հովսեփ (Յուսեփ) Գայլկոնցը տվել է «դարպասի խաչի» այգու իր բաժինը եւ ստացել երեք պատարագ իր եւ ազգականների համար[156], Գրիգորի որդի Շրուիկը տվել է 80 դահեկան՝ ստացել 3 պատարագ[157]: Կունդիկն ու նրա կին Մամքանն ինչ որ գույք են նվիրել («տվաք զինչս») եւ երկու պատարագ ստացել[158]:

Եղիա «Աւղասենց» անունով նվիրատուն տվել է «Վարդկենց» եւ «Աւձկենց» հողերի իր բաժնեմասը, նաեւ մեկ վեցկի՝ վեց եզներով ու 50 դահեկան, ստացել 6 պատարագ[159]: Հիշված հողերը, կամ դրանցում՝ երկու բաժին՝ 14-րդ դարում վանքին է նվիրել Ստեփանոս Հովհաննիսյանց անուն-տոհմանունով նվիրատուն՝ «Ես՝ Ստէփանոս Յոհանիսեանց ետու զերկու հողն ի վանս՝ զՎարդենց եւ Աւձակենց…»[160]:

1293 թ. Գերք (Գեւորգ) եւ Շաքար ամուսինները վանքին են նվիրել 1000 սպիտակ (արծաթ) դրամով Տանծոլանջ դաշտամասում գնված Շիկի նորատունկ այգին[161], իսկ մեկ այլ արձանագրության վկայությամբ նույն Տանծոլանջ վայրում գտնվող 1500 սպիտակով գնած այգին վանքին է նվիրել Մլքան խաթունը, Ավագ պարոնի կինը[162]:

Բավական թվով արձանագրություններ են պահպանվել վանքի ու մերձակայքի խաչքարերի եւ դրանց պատվանդանների, ինչպես նաեւ տապանաքարերի վրա: 15-րդ դարի երկրորդ կեսին վանքում հիշվում են խաչքարագործ վարպետներ Սարգիս աբեղան, Աստվածատուր վարդապետը, Փիրոզ եւ Դավիթ կազմողները[163]: Իսկ ընդհանրապես, Հավուց թառը հայ խաչքարագործական արվեստի նշանակալից գործեր պահպանած վայրերից է:

154. Նույն տեղում, էջ 33:
155. Նույն տեղում, էջ 32-35:
156. Նույն տեղում, էջ 31:
157. Նույն տեղում, էջ 33:
158. Նույն տեղում, էջ 31:
159. Գ. Սարգսեան, Վիմագրագիտական…, էջ 241:
160. Նույն տեղում, էջ 251:
161. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 26, Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 314:
162. Գ. Սարգսեան, Վիմագրագիտական…, էջ 239:
163. Հ. Պետրոսյան, Խաչքար, էջ 203:



# ՀԱՎՈՒՑ ԹԱՌ - ԵՐԵՎԱՆ

Քաղաքամայր Երեւանի պատմությունը թեեւ ուսումնասիրված է, սակայն քաղաքի հոգեւոր եկեղեցական կյանքի հարցերը խորհրդային շրջանում մեծ մասամբ անտեսված են եղել, ուստի պատահական չէ, որ Հավուց թառի եւ հնում գյուղաքաղաք Երեւանի կապի մասին այդ շրջանի հրատարակություններում հնարավոր չէ որեւէ բան գտնել: Այս հանգամանքը նկատի ունենալով կներկայացնենք Երեւանի պատմության մեջ Հավուց թառի ունեցած դերը, որը նշանակալից է եղել հատկապես 17-րդ դարում:

Երեւան գյուղաքաղաքի եւ Հավուց թառի առնչությունների մասին կարելի է խոսել սկսած 11-րդ դարից: Մխիթար Այրիվանեցին նշում է, որ Ապիրատ իշխանը. «…**շինեաց զԿեչառուս եւ եհան զառուն Երեւանայ**»[164]: Փաստորեն, Հավուց թառի հովանավոր Գեւորգ իշխանի եղբայրը Երեւանի համար ջրանցք է անցկացրել: Այս տեղեկության հիման վրա ուսումնասիրողները Երեւանը համարել են Գրիգոր Ապիրատի տիրույթը[165], այսինքն՝ գյուղաքաղաքն ու վանքը պատկանել են նույն իշխանական տանը:

Հաջորդ առնչության մասին տեղեկացնում է Նաթանայել եպիսկոպոսը, բայց ցավոք նրա մատյանի այդ մասի մաշվածության պատճառով հատվածը դժվար ընթեռնելի է: Այդտեղ խոսվում է 11-րդ դարի սկզբին Ամենափրկիչ ու Տերունական խաչերի Հայաստան բերվելու եւ ըստ երեւույթին՝ դրանք Երեւան գեղաքաղաքում հանդեսով անցկացնելու, մասին: Հստակ կարդացվում են «յԵրեւան գեղա[ք]աղաքն» բառերը, բայց ամբողջական իմաստը պարզ չէ (տեքստը տե՛ս հավելվածում):

Ինչպես վերեւում նշվեց, 13-րդ դարի սկզբներին Հավուց թառի բլրի եկեղեցու կառուցմանն օժանդակել են Վահրամ եւ Սարգիս Երեւանեցիները, իսկ 14-րդ դարի կեսերին՝ Նաթանայելի վանահայրության ժամանակ, վանքին նվիրատվություն է կատարել Մենաս Երեւանցու դուստրը: Վանքում հիշատակվում է նաեւ ծաղկող Խաչատուր քահանա Երեւանցին:

Առաքել Դավրիժեցին Հավուց թառի Համազասպ Բ եպիսկոպոսին (հիշվում է 1609-1624 թթ.) կոչում է. «**Հաւուց թառայ վանացն եւ Երեւան քաղաքի առաջնորդ**»[166]: Ըստ նույն պատմիչի երեւանցիները կաթողիկոս Փիլիպոս Աղբակեցուն (1622-1655) խնդրում են, որ Սիմեոն Ջուղայեցի վարդապետին

164. Մխիթար Այրիվանեցի, էջ 58:
165. Թ. Հակոբյան, Երեւանի պատմությունը, Երեւան, 1969, էջ 212-213:
166. Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Երեւան, 1990, էջ 248 (այսուհետեւ՝ Առաքել Դաւրիժեցի):

նշանակի Երեւանի առաջնորդ, եւ կաթողիկոսն ընդառաջում է նրանց՝ վարդապետին կարգելով Հավուց թառի վանահայր (քանի որ այդ պաշտոնում եղողը նաեւ Երեւանի առաջնորդն էր)։ Դավրիժեցին գրում է. «Երեւան քաղաքի քահանաներին ու ժողովրդին չափազանց դուր եկան սրա (Սիմեոն Ջուղայեցու – Կ. Մ.) բարքն ու բնավորությունը, որովհետեւ չափազանց մեղմ, հեզասիրտ, աննյութասեր բարք ուներ։ Եկան Փիլիպոս կաթողիկոսի մոտ եւ մեծ թախանձանքով խնդրեցին, որ նրան իրենց առաջնորդ նշանակի։ Կաթողիկոսն ըստ նրանց խնդրանքի այդպես արեց, ուղարկեց նրան վանքը, որ Գառնիի գավառում էր՝ Ամենափրկիչ անունով, որը կոչվում է նաեւ Հավուց Թառ»[167]։

1655 թ. Երեւանում գրիչ Մկրտիչը հիշատակարանում նշում է, որ գրել է. «վերադիտողութեան մերոյ գաւառի տեառն Սիմէօնի…, որ նստի ի սբ. մենաստանն Ամենափրկիչ՝ ի Ճորն Գառնւոյ»[168]։ 1658 թ. Երեւանում գրված հիշատակարանում նշվում է Հավուց թառի եւ Երեւանի առաջնորդն էր Հովհաննես եպիսկոպոսը՝ «Գրեալ եղեւ սա… ի **Երեւան** ի… **մերոյս առաջնորդի Ամենափրկչի, որ Հաւուց թառ կոչի**, տեառն Յովհաննիսի…»[169]։

Ս. Էջմիածնի «Նուիրակութեան վիճակները» 1765 թվականի պաշտոնական փաստաթղթում որպես Հավուց թառի Ամենափրկիչի եկեղեցապատկան վիճակ արձանագրված է՝ «**Երեւան քաղաքն՝ Կոնդովն եւ Նորագիւղովն, Շընգաւիթ, Ջրվէզ, Գառնի, Կոխտ, Հայոց թառ**»[170]։ Ցանկի վերջում նշվածն այդ անունով գյուղն է, իսկ մյուս բնակավայրերը հանրահայտ են։ Գառնիից եւ Գողթից բացի մյուսներն այսօր Երեւան քաղաքի թաղամասեր են։

Նույն բանը վկայվում է Սիմեոն Երեւանցին՝ «Այս վանքը մեր երկրում ունի առանձին թեմ ու վիճակ՝ **Երեւան քաղաքը, Կոնդը, Նորագյուղը, Շենգավիթը**, **Ջրվեզը, Գառնի գյուղաքաղաքը, Գողթը եւ Հայոց թառը**»։ Վանքը Երեւանում ունեցել է նաեւ բազմաթիվ սեփական տներ ու այգիներ, որոնք հստակ տեղանշվում են «Զամբռում»։

Ս. Էջմիածնի «Արարատ» ամսագրի 1871 թ. 6-րդ համարում տպված «Ամենափրկիչ մենաստան ի Հայոց թառ» վերնագրված անստորագիր հոդվածի հեղինակը վանքի փառավոր անցյալի մասին խոսքը եզրափակելով գրում է. «պատշաճ կհամարիմ հաւելուլ, զի երբեմն Երեւանայ վիճակին Առաջնորդ կը բնակէր այս վանուցս մէջ, որ խիստ պատուաւոր կը համարուէր, մինչեւ անգամ, երբ նորա Առաջնորդը կը գայր ի Ս. Էջմիածին, զանգակները կը հնչեցնէին»։ Այնուհետեւ հեղինակն իր ապրած ժամանակ վանքի տխուր վիճակը

167. Առաքել Դավրիժեցի, Պատմություն, թարգմ., առաջաբանը եւ ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երեւան, 1988, էջ 318։
168. Հիշատակարաններ, ԺԷ, հ. Գ, էջ 681։
169. Նույն տեղում, էջ 810։
170. Ա. Այվազյան, Հայոց Եկեղեցին 18-րդ դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, Երեւան, 2003, էջ 253։



նկարագրելով, օրինակ է բերում Հառիճը, որը վերանորոգվել է Ալեքսանդրապոլի հայրենասեր երիտասարդների ստեղծած ընկերության ջանքերով եւ այնտեղ դպրոց հիմնադրվել, եւ նշում՝ «երանի թե» երեւանցի ազգասերներն էլ միավորվեն եւ Հավուց թառը նորոգելով այնտեղ մի դպրոց հիմնեն. «Ոցի՜ւ թէ՝ Հառիճոյ վանուց վերայ գտնուած Աղեքանդրուպօլցի բարեսէր ազգայիններէ ջանիւք… կազմուած ընկերութեան նման մի ընկերութիւն կազմելով Երեւանայ ազգայինք մեր՝ զարդարէին սոյն Ամենափրկիչ վանս եւ հիմնէին անդ մի հոգեւոր ուսումնարան…»[171]։ Այն ժամանակ, ցավոք, այդ կոչը լսող չեղավ։ Բայց կարծում ենք, այժմ ժամանակն է, որ երբեմնի մեծահամբավ վանքը պատշաճ ուշադրության արժանանա՝ հատկապես երեւանցիներից։

171. «Արարատ», 1871, թիվ Զ, էջ 331։

# ՊԱՏՄԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ

Հավուց թառի պատմության մի շարք փաստեր ու դրվագները ստորեւ ներկայացնում ենք համառոտաբար, առանց մանրամասների մեջ խորանալու:

Նաթանայել Հավուցթառեցին հայտնում է, որ Հավուց թառում է թաղել 701 թ. Դվինում նահատակված Դավիթ Դվնեցու գլուխը (գանգը)[172]:

Վանքի 12-րդ դարի պատմության մի դրվագը առնչվում է ազգությամբ պարսիկ, բայց քրիստոնյա եւ հավատի համար 1167 կամ 1170 թ. նահատակված «նոր վկա» Հովսեփ Դվնեցու վարքին, որի մարմինը հողին է հանձնվել Հավուց թառում եւ նրա գերեզմանը դարձել է սրբատեղի[173]:

1246 թ. Հավուց թառը հիշվում է Հայաստանի գլխավոր վանքերի թվում («գլխաւոր վանորայքն»), որտեղ այցելել է Կոստանդին Ա Բարձրբերդցի (1221-1267) կաթողիկոսի շրջաբերականը բերած Վարդան Արեւելցին[174]:

Ամենափրկիչ եւ Աստվածընկալ խաչերից բացի Հավուց թառում եղել են նաեւ այլ սրբություններ: Վարդան Արեւելցու «Աշխարհացույցի» մեջ, որը հետագայում լրացվել է զանազան հեղինակների ձեռքով, Հավուց թառի մասին ասվում է. «Ի կողմն Գառնոյ Դարունից մեծ եկեղեցին է, որ է Հայոց թառ, ուր կայ կենդանագիր պատկերն փրկչական եւ սուրբ աջն Թադէոսի առաքելոյ եւ ճկոյթն Սուրբ Կարապետի»[175]: Թադեոս առաքյալի աջը, Ամենափրկիչ խաչի նման, այժմ պահվում է Ս. Էջմիածնում: Հետաքրքրական է նրա պահարանի վրայի արձանագրությունը, ըստ որի նախնական պահարանը պատրաստված է եղել 1275 թվականին, որը Մատթեոս Ջուղայեցի վարդապետը նորոգել է 1671 թ.[176]:

172. Դավիթը նախկինում Սուրհան անունով ազնվական պարսիկ էր, որն արաբական զորքի հետ Հայաստան էր եկել եւ դիմելով Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանին՝ քրիստոնեություն ընդունել: Կնքահայր Գրիգոր իշխանը նրան տվել է իր հոր՝ Դավթի անունը եւ Կոտայքի Զազ գյուղը, որպես կալվածք: Հետագայում Դվինում նստող արաբ ոստիկանը Դավթից պահանջել է ուրանալ քրիստոնեությունը եւ մերժում ստանալով մահվան դատապարտել: Հայոց Եկեղեցին նրան՝ Դավիթ Դվնեցի անվամբ, դասել է սրբերի կարգը:

173. Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն, աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999, էջ 96, 175, Հայոց նոր վկաները, աշխատասիրութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903, էջ 46-60, Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1634:

174. Կիրակոս Գանձակեցի, էջ 310:

175. Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, քննական հրատ. Հ. Պէրպէրեանի, Բարիզ, 1960, էջ 30:

176. «Կազմեցեալ էր սա ի ՉԻԴ (1275) թուին, իսկ ի ՌՃԻ (1671) թուին, ես՝ Ջուղայեցի Մատթէոս վարդապետս նորոգեցի եւ ետու յիշատակ ի դուռն Սուրբ Ամենափրկչին» (Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 42):



Թովմա Մեծոփեցին հայտնում է իր ուսուցիչ եւ Գրիգոր Տաթեւացու գործընկեր Հովհաննես Մեծոփեցի վարդապետի 1409 թ. Հավուց թառում կատարված հուղարկավորության մասին: Նա նշում է, որ աշակերտները նրան թաղեցին Հովսեփ նոր վկայի եւ վանքի Եղիա վարդապետի հանգստարանում՝ «... եդաք զնա (Հովհաննես Մեծոփեցուն – Կ. Մ.) ի հանգստարանի նոր վկային Յովսեփայ նահատակին եւ Եղիա վարդապետին՝ ի մեծահանդէս ուխտն Հայոց թառ», մեկ այլ տեղում՝ «եդաք ի մեծահանդէս ուխտն Հաւուց թառ՝ գերեզմանակից նոր վկային Յովսեփայ եւ Եղիայ վարդապետի նոցա»[177]:

Կաթողիկոս Սիմեոն Երեւանցին, սկսած 15-րդ դարից մինչեւ իր ապրած ժամանակը (18-րդ դարի կեսեր), շատ հանգամանալից տեղեկություններ է հայտնում վանքի սեփականության, ինչպես թեմի (որի մասին նշվեց վերեւում), այնպես էլ հարկատու բնակավայրերի մասին. «Այս վանքը... ունի նաեւ մուլքատու գյուղեր, որոնցից վերցնում է տասանորդ մուլք[178], որ հետեւյալներն են. Հայոց թառ, Կուտունց վանք, որ նաեւ Թարաքյամի գյուղ է կոչվում, Թառնիս եւ Ագարակ, որոնցից առնում է վեց դանկ[179] մուլք: Այլեւ՝ Գողթ, Մանկուս, Ավանիկ, Դաղվերթ եւ Սուրբ Սարգիս, որոնցից (առնում է) երեք դանկ մուլք»: Այնուհետեւ Սիմեոն Երեւանցին շատ այլ մանրամասներ է հաղորդում, նշում հողային հարցի շուրջ ծագած վեճերի ու դրանց լուծման մասին, թվարկում է վանքապատկան բազմաթիվ այգիներ ու տներ՝ դրանց նախկին տերերի ու վանքի համար ձեռք բերողների անուններով, տեղադրությամբ եւ այլն (տե՛ս հավելվածում):

Հավուց թառի Զաքարիա Բ պարոնտէր եպիսկոպոսն ըստ պարսկական կալվածագրերի, կարողացել է դատական կարգով հետ ստանալ վանքի բռնագրավված սեփականությունը: Հ. Փափազյանը նրա գործունեության առնչությամբ գրում է. «Շահենի որդի Զաքարիան... 1489 թ. կարողացել է 5000 դինար փրկագին վճարելով Բեյթ-ուլ-մալից ետ ստանալ բռնագրավված մուլքերը եւ ավելի ուշ, 1526 թվականին դրանց մի մասը վակֆ[180] անել Հավուց-Թառի Ս. Ամենափրկիչ վանքին»[181]:

177. Թովմա Մեծոփեցի, էջ 83, 96: Ըստ Մ. Օրմանյանի Հովհ. Մեծոփեցին մահացել է 1411 թ. (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Բ, էջ 2372):

178. Մուլք – սեփականություն անշարժ գույքի նկատմամբ: Տվյալ տեղում օգտագործված է հասույթի իմաստով, նշված են այն բնակավայրերը, որոնցից վանքին տասանորդ է տրվել:

179. Դանկը ամբողջն է, բաժանված 6 մասի: Վեց դանկը, ամբողջն է, երեք դանկը՝ կեսը:

180. Վակֆ - մահմեդական երկրներում հոգեւոր հաստատություններին (մզկիթներին) տրվող անօտարելի եւ հարկերից ազատ սեփականություն: Այդ իրավունքը տարածվել է նաեւ վանքերի վրա:

181. Մատենադարանի պարսկական վավերագրերը, կալվածագրեր, էջ 166: Ըստ 1489 թ. պարսկերեն կալվածագրի Զաքարիա վարդապետի ժառանգական կալվածքներ են հանդիսացել Մանկուս, Ավանիկ, Կուդիս, Կըզըլ-վանք (Հավուց թառ) Կոխդ, Դոնիս, Սուրբ Սարգիս գյուղերը, Կուտուց վանքի եւ Ավանասարի ագարակները (նույն տեղում, էջ 82-86), տե՛ս նաեւ Զամբռ, էջ 387-389, Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 39:

Զանազան սկզբնաղբյուրներից քաղված տեղեկությունները ցույց են տալիս, որ 15-17-րդ դդ Հավուց թառն իր հողային կարողություններով Հայաստանի առավել աչքի ընկնող վանքերից էր[182]:

Սիմեոն Ջուղայեցու վանահայրության շրջանում՝ 1640-ական թվականներին վանքը բարեկարգվել է, եւ վերածաղկել է ուսումնական գործը: Մի հիշատակարանում նշվում է, որ Սիմեոնը՝ «եպիսկոպոս լեալ նստաւ ի վանս Ս. Ամենափրկչին, որ ասի Հաւուց թառ», եւ ավելացվում՝ «եւ անդէն արարեալ **բազում նորոգութիւնս շինուածոց եւ դպրոցս կարգեալ, ուսոյց յոլովից զարհեստս իմաստից**»[183]:

Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին Հավուց թառը նշում է 1679 թ. երկրաշարժից մեծապես տուժած բնակավայրերի թվում[184]: Երկրաշարժից քանդվել է հնագույն Կաթողիկե եկեղեցին: Կաթողիկոս Աստվածատուր Համադանեցին որոշել է ավերված հին եկեղեցու եւ գավիթի քարերով մի նոր եկեղեցի կառուցել (1721 թ.), սակայն լեզգիների արշավանքի պատճառով այդ կառույցն անավարտ է մնացել:

1734 թ. կաթողիկոս Աբրահամ Կրետացին (1734-1737) ուխտի է գնացել Հավուց թառի վանք եւ այնտեղ մնացել երկու գիշեր («…գնացի ի Հաւուց թառ, որ է Ամենափրկչի վանք, մնալով անդ Բ (2) գիշեր»)[185]:

1755 թ. լեզգիների երկրորդ արշավանքից հետո վանքը կրկին կողոպտվել է եւ աստիճանաբար լքվել: Սիմեոն Երեւանցին նշում է, որ «Ջամբռի» գրության ժամանակ (1765-1767 թթ.) վանքն արդեն ամայի էր:

1868 թ. կաթողիկոս Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցին (1866-1882) Գեղարդավանք այցելելուց հետո հատուկ կոնդակով տեղի առաջնորդ Միքայել վարդապետին կարգել է «վանահայր նաեւ սոյն վանուցս՝ Ամենափրկչի, որպեսզի շէնցնէ զայն»[186]: Ցավոք, Հավուց թառը վերականգնելու կաթողիկոսի նպատակն անիրագործելի է մնացել Գեղարդի վանահոր եւ Գառնիի անտառապետի վեճի պատճառով:

182. Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. 4, Երեւան, 1972, էջ 261:
183. Հիշատակարաններ, ԺԷ, հ. Գ, էջ 887:
184. Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, հ. Բ, Վաղարշապատ, 1870, էջ 104:
185. Աբրահամ կաթողիկոս Կրետացւոյ Պատմագրութիւն անցից իւրոց եւ Նատր-Շահին Պարսից, Վաղարշապատ, 1870, էջ 6:
186. «Արարատ», 1871, Զ, էջ 331:





Հավուց թառի «Ամենափրկիչ» խաչը



*Հավուց թառի վանքի հիմնական հուշարձանախմբերը*





*«Բլրի» եկեղեցին*



«Բլրի» եկեղեցին եւ կից մատուռները



եկեղեցու պատակից մատուռը



*Սարգիս երեւանցու եւ Մխիթար վարդպետի արձանագրությունները*



*Աստվածատուր Համադանեցու անավարտ եկեղեցին*



*Խաչքարեր վանքի բակում*



*Ս. Կարապետ մատուռը*



Ժամատան սյուներ



Ժամատան խոյակներ



Վանքի հարավային մուտքը



Արեւելյան պարսպապատի հատված



*Սուրբ Սարգիս խաչքարը վանքի ճանապարհին*

# ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ՎԱՆՔԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ

Հավուց թառի վանահայրերի առաջին եւ միակ գավազանագիրքը կազմել է Հովհաննես Շահխաթունյանցը 1842 թ.: Նա ցանկը սկսում է Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամի, հետագայում՝ Գրիգոր Վկայասեր կաթողիկոսի անունով, հիմնվելով 1013 թվականի արձանագրության վրա, որն անիրական է, որովհետեւ Վահրամը մինչեւ կաթողիկոս դառնալը (1066 թ.) աշխարհական է եղել: Հովհ. Շահխաթունյանցի կազմած գավազանագրքում ընդգրկված է 16 անուն[187]:

Ստորեւ ներկայացնում ենք վանքի առաջնորդների լրացված անվանացանկը, նշելով յուրաքանչյուրի հիշատակման թվականները, առիթն ու սկզբնաղբյուրը:

**Գրիգոր** – նշվում է Փիլիպոս քահանայի հիշատակարանում, որը 1190 թ. Այրիվանքում իր գրած Տոնապատճառ ժողովածուն 1191 թ. նվիրել է Հավուց թառի «Աստվածընկալ Սուրբ Նշանին», որն այս վանքում պահվող, Խաչափայտի մասունքով խաչ էր[188]:

**Եղիա վարդապետ** - եղել է 1206 եւ 1207 թ. Լոռեի եւ Անիի եկեղեցական ժողովների մասնակիցներից, որոնց թվարկելիս պատմիչ Կիրակոս Գանձակեցին նրան դրվատանքով է նշում[189]: Վերջին անգամ հիշվում է 1214 թ.:

**Պողոս վարդապետ** – հիշվում է Իգնատիոս գրչի 1214 թ. հիշատակարանում. «...յառաջնորդութեան սուրբ ուխտիս՝ հեզի եւ ամենաբարւոյ Պաւղոս վարդապետի»[190]:

**Հովհաննես Ա** – Սիմեոն-Պետրոս գրչի 1236 թ. հիշատակարանի համաձայն նա այդ թվականին մահացել է[191]:

**Գեւորգ** - ըստ Սիմեոն-Պետրոսի հիշատակարանի վանահայր է դարձել 1236 թ., «մեծ եպիսկոպոս» Գրիգորի եղբորորդին էր[192]:

**Մխիթար եպիսկոպոս** - եղել է Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի 1297 թ. կազմած եւ Գրիգոր Է Անավարզեցի (1293-1307) կաթողի-

187. Յովհ.. Շահխաթունեանց, նշվ.աշխ., էջ 296-297:
188. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., էջ 264:
189. Կիրակոս Գանձակեցի, էջ 172:
190. Հիշատակարաններ, ԺԳ, էջ 83:
191. Նույն տեղում, էջ 191:
192. Նույն տեղում:

կոսին ուղարկված պատասխան նամակը ստորագրողներից մեկը («Ես՝ տէր Մխիթար՝ Հաւուց թառոյ եպիսկոպոս...»)[193]:

**Հովհաննես Բ** – 1321 թ. հիշվում է վանքին նվիրված մի Ավետարանի (Նոր Ջուղի, ձեռ. թիվ 36) հիշատակարանում:

**Նաթանայել եպիսկոպոս** – 1343 թ. հիշատակարան է գրել եւ Հավուց թառի պատմության մասին հավելումներ կատարել Սամվել Անեցու ժամանակագրության մեջ:

**Զաքարիա Ա եպիսկոպոս** – Առաջին անգամ հիշվում է 1423 թ. մի հիշատակարանում՝ «ի վերադիտողութեան սուրբ ուխտիս Հաւու թառ՝ ...մեծազգի արհիապատիւ եպիսկոպոսի տէր Զաքարիայ»[194]: Թովմա Մեծոփեցին նրան հիշատակում է 1441 թ. Ս. Էջմիածնում Կիրակոս Վիրապեցի կաթողիկոսին ընտրած ժողովի մասնակիցների եւ 1443 թ. կաթողիկոսին գահընկեց անող հոգեւորականների թվում. «Տէր Զաքարէն Հաւուց թառոյ՝ ի յազատորդաց»[195]:

**Հովհաննես Գ եպս..** – Հիշատակվում է 1465 թ. Եղիվարդում գրված մի հիշատակարանում. «Ի... եպիսկոպոսութեան տէր Յովաննէսի Հայոց թառոյ»[196]:

**Զաքարիա Բ եպիսկոպոս պարոնտէր** – հիշատակվում է 1487-1526 թթ.: Պարսկական կալվածագրերից երկուսում նշվում է նրա հոր անունը՝ Շահեն[197]:

**Համազասպ Ա վարդապետ** - Զաքարիա Բ-ի կրտսեր եղբայրը: Հիշվում է՝ 1526 թ. եղբորը պատկանող մուլքերի եւ կալվածքների մի մասի՝ վանքին հատկացվելու (վակֆ արվելու) վերաբերյալ կազմված վավերագրում[198]:

**Զաքարիա Գ վարդապետ** – հիշվում է 1577 թ. պարսկական հրովարտակում, ուր նա եւ եղբայրը՝ Փիր Թումանը, կոչվում են «Բաբայի որդիներ»: Նրանք եւ եւս երկու հոգու հետ համարվում են շրջանի 9-ը գյուղերի մուլքատեր[199]:

193. Ստեփանոս Օրբէլեան, էջ 461:
194. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Ա, էջ 304:
195. Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն, էջ 219, 261:
196. Հիշատակարաններ, ԺԵ, հ. Բ, էջ 232:
197. 1489-ի կալվածագրում նշվում է. «Ջհանշահի որդի, Շահինի որդի Զաքարիա անունով կրոնավորը...», իսկ 1525 թ. գրության համաձայն Շահենի որդի Զաքարիա վարդապետը ոմն Աստվածատուրի որդուց Գառնիում այգի եւ հնձան է գնել (Մատենադարանի պարսկական վավերագրերը, կալվածագրեր, էջ 83, 103):
198. Զաքարիա եւ Համազասպ վարդապետների կողմից Հայոց թառի Ս. Ամենափրկիչ վանքին վակֆ արված Կըզըլ վանք (Հավուց թառ), Մանկուս, Ավանիկ գյուղերի եւ Քեղվարդի (Սիմեոն Երեւանցու մոտ՝ Քաղբերդ) ու Սուրբ Սարգսի ագարակների կեսի մասին 1526 թ. կալվածագիրը տե՛ս Մատենադարանի պարսկական վավերագրերը, կալվածագրեր, էջ 105, տե՛ս նաեւ Ջամբռ, էջ 388-389:
199. Այդ գյուղերն են՝ Մանկուս, Ս. Սարգիս, Ավանիկ, Կուդիս, Կոխդ, Կըզըլ վանք (Հավուց թառ), Թառնիս, Կուտուց վանք, Ավանասար (Մատենադարանի պարսկական վավերագրերը, հ. I, հրովարտակներ, պր. Ա, կազմեց Հ. Փափազյան, Երեւան, 1956, էջ 67):



**Մանուել եպիսկոպոս** – պատմիչ Առաքել Դավրիժեցին նրան հիշատակում է Սրապիոն Ուռհայեցի վարդապետի աթոռակալությանը (աթոռակից) նախորդած դեպքերի առնչությամբ (1590 թ.) եւ նշում նրա սպանության (գլխատման) մասին, որը տեղի ունեցավ 1604 թ. Շահ Աբասի կազմակերպած բռնագաղթի ժամանակ, երբ Գառնու ձորի բնակչությունը հրաժարվեց գաղթել, պատսպարվեց քարայրներում եւ պատժիչ զորքի ձեռքով կոտորվեց[200]:

**Համազասպ Բ եպիսկոպոս** – Առաքել Դավրիժեցին նրա մասին գրում է՝ «...որ էր Հաւուց թառայ վանացն եւ Երեւան քաղաքի առաջնորդ, եւ էր այր խրոխտ եւ ճարտարաբան»: Առաջին անգամ հիշվում է Երեւանի Կաթողիկե եկեղեցու 1609 թ. մի վիմագիր արձանագրության մեջ[201]: 1624 թ. հայ հոգեւորականներից զրպարտվելով սպանվել է պարսիկների ձեռքով[202]:

**Մկրտիչ եպիսկոպոս** - Առաքել Դավրիժեցին նրան 1627 թ. հիշում է Մովսես Գ Տաթեւացու (1629-1632) աթոռակալությունից առաջ բարձրաստիճան հոգեւորականության մեջ ծագած պայքարի առնչությամբ[203]:

**Սարգիս վարդապետ** – Ըստ «Ջամբռում» պահպանված տեղեկության վանքի համար վարելահող է գնել մինչեւ 1640 թ.:

**Սիմեոն Ջուղայեցի** – 1640 թ. Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսը երեւանցիների խնդրանքով նրան նշանակել է վանահայր եւ Երեւանի առաջնորդ (մահացել է 1657-ին)[204]: 1655 թ. Երեւանում Մկրտիչ երեցի ընդօրինակած մատյանի (Նոր Ջուղա, ձեռ. թիվ 494) հիշատակարանում նշում է. «վերադիտողութեան մերոյ գաւառի տեառն Սիմէոնի..., որ նստի ի Սբ. մենաստանն Ամենափրկիչ՝ ի ձորն Գառնւոյ»[205]:

**Հովհաննես Դ** – 1658 թ. Երեւանում գրված Ավետարանի հիշատակարանում նշվում է որպես Հավուց թառի եւ Երեւանի առաջնորդ. «Գրեալ եղեւ սա... ի մայրաքաղաքիս Երեւան կոչեցեալ... ի հայրապետութեան տեառն Յակոբայ Ջուղայեցւոյ... եւ մերոյս առաջնորդի Ամենափրկչի, որ Հաւուց թառ կոչի, տեառն Յովհաննիսի րաբունւոյ մեծի...»[206]: Նշվում է նաեւ 1664 թ. մի հիշատակարանում[207]:

200. Առաքել Դաւրիժեցի, էջ 61, 64, 84: Այս մասին նշվում է նաեւ մի հիշատակարանում՝ «նոցա... անողորմ կոտորեցին, յորոց միջի էր Մանուէլ եպիսկոպոս Հայոց թառայ...» (Հիշատակարաններ, ԺԷ, հ. Ա, էջ 287), տե՛ս նաեւ Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, էջ 2685:
201. Կ. Ղաֆադարյան, Երեւան, միջնադարյան հուշարձանները եւ վիմական արձանագրությունները, Երեւան, 1975, էջ 139:
202. Առաքել Դաւրիժեցի, էջ 248, Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջ 2850:
203. Առաքել Դաւրիժեցի, էջ 206, Մ. Օրմանեան, Ազգապատում, հ. Բ, էջ 2781:
204. Առաքել Դաւրիժեցի, էջ 321:
205. Հիշատակարաններ, ԺԷ, հ. Գ, էջ 681:
206. Նույն տեղում, էջ 810:
207. Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 41:

**Մարկոս Ջուղայեցի վարդապետ** – Հակոբ Դ Ջուղայեցի (1655-1680) կաթողիկոսի աթոռակալության վերջին տարիներին պաշտոնավարած այս վարդապետին որպես Հավուց թառի վանահայր հիշատակում է Զաքարիա Սարկավագ Քանաքեռցին (1627-1699), որին վերջինս պատմել է Սպահանում պատահած մի հետաքրքրական դեպքի մասին[208]:

**Մատթեոս վարդապետ** – հիշվում է 1655-1662 թվականներին Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի «Ջամբռում», վանքի համար խաղողի այգի է գնել Երեւանում:

**Ստեփանոս** – 1696 թ. մի Տոնացույցում հիշատակարան է գրել[209]:

**Մովսես վարդապետ** – վանքի կիսակառույց (Աստվածատուր Համադանեցու հիմնած) եկեղեցու հյուսիսային կողմում պահպանվել է նրա տապանաքարը՝ 1704 թվականով[210]: Գ. Սարգսյանը ենթադրում է, որ Մովսեսը «վանքի առաջնորդն է եղել», որը հավանական է, քանի որ նրա մոտ թաղված է հաջորդ վանահայրերից մեկը՝ Մաղաքիա վարդապետը, տապանաքարի նույնօրինակ արձանագրությամբ[211]:

**Մաղաքիա վարդապետ** – Ըստ «Ջամբռի»՝ 1726 թ. վանքի համար պարտեզով առանձնատուն է գնել Երեւանում:

**Հովհաննես Ե վարդապետ** – Ըստ «Ջամբռի»՝ 1745-ին վանքի համար պարտեզով տուն է գնել:

**Ազարիա վարդապետ** – Ըստ «Ջամբռի»՝ 1755 թ. վանքի համար տուն է գնել:

**Միքայել վարդապետ** - 1868 թ. կաթողիկոս Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցին հատուկ կոնդակով Գեղարդավանքի առաջնորդ Միքայել վարդապետին կարգում է նաեւ Հավուց թառի վանահայր[212]:

208. Զաքարիայ Սարկաւագի պատմագրութիւնք, էջ 56:
209. Յովհ.. Շահխաթունեանց, նշվ. աշխ., էջ 297:
210. «Այս է տապան Մովսէս վարդապետին: ՌՃԾԳ (1704) թվին» (Գ. Սարգսեան, Վիմագրագիտական..., էջ 246):
211. «Այս է տապան Մաղաքիայ վարդապետին» (Գ. Սարգսեան, Վիմագրագիտական..., էջ 246):
212. «Արարատ», 1871, Զ, էջ 331:



## ԳԱՒԱԶԱՆԱԳԻՐՔ ՎԱՆԱՀԱՐՑ ՀԱՒՈՒՑ ԹԱՌՈՅ

| | |
|---|---|
| Գրիգոր | 1191 թ. |
| Եղիա վրդ. | 1206-1214 թթ. |
| Պօղոս վրդ. | 1214 թ. |
| Յոհաննէս Ա | մինչեւ 1236 թ. |
| Գէորգ | 1236-ից |
| Մխիթար եպս. | 1297 թ. |
| Յոհաննէս Բ | 1321 թ. |
| Նաթանայել եպս. | 1343 թ. |
| Զաքարիա Ա եպս. | 1413-1443 թթ. |
| Յովաննէս Գ եպս. | 1465 թ. |
| Զաքարիա Բ վրդ. | 1489-1526 թթ. |
| Համազասպ Ա | 1526-ից հետո |
| Զաքարիա Գ վրդ. | 1577 թ. |
| Մանուել եպս. | 1590-1604 թթ. |
| Համազասպ Բ եպս. | 1609, 1624 թ. |
| Մկրտիչ եպս. | 1627 թ. |
| Սարգիս վրդ. | մինչեւ 1640 թ. |
| Սիմէոն Ջուղայեցի վրդ. | 1640 թ. |
| Յովհաննէս Դ վրդ. | 1658 |
| Մատթէոս վրդ. | 1659-1662 թթ. |
| Մարկոս Ջուղայեցի վրդ. | 1670-ական թթ. |
| Ստեփանոս | 1696 թ. |
| Մովսէս վրդ. | 1704 թ. |
| Մաղաքիա վրդ. | 1726 թ. |
| Յովհաննէս Ե վրդ. | 1745 թ. |
| Ազարիա վրդ. | 1755 թ. |
| Միքայել վրդ. | 1868 թ. |

# ՀԱՎԵԼՎԱԾ



## ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ՎԱՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲՆԱԳՐԵՐ

# 1. ՆԱԹԱՆԱՅԵԼ ՀԱՎՈՒՑԹԱՌԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԸ

## ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՁԵՌ. ԹԻՎ 3681[1]

Փրկչական ՅԺԲ (312) «**Յայսմ ամի շինեց արքայն Հայոց Տրտադ զարմանալ ին տեսողաց զհովանոցն քեռն իւրոյ աւրեորդին Խոստրովիթխթոյ ի գեղաքաղաքին ի Գառնի, որ այժմ կոչի Սարաւոյթ Դրդատայ**[2], **յառ որ մերն կայ գերեզման սուրբ հայրապետացն Հայոց Տէր Գէորգայ եւ երիցս երանե(ա)լ սուրբ ճգնաւորին Տէր Մաշտոցին եւ Տէր Յովանեսի**[3], **եւ**

1. Նաթանայել Հավուցթառեցին գրառումները կատարել է Սամվել Անեցու ժամանակագրության իր օրինակում: Յուրաքանչյուր հատվածի վերջում նշվում է ձեռագրի համապատասխան թերթը: Այն տեղեկությունները, որոնք ներկայացվում կամ քննվում են ուսումնասիրության մեջ, այստեղ չեն ծանոթագրվում:
2. Գառնիի «հովանոցի» կառուցումը Տրդատ Գ-ին վերագրելու ավանդությունը գալիս է դեռեւս Մովսես Խորենացուց. «...շինեալ եւ տուն հովանոց... ի համար քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ...» (Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1991, էջ 241-242): Իսկ «սարաւոյթ Տրդատայ» արտահայտությունն առաջին անգամ հանդիպում է Կիրակոս Գանձակեցու մոտ. «Այր ոմն առաքինի... Յովհաննէս անուն ի քաղաքագիւղէն Գառնւոյ, ուր զարմանալի սարաւոյթն է Տրդատայ» (Կիրակոս Գանձակեցի, էջ 348):
3. Միմյանց հաջորդած այս երեք հայրապետներից միայն Մաշտոց Ա Եղիվարդեցու համար է վկայված Գառնիում թաղված լինելը: Այստեղ հայտնաբերվել է նաեւ յոթ ամիս աթոռակալած կաթողիկոսի 897 թվակիր արձանագրությամբ տապանաքարը (Հ. Պետրոսյան, Գառնին 9-14-րդ դարերում, Երեւան, 1988, էջ 27): Բայց ծնունդով գառնեցի էր նրա նախորդ Գեւորգ Բ Գառնեցի կաթողիկոսը (877-897): Հովհաննես Դրասխանակերտցին (898-929) հայտնում է, որ նա մահացել է Վասպուրականում եւ թաղվել «ի քնարանի Ձորոյ վանաց» (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 184-187): Վարդան Արեւելցու «Աշխարհացույցի» մեջ Գառնիում են թաղված համարվում Գեւորգ Գառնեցին եւ Մաշտոցը՝ «Գառնի, ուր կայ գերեզմանն Գէորգայ հայրապետին եւ Մաշտոց վարդապետին» (Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, էջ 31):Հովհ. Դրասխանակերտցին նույնպես վախճանվել է Վասպուրականում, բայց թաղման տեղի մասին ստույգ վկայություն չկա (Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 1240-1242): Հետաքրքիր է, որ Կիրակոս Գանձակեցին նրան համարում է ծնունդով գառնեցի՝ «Սա էր այր իմաստուն եւ բանաւոր ի քաղաքագեղջէն Գառնւոյ, ուստի սուրբ հայրապետն Գէորգ էր» (Կիրակոս Գանձակեցի, էջ 82): Եթե հավատանք Նաթանայել Հավուցթառեցուն, որ այս երեք հայրապետները թաղված են եղել Գառնիում, ապա կարելի է ենթադրել, որ ինչպես Մաշտոց Եղիվարդեցու մասին է գրված, թե հողին են հանձնել «նշխարք ոսկերաց նորա» (Ասողիկ), կարող էին նույն կերպ Գառնի փոխադրած լինել Գեւորգ Գառնեցու մասունքները, մանավանդ որ նա սերտորեն կապված էր ծննդավայրի հետ: Ամեն դեպքում, 14-րդ դարում ապրող Նաթանայել եպիսկոպոսը պետք է ինչ-որ հիմք ունեցած լինի այս երեք հայրապետների հանգստարանը Գառնիում տեղորոշելու համար:

**սուրբն Գրիգոր շինե(ա)ց զՍուրբն Գրիգոր եկեղեցին ի Գառնի եւ կանկնե(ա)ց նշանք տէրունականս**»[4] (թերթ 49ա):

Փրկչական ՆԺԷ (417) (որպես Սահակ Պարթեւի աթոռակալության մասին Սամվել Անեցու գրածի շարունակություն) «**Եւ արար սկիզբն շինվածոյ մեծա/// եւ վայել չաշէն զարմանակերտ եւ հոյակապ ուխտին Հայոց թառոյ եւ ժողովեց կրաւնաւորս ԳՃ (300) հնտակերս եւ բոկագնայ**»:

Էջի ստորին մասում` Հայոց դպրության սկզբնավորման, Մեսրոպ Մաշտոցի եւ Սահակ Պարթեւի մասին Սամվել Անեցու գրածը շարունակված է` «///[**հայրա]պետն Սահակ եւ Մաշտոց վարդապետն հիմնարկեցին եւ անուանեցաւ աթոռ Հայոց եւ թառ թարգմանութե(անց)** /// [**Հաւ]ուց թառ ան[ուան]աւ**» (52ա):

Փրկչական ՆԻԶ (426) թվականի եւ Սահակի կաթողիկոսության 10-րդ տարվա դիմաց գրված է. «**Յասմ ամի շինեց սուրբ հայրապետն Հայոց Սահակ զՍուրբ Կաթողիկէն ի Գառնոյ ձորին ի վերա գետին եւ ժողովեց բազում կրաւնաւորս հնտակեր եւ բոկագնայ եւ հաստատեց վանք եւ ինքն առանձնանայր ի Հայոց թառոյ ի յաստ եւ անուանեցաւ Գետոց վանք [եւ այ]ժմ ունի զտեղիս զայս սուրբ ուխտն [Հայոց] թառ**» (52բ):

Փրկչական ՌԾԴ (654), Հայոց ՃԱ (652) թվականի դիմաց Ներսես Գ Շինողի գործունեության` Ս. Գրիգորի (Զվարթնոց), Դվինի Ս. Սարգսի եւ Խոր վիրապի եկեղեցիների կառուցման մասին Անեցու հայտնած տեղեկությունը շարունակված է. «**Եւ ի Գառնի ի վերայ բլրին որ հայի ի դաշտն Դվնայ շինել զեկեղեցին յանուն Եղիայ մարգարէին**»[5] (62բ):

Արուճի եկեղեցու օծման ժամանակ մկրտված եւ հետագայում նահատակված Դավիթ Դվնեցու մասին Սամվել Անեցու տեղեկությունը շարունակ-

4. Նաթանայելի հայտնած տեղեկությունը, որ Ս. Գրիգոր Լուսավորիչը կառուցել է Գառնիի Ս. Գրիգոր եկեղեցին եւ այստեղ խաչեր կանգնեցրել, այլ աղբյուրներից հայտնի չէ: Լուսավորչին բազմաթիվ եկեղեցիների հիմնադրում է վերագրվում ողջ Հայաստանով մեկ, բայց Տրդատին պատկանող Գառնիում նրա հայտնվելը օրինաչափ պիտի համարել: Նաթանայելի գրածի մեջ «կանկնե(ա)ց նշանք տէրունականս» խոսքերը իրականությանը շատ մոտ են, քանզի հայտնի է, որ Լուսավորիչն իր այցելած տեղերում խաչեր էր կանգնեցնում, որոնց տեղում հետագայում եկեղեցիներ էին կառուցվում: Գառնիի կենտրոնում պահպանվել է բազիլիկ եկեղեցու ավերակ, որը «միանավ, հարավային ավանդատնով եւ հարավային ու հյուսիսային սյունասրահով տուֆակերտ կառուցվածք է` բնորոշ 4-5-րդ դդ. հայկական ճարտարապետությանը» (Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 25): Հնարավոր է, որ այս եկեղեցին է Նաթանայելը Ս. Գրիգոր անվանել:

5. Գառնիի մյուս եկեղեցու կառուցումը` Դվինի դաշտահայաց մասում, Նաթանայելը վերագրում է Ներսես Գ Տայեցուն: Գառնիի եկեղեցիներից 7-րդ դարի է համարվում հեթանոսական տաճարի արեւմտյան կողմում գտնվող արտաքինից շրջանաձեւ քառախորան եկեղեցին, որի ճարտարապետական մանրամասներն առնչություններ ունեն Զվարթնոցի հետ (Ա. Սահինյան, Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը, Երեւան, 1983, էջ 198-201): Գրականության մեջ եկեղեցին կոչվում է Ս. Սիոն: Ըստ Նաթանայելի` եկեղեցին եղել է Եղիա մարգարեի անունով:



ված է` «**Եւ սուրբ գլուխ նորայ** (Դավիթ Դվնեցու – Կ. Մ.) **կայ ի Հաւուց թառ**[6] **եւ այլ նշխարքն կայ ի**…» (63ա):

Կաթողիկոս Հովհաննես Օձնեցուն (717-728) վերաբերող հատվածում, Սամվել Անեցու մի քանի մեծարական խոսքերից հետո («կանոնական կարգօք պայծառացոյց զեկեղեցի»), հետեւյալ հավելումն է. «**Եւ արար ժողով եւ հաստատեց զազգս Հայոց ի յուղղափառ դաւանութիւն զոր զսուրբ հարքն ի Նիկիայ սահմանեցին եւ եկն ի ժողովս Գաբրիել Վրաց կաթողիկոսն ԺԵ** (15) **եպիսկոպոսաւք**[7] **եւ նզովեց զժողովն Քաղկեդոնի** ///» (64բ):

Փրկչական ՊՀԹ (879), Հայոց ՅԻԶ (877) «**Եւ սուրբ հայրապետն եւ մեծ պատրիարգն Հայոց սուրբն Գէորք վերստին նորոգեց զնախադրական ուխտն Հաւուց թառ եւ պայծառացոյց, փարթամացոյց գոյիւք եւ ա[րա]ր իրն բնակ[ար]ան յամար[այ]նի ժամանակս**» (էջ 71բ):

Փրկչական ՋՀԸ (978) Հայոց ՆԻԵ (976) «**Եւ ոմանք ասէն թե Վասիլ կայսրն Աշոտ թագաւորին պարգեւեց զԱմենափրկիչ խաչն եւ մասն Տէրունական խաչեն, որ Աստուածընկալ ասեն եւ մնան երկուքն ի Հա[ւու]ց թառ մեծափայծառ փառաւք**» (77ա):

Փրկչական ՌԴ (1004), Հայոց ՆԾԱ (1002) «**Գէորք իշխանաց իշխանն, որդի Հասանայ, եղբար Ապիրատին վերըստին նորոգեց զնախադրական հռչակաւոր սուրբ ուխտն զՀաւուց թառ եւ շինե(ա)ց զփառաւոր զհրաշալի Կաթողիկէն Թ** (9) **խորանաւ: Եւ արար զանձագին զմերձակա գեղն զԿոխթ**[8] **ի Գագիկ շահանշահէ եւ Յովանիսէ եւ ետ Հաւուց թառոյ Սուրբ Կաթողիկէին հայրենիք եւ ետ ի հայրենե(ա)ց իր զԳետոց վանն եւ զՀովայսն վանքագեղ եւ ժողովեց ԳՃ** (300) **կրաւնաւոր**»:

Նույն էջում, 1013 թ. հավաասարությամբ` «**Եւ աստ ասեն եկե(ա)լ ի Հայս Վա[սի]լ կայսրն [եւ ուն]ել ընդ ինքե[ա]ն զխաչն փրկչական եւ զպատ-**

6. 701 թ. Դվինում նահատակված եւ հենց այստեղ Ս. Գրիգոր եկեղեցու մոտ թաղված Դավիթ Դվնեցու վարքը հայտնի է (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 94-99, Շնորհք արք. Գալուստեան, Հայազգի սուրբեր, Երեւան, 1997, էջ 228-229): Նաթանայելը միակ հեղինակն է, որ գրում է Դվնեցու գլուխը (գանգը) Հավուց թառում թաղելու (վերաթաղելու) մասին:

7. Վրաց Գաբրիել կաթողիկոսը մասնակցել է կաթողիկոս Բաբկեն Ոթմսեցու (490-516) հրավիրած Դվինի 506 կամ 508 թ. ժողովին, որին, ըստ «Գիրք թղթոցում» պահպանված տեղեկության, մասնակցել է նաեւ 23 վրացի եպիսկոպոս (Գիրք թղթոց, Երուսաղեմ, 1994, էջ 334, 343, Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, էջ 583-584): Նաթանայելի մոտ շփոթություն է տեղի ունեցել, ըստ երեւույթին Հովհաննես Օձնեցու հրավիրած Մանազկերտի հակաքաղկեդոնական ժողովում ասորիների մասնակցությունը շփոթվել է ավելի վաղ` Դվինում կայացած ժողովին վրացիների մասնակցության հետ:

8. Սա Գառնիի եւ Գեղարդի միջեւ գտնվող Կոխթ (Գողթ) գյուղի մասին մատենագրության մեջ պահպանված ամենավաղ հիշատակությունն է: Ինքնին հետաքրքիր փաստ է, որ գյուղը 10-րդ դարի վերջին եղել է արքունի սեփականություն, եւ որ այն Գագիկ թագավորից եւ Հովհաննեսից (Հովհաննես Սմբատ) գնել ու որպես սեփականություն Հավուց թառի Կաթողիկեին է տվել Գեւորգ իշխանը:

**կե[րն] տիրական զսուրբ Ամենափրկիչն եւ պարգեւ[եաց] արքային Հայոց Գա[գկայ] շահանշահի եւ թագ[աւորն] պարգեւե(ա)ց Գեորգայ իշխ[ան]ին/// զարեգակն/// մ[եծ մ]Էնարանն եւ խաչն մեծահրաշ եւ բազում ակամբ յաւրինե(ա)լ եւ [ո]ր ի գլուխս դրոշային [որ] կայս/// յԵրեւան գեղա[ք]աղաքն, որ ասեն երկ[ու]/// եւ ի սուրբ նշան եւ Է անունն ///այ Տէրունական սուրբ նշանն**» (78ա):

Փրկչական ՌՃՀ (1170), Հայոց ՈԺԷ (1168) թվականի դիմաց Հայոց Թորոս իշխանի մահվան մասին տեղեկությունը շարունակված է. «**Եւ կատարեցաւ նոր վկայն Քրիստոսի սուրբն Յովսէփ**[9] **ի Դվին քաղաքի ի յազգականաց իւրոց եւ Էր ազգաւ ի պարսից եւ Սարգիս քահանայ առե(ա)լ զլուսայ/// նշխար նորա տարաւ ի գերադրականն ի Հայոց թառ եւ անդ հանկու/// եւ յետոյ շինեց/// նորա**» (90ա):

9. 12-րդ դարում Դվինում նահատակված «նոր վկա» Հովսեփ Դվնեցու եւ նրա՝ Հավուց թառում թաղված լինելու վերաբերյալ հայտնի են նաեւ այլ սկզբնաղբյուրներ (Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, էջ 96, 175, Հայոց նոր վկաները, էջ 46-60, Ք. Տեր-Դավթյան, Հայկական սրբախոսություն, Երեւան, 2011, էջ 318-321): Վերջերս Հովսեփի վկայաբանության անդրադարձել, նրա դեգերումների ուղին «քարտեզագրել» եւ թաղման տեղի ու դամբարանի հարցին անդրադարձել է Գ. Սարգսյանը (Գ. Սարգսյան, Վկայաբանությունները որպես պատմաաշխարհագրական սկզբնաղբյուր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 173-182):



# 2. ԳԱՆՁ ԱՄԵՆԱՓՐԿՉԻՆ Ի ՏԷՐ ՄԱՆՈՒԷԼ ԲՋՆԵՑԻՈՅ

## ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՁԵՌ. ԹԻՎ 427, ԹԵՐԹ 291Ա-293Բ

**Մ**եծ զաւրութիւնի, մեծի նըշանին մեր փըրկագործին,
Ամենափըրկչին սուրբ կերպարանին, նոխ-նոխ քանդակին,
Ահեղ տեսակին, որ զնմանութիւնի ի խաչ բարձօղին, բերէ ի յանձին,
Տարածմամբ բազկին, խոնարհմամբ գըլխին, խըփմամբ աչերին:
Յաջ կողմն Յովսեփին, ձախ՝ Նիկոդիմին, իջուցողք մարմնին,
Աջ Հաւր եւ Հոգին, վերուստ երեւին, դրոշմամբ ահագին[1]:
Զոր հայցմամբ Կուսին, կոփեալ դրոշմեցին ձեռք սըրբազանին,
Սուրբ աշակերտին Որոտման որդին՝ լանջաւք փարողին[2],
Յաղագըս ծնողին, կարաւտեալ սըրտին, զորդին ի խաչին:
Ձեռամբ սիրելոյն՝ այս հրաշագործին՝ յՈրդւոյ Միածնին:
Որպէս ի նախկին, ձեռըն Մովսեսին տախտակ կըտակին:
Ահա աւգնեա՛ Ամենափըրկիչ յուսացելոցս ի քեզ կեցուցիչ, Աղ(աչէմք):

**Ա**րդ մեկնաբանեալ, տամ ձեզ ճանաչել զտիպսն այս հրաշացեալ,
Յաւուրն այն վրիժեալ, որ զՏերն ըմբըռնեալ, ի խաչ բեւեռեալ,
Աշակերտքն ընտրեալ, լըրմամբ ահի լեալ, բոլոր փախուցեալ,
Յոհանես ընտրեալ, բազմաց ծանաւթ լեալ, նա ո՛չ երկուցեալ,
Այլ անդրէն մնացեալ եւ սպասաւրեալ Կուսին սըրբասնեալ:
Իսկ կոյսն տըրտմեալ, Հրէիցն յահի լեալ, ի թաքուստ կացեալ:
Սըրտիւ փափաքեալ, լերդիւ ցամաքեալ՝ զորդին կարօտեալ:
Յոհանէս երթեալ, զկիպարին առեալ՝ ի խաչէն մնացեալ,
Հրաշալի կոփեալ, դէմ խաչին կացեալ, արտասւօք հայցեալ.
«Տո՛ւր Տէր ընծաեալ՝ մաւր Քո կարաւտեալ զտիպ աստուածագրեալ»:
Տէր հրաշագործեալ, կոյսն յորժամ տեսեալ, յոյժ խանդաղատեալ,
Եւ գըրկապատեալ, զերեսօքն ածեալ, արտասւօք թացեալ,
Եւ զայս ասացեալ.
«Սա՛ է ստուգագրեալ, որդին իմ խաչեալ, Փըրկիչ անւանեալ»:
Ահա աւգնեա՛:

1. «Ամենափրկիչ» փայտյա խաչի քանդակների ճշգրիտ նկարագրությունն է:
2. Նկատի ունի Հիսուսի սիրելի աշակերտ Հովհաննեսին (ավետարանիչ):

**Ն**որ նորոգօղին, նորակերտողին, նոր կերպ ահագին,
Ով տախտակ բանին եւ տիպ Արարչին, հիւսմամբ սուրբ խաչին:
Նըման ըստ առաջին տախտակաց կտակին, որ ի Սինաին[3]:
Յայն օրէնս հին, դու ի նորըս կրկին մեզ պատւաստութիւնի :
Զքեզ նորոգս յետին, ձեռն աշակերտին ի Գողգոթային,
Զայն ձեռք Մովսեսին կոփեալ գործեցին զքեզ Բաներգեսին:
Զայն ի զուարճութիւն ի Մարիամ նախկին, քեռ Ահարոնին:
Իսկ դու բերկրութիւն փափաքեալ սըրտին Մարիամ Կուսին:
Որպէս տիպ վերջին կուսական ծնողին ի յօր վախճանին:
Զոր հայցմամբ գընդին, դրոշմեաց զկիպարին՝ մածմամբ յերեսին,
Այն ի բերկրութիւն սուրբ մետասանին, որպէս դու Կուսին,
Զայն Բարդուղիմին, բերեալ Հայկազնին[4]՝ զքեզ Մագիստրոսին:
Այն կայ պահեստին Ռըշտունեաց յերկրին, ի Հոգեց վանին[5]:
Իսկ դու յայտնագոյն յԱյրարատ երկրին՝ ի Հայու Թառ սուրբ ուխտին:
Ահա՛:

**Վ**ասն այս ըստ կարգի կարճառօտ պատմի սակս այս պատճառի,
Թէ ուր եւ ուստի եկն յայսըմ տեղի Փրկիչս աշխարհի,
Զոր յետ Քրիստոսի, տիպս այս նազելի ի Հռոմ վերածի:
Իսկ Մագիստրոսի, Գրիգոր Հայկազնի, յետ ժամանակի,
Շինէ տեղ ուխտի, յիւրում կայանի՝ ի Տարուն երկրի:
Ի սմանէ որդի Վահրամ պատանի, ի Հռոմ յուղարկի,
Խըդրել փափաքի, զտիպս այս հրաշալի, տալ իւր նահանգի:
Իսկ սորին որդի յոյժ վերապատուի ի գահըն Հռոմի,
Եւ տըվեալ զխընդրելի զգանձն անթաքչելի առանց պատճառի:
Առեալ գալ անտի՝ զտիպս այս տենչալի, սըրտիւ բերկրալի:
Իսկ Մագիստրոսի՝ մեծաւ հանդիսի՝ ընդ յառաջ շարժի,
Ի ծունկս անկանի՝ դրոշմին Քրիստոսի, յորդ արտասուելի:
Բարձեալ ի յուսի, բերեալ դնէ յուխտի, յարկ իւր կայանի,
Իսկ յետ այս բանի, յետ ժամանակի աւուրք անցանի,
Վասիլ արքայի՝ Գէորգ իշխանի, ոստ Բագրատունի,
Փոխելով անտի, բերեն հըրճուալի տունս Այրարադին,
Յիւր հիմնարկելի ուխտըն հրաշալի՝ որ Հայու Թառի:
Ահա՛:

3. Նկատի ունի Մովսեսի՝ Սինա լեռան վրա ստացած աստվածատուր օրինաց տախտակները:
4. Բնագրում, թերեւս վրիպմամբ՝ «հակազին»:
5. Նկատի ունի Աստվածամոր պատկերը, որն ըստ ավանդության Հայաստան է բերել Բարդուղիմոս առաքյալը եւ որը դրվել է Վասպուրականի Հոգյաց վանքում:



**Ի**սկ Մագիստրոսին յորժամ եդ յարկին զտիպն աստուածային,
Արար խրախութիւն, տաւնախմբութիւն զեաւթն աւր միասին,
Եւ ի դեմս դրոշմին եւ յեկեղեցին երգեաց գովութիւն,
Զերգըս շարականին՝ «Զորս ըստ պատկերին», որք ի կարգ խաչին:
Դու Տէր Միածին զտիպ Քո բերկրածին. տաճար Քո կազմին,
Զնորոգեալ անձին տաճարս այս լիցին Քեզ ի բնակութիւն,
Եւ կեցո զորդին քում, Տեառն ծառային, զտիպս Քո բերողին,
Զպատուեալն ի Հռոմին, անդ ուր կա շիրիմ հաւատոյ Վիմին:
Որ զկենդանագրին զտիպդ աստուածային կերպիւ ծառային,
Շնորհեցեր կըրկին, դրոշմամբ ի փայտին մեզ յուսադրութիւն,
Որ եբեր յանձին զբարձօղ իւր բնաւին, զկերպ եւ զնմանութիւն,
Ի փառըս վերին, Հաւր Քո եւ Հոգւոյն սուրբ Երրեակդ անձին:
Ահա՛:

**Ե**րգեա վեհագոյն, երգեա գերագոյն, խորան բարձրագոյն,
Դուստր դու վերնոյն, Նոր Սիոն անուն, դշխո բարձրելոյն,
Ով Աստուծոյ տուն, կանկնեալդ ի վերջնոյն, գեր քան զառաջնոյն,
Շինեալդ ի սըրբոյն Մագիստրոս անուն, ազգաւ Պահլաւուն,
Քանզի Շնորհատուն ե՛տ քեզ գահոսն, զտիպն իւր հոմանուն:
Զաւծեալն ի Հոգւոյն ըզՓրկիչ անուն կոչմամբ Տիրուհոյն,
Զայն որ Խաչելոյն՝ շնորհել սըրբոհոյն՝ դրոշմամբ սիրելոյն[6],
Յըղձումն մարմնոյն, բերկրումըն հոգւոյն, մաւր տըրտմեցելոյն,
Եւ մեզ փարատումն յախտից եւ փըրկումն ի չար յամպրոպոյն:
Արդ, տաւնեա զտաւն դրոշմիս գերագոյն, մայր լուսո՝ Սիոն:
Գոչեա բարձրագոյն, կոչեա միաբուն զազգս Հայկազուն,
Զհովիւ քո արթուն, զպետ քո եւ զրաբուն մանկամբ քո սպասուն,
Սոքաւ միաբուն, մաղթեա Խաչելոյս վասն մեծ յուսոյն:
Զի յաւուրն յետնում առնէ արժանումն զմեզ խաչի լուսոյն:
Ահա՛:

**Լ**ըրմամբ րախանայ, լուսով զուարճանայ լեառըն Քօշանայ,
Ի տաւն այսմաւրեա առաւել ցընծայ՝ նըման Վարագայ,
Քանզի է ի նմա տեղին գերակայ, ուր Փըրկչին կայ,
Մեզ տըւեալն ընծա յարքաէն Վասլայ եւ Գորգ իշխանայ:
յԵրուսաղէմա արեգակնանա, յԱրեւելըս գայ՝ յերկիր Արամայ,
Գաւառ Գեղամայ, տունս Արարադայ, յաթոռ Տրդատայ,

6. Այս տողում Ամենափրկիչի մասին ուզում է ասել՝ որ Խաչյալի պատկերը Սրբուհուն՝ Աստվածամորը, շնորհվել է Քրիստոսի սիրելի աշակերտ Հովհաննեսի դրոշմամբ:

Եւ մեր Պարթեւայ որդոյն Անակայ, ի դիր Մեսրոպայ,
Ի տեղ Սահակայ, թարքմանչացն ի սմայ բնակի բազմամեայ,
Ի քով Քաւշանայ բըլրին Քարսաղեա:
Իսկ ի գալ սորա յուխտըն գերակայ, անդ ուր այժմ կայ,
Ձայնք ելին ի նմա, թէ՝ «ա՛ստ հաճեցայ՝ որում բնակեցա»:

Հընչեա հըրճւարան հընչմամբ մեծաձայն, լեառն արքայ Քօշան,
Իբըր Լիբանան կամ Սինէական եւ զԹփաւրական,
Իբրեւզ Պառնաման կամ զՏորոսական զլեառըն արհիական,
Իբրեւ զԿովկասան զԱւլոմպիաթան լերամբք մետասան,
Զի ի քեզ եղան յարկ եւ կայարան ուխտից մաքրական,
Զմեծըղ մենաստան, զոր կանգնեաց արքայն եւ Գէորք իշխան,
Եւ զտիպ տիրական կանգնեցին արձան յայդմ յարկ եւ խորան:
Ցընծա հրաշարան, ով համալսարան, ուխտ հըռչակ անուան,
Սուրբըդ մենաստան, Հայու Թառ անուան, թառ թարքմանութեան:
Ցընծայ մաքրական, մեղաց քաւարան սըրբոց բնարան,
Դիր նախադրական տեղի սըրբութեան եւ մաքուր կայան:
Ցընծա միաբան բազմահոյլ խորան, գըմբեթ յարկ երկայն:
Զի քեզ եղեալ կան դրոշմ իշխանական, տիպ արքայական:
Ցընծայ միաբան ուխտիք սըրբազան մանկամբ քո ական,
Սոքօք միաբան մաղթեա մաքրական դրոշմիտ տիրական,
Զի յաւուր լըրման յորժամ գայ փայլման լուսով գերազանց,
Զմեզ առնէ արժան, յիշեա եւ եւս զանձն:

**Ա**մենափըրկիչ դիւաց հալածիչ, այսոցն պատժիչ,
Ամենափըրկիչ լեգէոն գընդին իսպառ սատակիչ,
Ամենափըրկիչ բէլիար ռամից ընկճիչ եւ բեկիչ,
Ամենափըրկիչ սադելի սաքրիչ, սատանի սուզիչ.
Ամենափըրկիչ բեհաթին բեկիչ, չարին կործանիչ,
Ամենափըրկիչ յաւերժահասիչ, սաստիչ, սասանիչ,
Ամենափըրկիչ հիւանդաց բուժիչ, ախտից փարատիչ,
Ամենափըրկիչ տըկարաց զաւրիչ, ակնելոց կանկնիչ,
Ամենափըրկիչ գերեաց ազատիչ, կապելոց լուծիչ,
Ամենափըրկիչ, հեծելոց վարիչ, կարողացուցիչ
Ամենափըրկիչ պըսակ արքաից, պատիւ ռաբունից,
Ամենափըրկիչ, փառք քահանաից քոց պաշտաւնէից,
Ամենափըրկիչ, պարծանք Հայկազնից, տուն Քրիստոնէից,
Մեղաց մեր քաւիչ, աշխարհի փըրկիչ, կենաց պարգեւիչ:
Ողորմեա՛յ:



# 3. ՍԻՄԷՈՆ ՋՈՒՂԱՅԵՑԻ

## ԴՐՈՒԱՏԻՔ ՅՈՒԽՏՆ ՀԱՒՈՒՑ ԹԱՌ[1]

Սուրբ հայրք ու եղբարք ի միաբան,
Դուք լսեցէք սակաւիկ բան,
Ես Սիմէոնս յոյժ անպիտան
Եպիսկոպոս ծուլ ու անկենդան,
Վասն այս ուխտիս գերադրական
Բան դրուատեմ աղմարանման:

Սուրբ Հայոց թառ մեծ մենաստան,
Հայոց Մեծաց ազգիս լման,
Սուն լոյս կանկնեալ զուտ կարկեհան[2],
Ովոր յուսով առ քեզ կուգան,
Յոյժ հիանան զարմանազան:

Փոքրիկ բլուրս աւազանման,
Աթոռ կազմեալ մեծ հարսնարան
Քանց զսրբոհի մայրն աւհրնութեան,
Որ բնակեցաւ Աստուած Բան:

Սուրբն Սահակ, Մեսրովբ՝ թարքման,
Որ Սուրբ Հոգովն զաւրացան,
Սորա ըսկիսբը շինութեան,
Ի նոցանէ հաստատեցան:

Կաթողիկէս հանդիսարան,
Հաստակառոյց վիմարդեան,
Լոյսաբորբոք մայր հանրական
Գուբ եդ քաղցր հիացական:
Եկեղեցիս միւս այլ կան՝

1. Դրվատը գտնվում է Մատենադարանի թիվ 1204 մատյանում (թերթ 148բ): Հրատարակել է Գ. Հովսեփյանը, որը բնագրի մասին նշում է՝ «տարաբախտաբար աղավաղված տգետ գրչի արտագրությամբ» (տե՛ս Հավուց թառի Ամենափրկիչը, էջ 40, 105-107): Գրչի պարզունակ սխալներն ուղղում ենք, որոշ տեղերում տողատակում նշելով թե ինչպես է եղել բառը բնագրում:
2. Կարկեհան – հրագույն թանկագին քար:

Աստուածածին[3] անուանեցան,
Յոյժ գեղեցիկ ծաղկաց լման
Բարձրագումբեք[4] ու ինն խորան,
Բարձր տեղի կառայքմբման[5]:

Եկեղեցիք պայծառ ծագման,
Սուրբ Յարութեան կոչի անուան,
Յովսէփ ընտրեալ սուրբ զաւրական
Նորին նշխարք ի յանդ եդան,
Եւ այլ խորանք գառին զենման,
Շուրջ զնովաւ հաստատեցան,
Նշանք բազում տերունական[6],
Յոյժ գեղեցիկ[7] ծաղկանց նման,
Կան հաստատուն անդ միաբան:

Զանկակատուն որ ի յորջման,
Բարձրագումբէթ երկնից նման,
Պայծառ կարմիր լոյսոյ[8] նման,
Նաշխեալ գովաց ի Հայաստան,
Ով տեսանէ սայ ի լման,
Փառք, աւրհնութիւն Արարչին տան:

Տունս Աստուծոյ գաւիթանման,
Սուրբ ժամատունս ահեղ զարման,
Խարսխէ յարկ հաստատեցան,
Հաստակառոյց յոյժ[9] վիմարդեան,
Կարծր վիմանց համանման,
Ծանրագումբէթ[10] հիացական:

3. Բնագրում «Ածայծին»:
4. Բնագրում «Բարձրայգումեթ»
5. «կառայքմբման» անհասկանալի տառաշարքն ընդօրինակող գրչի սխալի հետեւանք է:
6. Նկատի ունի խաչքարերը:
7. Բնագրում «գեղեցեակ»:
8. Բնագրում «յոյսո»:
9. Բնագրում «ոյժ»:
10. Բնագրում «Ծանրագումէդ»:



Ի սուրբ ուխտիս ընդանրական
Քառսուն[11] սեղան ի սայ եդան,
Որ Քրիստոսի է զենարարան:
Սուրբ ուխտս՝ աթոռ իշխանութեան,
Ունի շնօրհն եաւթնաբեան[12]:
Սուրբ ուխտս՝ գետ եդեմական,
Ոռոգանէ զաշխարհս ամենայն:
Սուրբ ուխտս՝ աղբիւր անմահութեան,
Զովացուցիչ ոգոց մարդկան:

Մեծ Թագաւոր կայ աննման,
Տիպ Տերունոյն եւ տիրական,
Փրկիչ, քաւիչ եւ աւգնական,
Տեսլեամբ ահեղ եւ զաւրական,
Որ երկնային զաւրք ամենայն,
Ահէ սորայ սարսեալ դողան:
Միահամուռ սուրբք, որ աստ կան,
Ձեզ գոհութիւնի հազար[13] բերան,
Ես դանդաղաց միշտ երերամ,
Տարակուսաց[14] ի վայր մնամ,
…արժան[15]:

11. Բնագրում «Խ»:
12. Բնագրում՝ «եաւթնարբեան»
13. Բնագրում՝ «հզաւր»:
14. Բնագրում՝ «Տարեկուսաց»:
15. Վերջին տողը կազմելու ժամանակ կտրվել է եւ պահպանվել է միայն վերջին բառի ավարտամասը:

# 4. ՍԻՄԵՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՐԵՒԱՆՑԻ

## ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ՈՐԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ[1]

Այս վանքը, որը գտնվում է Գառնիի նահանգում, Հայոցթառ կոչված գյուղի մոտի բարձունքին, տաճկերեն կոչվում է նաեւ Ղզլվանք (այսինքն)՝ Կարմիր վանք: Հին ժամանակ է կառուցվել, Հայոց 133 (684) թվին, մեծ եւ քաջ Սմբատ Բագրատունու որդի Աշոտ Առաջին իշխանի ձեռքով, Սահակ Ձորափորեցու հայրապետության ժամանակ, որը գնաց Խառան՝ հանդիպելու Մահմեդին եւ այնտեղ էլ մեռավ: Քանզի այս Աշոտն իր որդուն ուղարկեց Կոստանդնուպոլիս, Հերակլի թոռ Կոստանդ թագավորի մոտ եւ բերեց անձեռագործ պատկերը Փրկչի, որ Ամենափրկիչ է ասվում, որը Քրիստոս նվիրեց իր Սրբուհի Աստվածածնին՝ նկարված փայտի վրա, որն այժմ գտնվում է Էջմիածնի Սուրբ Աթոռում: Որի համար էլ (Աշոտը) կառուցեց այս հրաշալի վանքը՝ հանուն նույն անձեռագործ պատկերի, այլեւ (վանքը) կոչեց Ամենափրկիչ: Եւ ինքը, զոհ գնալով Գրիգոր Մամիկոնյանի խարդավանքին, թաղվում է սույն վանքում:

Ապա ժամանակներ անց այս սուրբ վանքը վերստին նորոգեց (Գրիգոր Մագիստրոս Պահլավունին՝ որդին քաջ Վասակ Բջնեցու, որը քարընկեց եղավ Սերկեւիլ գյուղում): Նա գնեց նաեւ շրջակա բոլոր տարածքները՝ փողով, նվիրեց սույն վանքին՝ ի հիշատակ իրեն եւ իր որդի Վահրամի, որ նույն ինքը Գրիգոր Վկայասերն է, որը հետագայում դարձավ Սուրբ Էջմիածնի կաթողիկոս, նստել տվեց այս (վանքում) առաջնորդ, Հայոց 472 (1023) թվին, Տէր Սարգսի հայրապետության եւ Գագիկ Բագրատունի շահնշահի թագավորության ժամանակներում: Ապա վերոհիշյալ Գրիգոր Մագիստրոսը մինչ վերանորոգեց այս վանքը, նաեւ հարստացրեց այն հողերով եւ ջրերով, եւ իր որդուն դնել տվեց սրա առաջնորդ, ինչպես ասացինք: Որի համար էլ դրանից հետո, որպես հայրենի մուլք ունենալով այս (վանքը), որդիները, թոռները եւ հաջորդ տոհմակիցները մեկը մյուսին հաջորդելով (եղան) սրա առաջնորդը՝ ոչ միայն Հայոց իշխանության, այլեւ Պարսից թագավորների ժամանակներում, գրեթե մինչեւ մեր ժամանակները: Այդքան ժամանակ կանգուն էր այս վանքը, ինչպես որ պիտի տեսնենք առաջիկայում:

Եւ ժամանակի ընթացքում եկեղեցին, որ կառուցել էր Գրիգոր Մագիստրոսը, փուլ էր եկել: Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը կամեցավ վերստին կառուցել, որը եւ իրոք կառուցեց քարակոփ պատերը՝ հասցնելով մինչեւ կամարը, Հայոց 1170 (1721) թվին: Սակայն ժամանակի անհաջողության պատճառով գործն անավարտ մնաց: Եւ այդպես կիսատ էլ մնում է մինչեւ այսօր:

Եւ երբ Աստվածատուր կաթողիկոսը նորից էր կառուցում փուլ եկած պատերը, գտնվեց մի վիմագիր արձանագրություն, որի վրա վերոհիշյալ Գրիգոր Մագիստրոսը գրել էր իր հիշատակարանը, որն էլ արտագրելով դնում ենք այստեղ՝ ի գիտություն ապագա սերունդների:

Գրված է հետեւյալը. «**462 (1013) թվին, Գագիկի թագավորության եւ Տէր Սարգսի հայրապետության ժամանակներում, ես՝ Գրիգոր Մագիստրոսս, վերստին կառուցեցի այս եկեղեցին՝ ի հիշատակ ինձ եւ իմ ծնողների: Այլեւ այս աշխարհի տերերից գնեցի սրա շրջակա տարածքները՝ լեռներով եւ դաշտերով եւ ամեն ինչով՝ որ սրա չորս կողմերում են գտնվում՝ աջից եւ ձախից, դիմացից եւ հետեւից: Եւ որպես հիշատակ տվեցինք անջնջելի արձանագրությամբ, նաեւ աշխարհակալ թագավորի թղթով եւ կայսերական կնիքով, հաստատեցինք մեր իսկ ստորագրությամբ, նաեւ հայրապետական նամակով, եւ այս տաճարի նավակատիքին, որ կառուցեցինք, ընծայեցինք մեր սեփական եկեղեցուն, որը Հայոց թառն է, հանգստարան եւ օթեւան Հիսուս Քրիստոսի անձեռակերտ սուրբ պատկերի, որը փայտի վրա է եւ որը ստացել էր Հովհաննես Ավետարանիչը, մեր Տիրոջ մայր Սուրբ Աստվածածնի հրամանով: Եւ վերստին նորոգելով հաստատեցինք Սուրբ ուխտը, վերջինս (ավելի լավ), քան նախորդը: Այստեղ դրեցինք հավատի վեմը, Սուրբ Եկեղեցու հիմքը, Գրիգոր Վահրամ պիտանին**»:

1. Զամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոց շրջակայից վանօրէիցն, համաժողովեալ եւ շարագրեցեալ ի Սիմէօնէ կաթուղիկոսէ Երեւանցւոյ, Վաղարշապատ, 1873, էջ 275-280: Աշխարհաբարը՝ Սիմէոն կաթողիկոս Երեւանցի, Զամբռ (թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի), Երեւան, 2003, էջ 385-392: Ներկայացնում ենք աշխարհաբար թարգմանությունը որոշ թվականների ճշգրտմամբ (գրաբարի հետ համեմատությամբ) եւ արձանագրության հատվածում որոշ խմբագրությամբ (օրինակ՝ «հայրենիքը» թարգմանված էր «ծննդավայր», մինչդեռ տվյալ տեղում այն նշանակում է «սեփական»): Սիմեոն Երեւանցին «Զամբռի» նպատակին համապատասխան հանգամանորեն ներկայացրել է Հավուց թառի ունեցած կալվածքները, սակայն հատվածի սկզբում անդրադարձել է նաեւ Ամենափրկիչ խաչի ծագման պատմությանը, ուղենիշ ունենալով եկեղեցական տարբեր ավանդազրույցներ եւ 1013 թվականի արձանագրությունը: Բուն պատմական տեղեկությունները այստեղ հետին պլան են մղված, եղածներն էլ խառն են կամ անստույգ (օրինակ, 7-րդ դարում ապրած Աշոտ պատրիկին վերագրվել են 8-րդ դարում ապրած նույնանուն Բագրատունի իշխանի մահվան հանգամանքները եւ այլն): Քանի որ Ամենափրկիչ խաչի ծագման հարցը քննվել է մեր ուսումնասիրության մեջ, անհրաժեշտ չենք համարում այստեղ ծանոթագրություններ դնել: Ինչ վերաբերում է կալվածքների եւ 15-րդ դարից հիշատակվող առաջնորդների մասին տեղեկություններին, ապա դրանք չափազանց կարեւոր աղբյուր են վանքի ուշ շրջանի պատմության համար: Այդ հատվածի տվյալներն այս կամ այն չափով ներկայացված են ուսումնասիրության մեջ (ծանոթագրված են համապատասխան տերմինները, տե՛ս «պատմական խճանկար») եւ վանահայրերին նվիրված բաժնում:

Մինչեւ այստեղ է արձանագրությունը:

Արդ՝ այս վանքը մեր երկրում ունի առանձին թեմ ու վիճակ՝ Երեւան քաղաքը, Կոնդը, Նորագյուղը, Շենգավիթը, Ջրվեզը, Գառնի գյուղաքաղաքը, Գողթը եւ Հայոց թառը: Ունի նաեւ մուլքատու գյուղեր, որոնցից վերցնում է տասանորդ մուլք, որ հետեւյալներն են. Հայոց թառ, Կոտռոնց վանք, որ նաեւ Թարաքյամի գյուղ է կոչվում, Թառնիս եւ Ագարակ, որոնցից առնում է վեց դանկ մուլք: Այլեւ՝ Գողթ, Մանկուս, Ավանիկ, Դաղվերթ եւ Սուրբ Սարգիս, որոնցից (առնում է) երեք դանկ մուլք: Որոնց մանրամասներն այսպիսին են:

Վերը նշված Գրիգոր Մագիստրոսի ազգից, մեկը մյուսին հաջորդելով, այս վանքում առաջնորդ է նստում նույն Հայոց թառ գյուղից Զաքարիա վարդապետը: Թվում է, որ այս Զաքարիա վարդապետը մեկն է այն վարդապետներից, որոնք հեռացնում են Կիրակոսին եւ Գրիգոր Մակվեցուն դնում Էջմիածնի կաթողիկոս, Հայոց 892 (1443) թվին: Սա հիշում է Թովմա պատմիչը (Մեծոփեցին – Կ. Մ.): Արդ՝ սրանց, այսինքն՝ Մանկուս, Ավանիկ, Կուտիս, Հայոց թառ, Կոտռոց վանք, Ավանասար, Թառնիս եւ Սուրբ Սարգիս կոչված գյուղերի վեց վեց դանկ մուլքը, այլեւ Գողթի երեք դանկ մուլքը, որոնք կազմում են ինը գյուղ, այս Զաքարիա վարդապետը գնում է մի տանկից, որ կոչվում է Ամիրքյամալ Աբդինբեկ, որդին Հեյդարի որդի Նավրուզի՝ հինգ հազար դինարով, մահմեդական 894 եւ Հայոց 936 (1487) թվին, որի կալվածագիրը կարող ես գտնել գրանցման մատյանում.....: Որում ամեն մեկը գրվում է առանձին-առանձին, իրենց սահմաններով, որոնք են Գառնիի նահանգում: Մեր Օշականի վեց դանկ մուլքը նույնպես սույն Ամիրքյամալ Աբդինբեկը վաճառում է Սատիվախկազ կոչված մի տանկի, նույն թվին, ինչպես պիտի տեսնես Օշականի վերաբերյալ խոսքում:

Արդ՝ Զաքարիա վարդապետը, երբ գնում է սրանք, գնում է իր անունով, եւ Ամենափրկչի անունը երբեք չի նշում կալվածագրում, ոչ էլ գրել է տալիս, որ վախմ է (վանքին): Սրա պատճառն այն է, որ սրանք հնուց ի վեր եղել են ազատներ եւ անվանի մարդիկ, ազգով շատ եւ հարուստ, որոնցից թեպետ ոմանք դառնում էին վանականներ, ոմանք աշխարհիկներ, սակայն (ապրում) էին մեկ տան մեջ եւ (նույն) ունեցվածքով, եւ իրենցն էին համարում գյուղը եւ վանքը՝ հավասարապես: Որի համար էլ մինչ ինքը սույն վանքի առաջնորդն էր, գնում էր այսքան մուլքը՝ համարելով, թե վանքի համար է գնում, թեպետ իր միամտությամբ վախմ գրել չէր տալիս վանքին: Եւ այսքան մուլքը գնելուց հետո, երբ անցնում էր մի քանի տարի, հաստատվում է Պարսից Շեխ Օջախի տիրապետությունը, եւ նստում է Շահ Իսմայիլ Առաջինը, սույն Զաքարիա վարդապետը մի հրովարտակ է վերցնում Շահ Իսմայիլից, Մահմեդական … թվին, թե Ամենափրկիչ վանքը ամբողջությամբ մաղաֆ է, եւ որեւէ մեկին ոչ արքունի խարջ է տալիս, ոչ մուլք եւ ոչ այլ ինչ: Սա կարող ես գտնել գրանցման մատյանում…

Այնուհետեւ սույն Զաքարիա վարդապետից հետո, երբ փոխվում են ժամանակները, երբ նվազում են սրանց կարողությունն ու իշխանությունը, եւ երբ միմյանցից հեռանում են ազգականները (սրանց), սկսեց խտրականություն ընկնել (սրանց) վանականների եւ աշխարհականների միջեւ՝ մուլքի եւ մյուս ունեցվածքի հետ կապված: Եւ ուրիշներն անգամ այս ու այն կողմից վեճ էին հարուցում՝ հիշյալ մուլքի վերաբերյալ, եւ ուզում էին հափշտակել: Այլեւ գյուղացիները չէին կամենում մուլքը տալ: Որի համար էլ սրանց ազգականներից Զաքարիա եւ Համազասպ վարդապետներն այն ժամանակներում, բաժանելով Հայոց թառ, Մանկուս, Ավանիկ, Քաղբերդ եւ Սուրբ Սարգիս կոչված գյուղերի մուլքի կեսը, որը կազմում է երեք դանկ, առանձին վախմ են գրում Ամենափրկիչ վանքի անունով, տաճկերեն լեզվով, մահմեդական 933 թվին: Որը կարող ես գտնել գրանցման մատյանում…

Եվ սույն Զաքարիա վարդապետն այսպես անելուց հետո նաեւ երկու հրամանագիր է առնում Շահ Թահմազ Առաջինից հիշյալ գյուղերի վերաբերյալ, թե՝ «Պարտավոր եք ձեր մուլքը տալու Զաքարիա վարդապետին». սա կարող ես գտնել գրանցման մատյանում, մահմեդական 980 եւ 984 թվերին գրված:

Ապա ժամանակի ընթացքում նրանց աշխարհական ազգականները գուցե աղքատությա՞ն պատճառով, փողով վաճառում են, թե՞ կամովի տալիս են, թե՞ այլ բերումով,- չկարողացանք գիտենալ,- Հայոց թառի մնացած երեք դանկը, Կոտռոց վանք կոչվածի վեց դանկը, Թառնիս կոչվածի վեց դանկը, այլեւ Գողթ գյուղի երեք դանկը տալիս են սույն վանքին: Որոնց թղթերն, անկասկած, եղել են, իսկ թե որտե՞ղ է, չկարողացանք գիտենալ. պատճառը այս գլխի առաջաբանում ասացինք:

Արդ, մեր ժամանակ, երբ այս վանքը շեն էր, Հայոց թառի, Թառնիսի եւ Կտուց վանքի վեց դանկ մուլքը, (վանքն) առնում էր, երբ սրանք եւս շեն էին եւ տանկարճակ, նույնպես եւ Գողթ գյուղը, որը շեն էր եւ տալիս էր երեք դանկ մուլքը սույն վանքին: Իսկ Մանկուս, Քաղբերդ եւ Սուրբ Սարգիս (գյուղերը), որոնք մենք ամայի ենք տեսել, որոնց հողերը վարում էր այս վանքը, իսկ այժմ, երբ գրում ենք, ամբողջովին եւ վերջնականապես ամայի են այս վանքը եւ գյուղերը: Ո՜հ, ո՜հ, բավական է (այս մասին գրելը):

(Վանքի) վարելահողերը սրանք են: (Նախ), որ է Հղի տակը, Խորագետիկ կոչված տեղերը՝ ծայրից ծայր, որի սահմաններն են, արեւելյան կողմում՝ Դատենց հողը, հյուսիսային կողմում՝ Մեծ սելավատեղը, որը Արթոզլու սելավ է կոչվում, արեւելյան կողմում՝ Կոնդը, եւ հարավային կողմում՝ Հղի գլուխը: Այնուհետեւ, Ռեզանտափ կոչված հողը, այլեւ երկու Ծվարները մինչեւ Կատե-

պանի կոնդը, որոնք Հայոց թառի գյուղացիները վախմ են տելիս սույն վանքին: Սեփականագիրը կարող ես տեսնել՝ հայերեն (գրված)…

Այնուհետեւ, Ավազներ կոչված տեղից մինչեւ Սաբաթ աղբյուրը, այլեւ նույն Սաբաթ աղբյուրի ջուրը, Ջպաձորի ջուրը եւ Իշխանախոռ կոչված տեղին մերձակա աղբյուրը, սրանք բոլորը սույն վանքինն են՝ Գրիգոր Մագիստրոսի ժամանակվանից նվիրված:

Այնուհետեւ սույն գյուղում այս գյուղի բնակիչ Տեր Անդրեասը վաճառում է սույն վանքի առաջնորդ Սարգիս վարդապետին երեսուն սոմար (ցանելու) մեկ հողի տեղ՝ մեկ թումանով, մահմեդական 1157 թվին: Սրա կալվածագիրը կարող ես գտնել գրանցման մատյանում…

Այնուհետեւ, հինգ սոմար (ցանելու) տեղ հող եւս Գողթ գյուղում ունի այս վանքը, որը նույն գյուղացի Փիլումի որդի Մանուկն է վաճառել՝ հինգ հարյուր դինարով, Հայոց 1185 (1736) թվին: Կալվածագիրը կարող ես գտնել՝ հայերեն (գրված): Այլեւ այս գյուղում ունի երկու ջրաղաց: Այլեւ ունի նաեւ այս գյուղում մեկ պարտեզով առանձնատուն, որը ագուլեցի Աղասու որդի Խալաֆը վաճառում է սույն վանքին, սրա առաջնորդ Հովհաննես վարդապետի ձեռքով՝ վեց հազար դինարով, Հայոց 1194 (1745) թվին: Կալվածագիրը կարող ես գտնել հայերեն (գրված)…

Ունի նաեւ (խաղողի) այգիներ Երեւան քաղաքում, որոնք (վանքը) ձեռք է բերել հետեւյալ կերպ: Նախ, սրա առաջնորդ Մատթեոս վարդապետը գնում է մեկ այգի՝ իր հնձանով, Տերունի որդի Աստվածատուրից, քսանվեց թումանով, մահմեդական 1069 թվին: Սրա սահմաններն են նշվում՝ մահտեսի Հովհաննեսի այգին, որ հետո էլ սույն Հովհաննեսը վախմ է տալիս այս այգին սույն վանքին, Մրխանի այգին, որը Սուրբ Աթոռի վախմն է, Լոք Մահմադի եւ Քյություրի այգիները: Կարող ես գտնել կալվածագիրը գրանցման մատյանում...

Այս (խաղողի) այգու համար Աստվածատուրը հետագայում նաեւ մի սեփականագիր էլ է տալիս, Հայոց 1111 (1662) թվին: Դարձյալ, կից սույն այգուն, Գրիգորի որդի քալանթար Սահակը, ունենալով մեկ այգի, որի կեսը վախմ է տալիս սույն վանքին, որի սահմաններն են նշվում սույն այգու կեսը, մահտեսի Հովհաննեսի այգին, փողոցը եւ վերոհիշյալ Աստվածատուրի այգին, իսկ սրա կեսը միաբան Հովհաննես վարդապետն է գնում սույն Սահակից՝ երեք թումանով, եւ վախմ տալիս նույնպես սույն վանքին: Սրա սահմաններն են նշվում՝ նույն վերոհիշյալ (այգու) կեսը, Մրխանենց այգին, որը Սուրբ Աթոռի վախմնէ, եւ վերոհիշյալ Աստվածատուրի այգին: Կալվածագիրը եւ սեփականագիրը կարող ես գտնել գրանցման մատյանում: Դրանք գրվում են մահմեդական 1074 թվին:

Այնուհետեւ, վերոհիշյալ մահտեսի Հովհաննեսը, որն Ուլուբեկի որդին է, իր այգին, որն իբրեւ սահման նշվեց վերեւում, վախմ է տալիս սույն վանքին՝



վերջինիս առաջնորդ Մատթեոս վարդապետի ձեռքով, մահմեդական 1080 թվին. սրա սահմաններն են նշվում՝ Ամիրբեկի այգին, նույն վերոհիշյալ այգիները. կարող ես սեփականագիրը գտնել գրանցման մատյանում… Հետո այս (այգիները) միացնելով դարձնում են մի մեծ այգի: Այս մասին նշվեց ԺԴ գլխում, մաղաֆության վերաբերյալ խոսքում՝ (արքունի) դիվանի քարտուղարի թղթերում:

Այնուհետեւ, սույն վանքը Երեւան քաղաքում ունի մեկ առանձնատուն՝ իր պարտեզով, որ (կոչվում) է նաեւ Վանանց տուն, որը գնում է սրա (վանքի) առաջնորդ Մաղաքիա վարդապետը Գասպարի որդի Բաբիջանից՝ հիսուն դուռուշով, մահմեդական 1139 թվին: Սրա սահմաններն են Պետրոսի, Կարապետի, Բարխուդարի եւ Խուպանց Սավրազի տները եւ փողոցը: Կալվածագիրը կարող ես գտնել գրանցման մատյանում…

Ունի նաեւ Երեւան քաղաքում մեկ առանձնատուն եւս, որը գնում է սրա (վանքի) առաջնորդ Ազարիա վարդապետը Պողոսից՝ ութ հազար դինարով, մահմեդական 1158 թվին: Սրա սահմաններն են Պողոսի եւ Ազարիա վարդապետի տները, այլեւ մյուս երկու կողմը՝ փողոցը: Կալվածագիրը կարող ես գտնել գրանցման մատյանում…

Այնուհետեւ, Նորագյուղում ունի մեկ այգի՝ վեց տախտակի (չափով), որի չորս տախտակը վաղուց ի վեր վախմ են տվել, իսկ երկու տախտակը նույնի (վանքի) առաջնորդ Մաղաքիա վարդապետը գնում է Սուլեյման տաճկից՝ քսան դուռուշով, մահմեդական 1139 թվին: Կալվածագիրը կարող ես գտնել գրանցման մատյանում… Սրա վերաբերյալ կա նաեւ մեկ թուղթ՝ (տրված) փաշայից, գրված նույն թվին: Կարող ես գտնել գրանցման մատյանում …

Այնուհետեւ, սրա առաջնորդ Ազարիա վարդապետը, այս այգուն կից, գնում է նաեւ մեկուկես տախտակի (չափով) այգի՝ երեւանցի տեր Հովհաննեսից, երկու թուման եւ երկու հազար դիանով, մահմեդական 1162 թվին: Սրա սահմաններ են նշվում Դանիելի բաժինը, փողոցը, մոլլա Քյալբալու այգին եւ սարաջ Սալմանի այգին. կալվածագիրը կարող ես գտնել գրանցման մատյանում…

Այլեւ սրան կից եւս կես տախտակի (չափով) այգի ունի, որը տեր Մովսեսի որդի Հոսեփը գնում է սույն գյուղի բնակիչներից՝ երկու թումանով եւ տալիս է ի հիշատակ սույն վանքին, մահմեդական 1150 թվին: Սրա սահմաններ են նշվում վերեւի այգիները, Աբիսողոմի այգին, այլեւ Ջանգիբախարը: Այս կալվածագիրը նույնպես կարող ես գտնել գրանցման մատյանում...

Եւս մեկ այգի ունի (վանքը), կից սույն այգիներին, լուսարար Երամի անժառանգ Մատթեւոսինը, որը երեւանցիները վախմ են տալիս սույն վանքին, Հայոց 1196 (1747) թվին: Կարող ես գտնել հայերեն (գրված) սեփականագիր: Սրա սահմաններն են նշվում՝ Ավետի եւ Սալմանի այգիները, այլեւ փողոցը:

Եւս մեկ այգի, կից սույն այգիներին, ունի (վանքը)՝ մեկ մեծ տախտակի (չափով), որը կոնդեցի Կոնկորենց Հակոբը տալիս է սույն վանքին: Այժմ Անանիա առաքյալի (մենաստանն) է օգտվում դրա եկամուտներից:

Այլեւ Գառնիում ունի մեկ պարտեզ, որը մոտ է Սուրբ Աստվածածնի եկեղեցուն: Այլեւ սարալանջի հետեւի մասում մեկ հողատարածք, որը Գրիգորի հող է կոչվում: Այլեւ մեկ հողատարածք, որն անվանում են Դաստագյուլենց Կիրակոսի քարուտ: Այլեւ իրեն մոտիկ ունի սույն վանքը մեկ պարտեզ՝ վաղ ժամանակներից, Սուրբ Հարություն (եկեղեցու) ներքեւում, որը Հախնազարի որդի Խաչատուրն է տվել: Այլեւ մինչ Գրիգոր Մագիստրոսը վերահաստատում է այս սուրբ վանքը, սրա շրջակա վայրերը ամբողջովին փողով գնելով ի հիշատակ տալիս է սույն վանքին, ինչպես որ հայտնի է դարձնում գրված արձանագրությունը, որը վերը բերեցինք:

Երեւանի եւ Նորագյուղի այգիները, այլեւ Գառնիի ջրաղացները եւ մյուսները հիշվում են ԺԴ (14-րդ) գլխում, քննիչի թղթերի վերաբերյալ խոսքում:



# HAVUTS TAR MONASTERY

## SUMMARY

The monastery of Havuts Tar is one of the most ancient monasteries of Armenia. The Armenian Church history states that the monastery was built by Catholicos Sahak Parthev (398-449) and Mesrop Mashtots (361-440), the creator of the Armenia alphabet.

The monastery of Havuts Tar is located on the hills upper the village of Goght, between Garny and Geghard, the most famous religious monuments of Armenia.

The monastic complex is composed of two main grups of monuments. The main church (13th century) which is of the western group, is a crussiform type from the inside and rectangular from outside. The eastern group was reconstructed in the first half of the 18th century (1721).

The monastery of Havuts Tar was famous for the wooden carved cross known as “All Savior” (Amenaprkitch) kept there (now in St. Echmiadzin). The cross was the present of the Byzantine emperor Basil II (976-1025) to the Armenian king Gagik I (989-1017), later it was given to prince Gevorg the owner of the fortress of Keghi (Kakavaberd). In 1013 he probably donated the cross to the monastery of Havuts Tar.

The rising of Havuts Tar occurred during the 13-17th centuries and ruined by the earthquake of 1679. According to Catholicos Simeon Yerevantsi the monastery remained abandoned up to 1767.

Fortunately a manuscript written in the 14th century by Nathanael, the bishop of the monastery of Havuts Tar, contains various information unknown until now, has been added to previous sources. For instance, before we only knew that prince Gevorg was the owner of the fortress and the founder of the church, while Nathanael tells about prince Gevorg’s family, mentioning that in 1002 he built the Catoghike church that had nine apses. Then the author presents the list of prince Gevorg donations to the church.

Nathanael’s information added to the related historical documents and epigraphic data allows to complete the history of the famous monastery .

The book present highlights different aspects of the church activity, its cultural heritage, manuscripts, inscriptions, etc. It contains a list of priors.

# МОНАСТЫРЬ АВУЦ ТАР
## РЕЗЮМЕ

Авуц Тар один из древнейших монастырей на территории Армении, основание которого церковная традиция связывает с именами католикоса Саака Партева и создателя армянской письменности Месропа Маштоца. Монастырь Авуц Тар возвышается на холмах напротив села Гохт, находящегося между двумя самыми известными памятниками Армении, между Гарни и Гегардом. Монастырский комплекс состоит из двух основных групп памятников.

В средние века Авуц Тар был известен благодаря хранящемуся там деревянному украшенному резьбой кресту, известному как Аменапркич (Всеспаситель), находящемуся ныне в Св. Эчмиадзине. Византийский император Василий II (976-1025) подарил его армянскому царю Гагику I (989-1017), который передал его хозяину крепости Кеги (Какаваберд) князюГеворгу, а тот, скорее всего, в 1013 году подарил святыню Авуц Тару. О святыне было создано множество сказаний, и крест этот даже считался нерукотворным. Со временем священный крест дал имя монастырю, который стали называть монастырь Аменапркич.

В XIII-XVII вв. в Авуц Таре действовал скрипторий, и десятки переписанных там рукописей дошли до наших дней. Монастырь был знаменит также и в позднее средневековье. Достаточно отметить, что в первой половине XVII века игумены предстоятели Авуц Тара считались также предстоятелями города Еревана.

Монастырь очень пострадал во время землетрясения 1679 года. Была разрушена древняя церковь Катогике. Католикос Аствацатур Амаданеци решил из камней разрушенной церкви построить новую церковь (1721 г.), но из-за набегов лезгин это строительство осталось незавершенным. По свидетельству Симеона Ереванци к 1767 году монастырь был уже необитаем.

Недавно к известным прежде источникам по истории монастыря пребавились записи епископа Натанаэла (XIV в.), содержащие множество ценных сведений. Например, если раньше было только известно имя князья Геворга, который построил какую-то церковь в монастыре, то Натанаэл сообщает о роде князя, указывает что он в 1002 году построил церковь Катогике, имевшую девять апсид, перечисляет принесенные им дары, среди которых села Гохт и Ова и т.д. Сведения Натанаэла вместе с известними летописными и эпиграфическими данными позволяют обобщить и изложить историю знаменитого монастыря.





### Աղբյուրներ

Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան ձեռ. թիվ. 215, 427, 1204, 2838, 3681, 3759, 4160, 6271, 6764, 8100, 10154:

Աբրահամ կաթողիկոս Կրետացւոյ Պատմագրութիւն անցից իւրոց եւ Նատր-Շահին Պարսից, *Վաղարշապատ, 1870:*

Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, *քննական հրատ. Հ. Պէրպէրեանի, Բարիզ, 1960:*

Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, *աշխատասիրությամբ Լ. Խանլարյանի, Երեւան, 1990:*

Առաքել Դավրիժեցի, Պատմություն, *թարգմ., առաջաբանը եւ ծանոթագրությունները Վ. Առաքելյանի, Երեւան, 1988:*

Գիրք թղթոց, *Երուսաղեմ, 1994:*

Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, *հ. Բ, Վաղարշապատ, 1870:*

Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն, *աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի, Երեւան, 1999:*

ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, *կազմեց Լ. Խաչիկյան, Երեւան, 1950:*

ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ *(կազմող՝ Լ. Խաչիկյան), մասն Ա, Երեւան, 1955, մասն Բ, Երեւան, 1958, մասն Գ, Երեւան, 1967:*

Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, *աշխատասիրությամբ Կ. Մելիք Օհանջանյանի, Երեւան, 1961:*

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, *Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթեւոսյանի, Երեւան, 1988:*

Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, *ԺԳ դար, կազմեց Ա. Մաթեւոսյան, Երեւան, 1984:*

Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ, *հ. Գ, կազմեց Վ. Հակոբյան, Երեւան, 1984:*

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն (գրաբար, աշխարհաբար), *աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Գ. Թոսունյանի, Երեւան, 1996:*

Հովսեփեան Գ., Յիշատակարանց ձեռագրաց, *Անթիլիաս, 1951:*

Ղաֆադարյան Կ., Երեւան, միջնադարյան հուշարձանները եւ վիմական արձանագրությունները, *Երեւան, 1975:*

Ղեւոնդ, Արշաւանք արաբաց ի Հայս, *Փարիզ, 1837:*

Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, *կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, հ. Ա, Երեւան, 1984:*

Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, *կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. Ե, Երուսաղեմ, 1971:*

Մատենադարանի պարսկական վավերագրերը, I, հրովարտակներ, *պր. Ա, կազմեց Հ. Փափազյան, Երեւան, 1956:*

Մատենադարանի պարսկական վավերագրերը, կալվածագրեր, *պր. Ա, կազմեց Հ. Փափազյան, Երեւան, 1968:*

Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն *(աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները Հ. Բարթիկյանի), Երեւան, 1991:*

Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, *Մոսկվա, 1860:*

Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, *Երեւան, 1991:*

Ջամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոց շրջակայից վանօրէիցն, համաժողովեալ եւ շարագրեցեալ ի Սիմէօնէ կաթուղիկոսէ Երեւանցւոյ, *Վաղարշապատ, 1873, աշխարհաբարը՝ Սիմեոն կաթողիկոս Երեւանցի, Ջամբռ (թարգմանությունը, առաջաբանը, ծանոթագրությունները Վ. Համբարձումյանի), Երեւան, 2003:*

Սարգիսեան Բ., Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, *հ. Ա, Վենետիկ, 1914:*

Ստեփանոս Օրբէլեան, Պատմութիւն նահանգին Սիսական, *Տփղիս, 1910:*

Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, *թարգմանությունը, ներածությունը եւ ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երեւան, 1986:*

Վարդան Արեւելցի, Տիեզերական պատմություն, *(գրաբար տեքստը ըստ Վենետիկի 1862 թ. տպագրության), աշխարհաբար թարգմանությունը Գ. Թոսունյանի, Երեւան, 2001:*

Ցուցակ հայերէն ձեռագրաց Ս. Նշան վանուց ի Սեբաստիա, *կազմեց Թորգոմ արքեպս. Գուշակեան, Վիեննա, 1961:*

Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, *հ. Ա, կազմ.՝ Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970:*

## Գրականություն

Ալիշան Ղ., Շիրակ, *Վենետիկ, 1881:*

Ալիշան Ղ., Այրարատ, *Վենետիկ, 1890:*

Աղասյան Ա., Հակոբյան Հ., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, *Երեւան, 2009:*

Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, *հ. Դ, Երեւան, 1948:*

Այվազյան Ա., Հայոց եկեղեցին 18-րդ դարի հայ ազատագրական շարժման քառուղիներում, *Երեւան, 2003:*

Ավագյան Ս., Վիմական արձանագրությունների բառաքննություն, *Երեւան, 1978:*

Արեւշատյան Ա., Ո՞վ է «Ջոր ըստ պատկերին քում» շարականի հեղինակը, *Էջմիածին, 1997, Դ-Ե, էջ 106-115:*

Բացատրութիւն շարականաց, աշխատասիրեալ՝ Գաբրիէլի Աւետիքեան, *Վենետիկ, 1814:*

Եղիազարյան Հ., Հավուց թառի վանքը, *«Էջմիածին», 1963, Ե, էջ 25-31, Ջ, 38-49:*

Զաքարյան Է., Աղջոց Սուրբ Ստեփանոս, *Երեւան, 2007:*



Էջմիածնի գանձեր, *Ս. Էջմիածին, 1984:*

Թահմիզյան Ն., Գրիգոր Նարեկացին եւ հայ երաժշտությունը V – XV դդ., *Երեւան, 1985:*

Կոստանեանց Կ., Հին յիշատակներ, *«Արարատ», 1897:*

Հակոբյան Թ., Երեւանի պատմությունը, *Երեւան, 1969:*

Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ *ԳԱԱ հրատ., հ. 3, Երեւան, 1976:*

Հայ ժողովրդի պատմություն, ՀՀ *ԳԱԱ հրատ., հ. 4, Երեւան, 1972:*

Հայոց նոր վկաները (գիտական հրատ.), *աշխատասիրութեամբ Յ. Մանանդեանի եւ Հ. Աճառեանի, Վաղարշապատ, 1903:*

Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, *Երեւան, 1992:*

Հովսեփյան Գ., Նյութեր եւ ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության, *հ. Բ, Երեւան, 1987 առաջին հրատարակությունը՝ Յովսեփեան Գ., Հաւուց թառի Ամենափրկիչը եւ նոյնանման յուշարձանները հայ արուեստի մէջ, Երուսաղէմ, 1937:*

Հովսեփեան Գ. , Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, *Անթիլիաս, 1969:*

Ղաֆադարյան Կ., Հովհաննավանքը եւ նրա արձանագրությունները, *Երեւան, 1948:*

Մաթեւոսյան Ա., Վեհափառական երկու Ավետարան, *«Էջմիածին», 1994, Թ-Ժ, 32-33:*

Մաթեւոսյան Կ., Գրիչ եւ մանրանկարիչ Իգնատիոս Հոռոմոսցի, *«Բանբեր Երեւանի համալսարանի», 1982, N 1, էջ 121-133:*

Մաթեւոսյան Կ., Անի, *Ս. Էջմիածին, 1997:*

Մաթեւոսյան Կ., Հավուց թառի վանքի եւ Ապիրատյան տոհմի պատմության նորահայտ տվյալներ, *«Բանբեր Մատենադարանի», 17, Երեւան, 2006, էջ 147-167:*

Մաթեւոսյան Կ., Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, *Երեւան, 2009:*

Մաթեւոսյան Կ., Գրիգոր Ապիրատ Մագիստրոսը եւ նրա տոհմը 11-րդ դարում, *«Բանբեր Մատենադարանի», թիվ 18, Երեւան, 2008, էջ 67-93:*

Մաթեւոսյան Կ., Անի-Շիրակի պատմության էջեր (հոդվածների ժողովածու), *Երեւան, 2010:*

*Շահխաթունեանց Յովհ., Ստորագրութիւն Կաթողիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, հ. Բ, Էջմիածին, 1842:*

Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, *հ. Բ, Վենետիկ, 1785:*

Պետրոսյան Հ., Գառնին 9-14-րդ դարերում, *Երեւան, 1988:*

Պետրոսյան Հ., Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, *Երեւան, 2008:*

Սարգսյան Գ., Հավուց թառի հիմնադրման վկայագրի շուրջ, *«Լրաբեր» հաս. գիտ., 1988, N 4, էջ 65-71:*

Սարգսյան Գ., Վիմագրագիտական նորոյթներ. Հաւուց թառ, *«Հանդէս ամսօրեայ», 2001, էջ 230-254:*

Սարգսյան Գ. , Գրիգոր-Ապիրատ Հասանյան. Հիմնադիր Կեչառիսի վանքի (վիմագրական նոր վկայություն), *«Հին Հայաստանի մշակույթը» ժողովածու 12, Երեւան, 2002:*

Սարգսյան Գ., Վկայաբանությունները որպես պատմաաշխարհագրական սկզբնաղբյուր, *ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Հայոց պատմության հարցեր, գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երեւան, 2005, էջ 173-182:*

Սրուանձտեանց Գ., Թորոս Աղբար, *հ. Ա, Կ. Պոլիս, 1879, էջ 233, հ. Բ, Կ. Պոլիս, 1884:*

Տեր-Դավթյան Ք., Հայկական սրբախոսություն, *Երեւան, 2011:*

Օրմանեան Մ., Ազգապատում, *հ. Ա, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001:*

Материалы по археологии Кавказа, *вып. 13, Москва, 1916.*

S. Der Nersesian, Armenian Art, *Paris, 1977, p. 114.*

A. Kalantar, The Mediaval inscriptions of Vanstan. *Ermenia, Neuchatel-Paris, 1999.*





Աբաս Բագրատունի թագ. *17*
Աբրահամ Կրետացի կթղ. *64*
Աբրահամ վրդ. Հավուց թառի *36*
Աբրահամ (Հավուց թառի միաբ.) *39*
Աբրահամյան Ա. Ա. *53*
Ակարիա վանահայր Հավուց թառի *84, 85, 105*
Աթանաս (կարծեցյալ) *42*
Ալիշան Ղեւոնդ *7, 10, 24*
Ակինյան Ներսես *23*
Աղասի *104*
Աճառյան Հրաչյա *41*
Ամենաղեկ *57*
Ամենավագ *31*
Ամենտիկին *56*
Ամիր *42*
Ամիր Սարգիս Նորագավթեցի *42*
Ամիրբեկ *36*
Ամիրզա *43*
Ամիրքյամալ Աբդինբեկ *102*
Ամսայջան *44*
Անակ *96*
Անդրեաս քհ. *104*
Անտոն (Հավուց թառի միաբ.) *39*
Աշոտ Բ Երկաթ թագ. *16, 18*
Աշոտ Գ Ողորմած թագ. *17, 21*
Աշոտ Դ Բագրատունի թագ. *18*
Աշոտ (աշակերտ Սարգիս քհ.-ի) *35*
Աշոտ (Լիլիփարի որդի) *51*
Աշոտ պատրիկ Բագրատունի *20, 21, 27, 28, 100*
Ապիրատ *տե՛ս* Գրիգոր Ապիրատ
Ապլջահապ *19*
Առաքել Դավրիժեցի *6, 59, 60, 83*
Աւլեր *36*
Աստվածատուր Գառնեցի *82*
Աստվածատուր Երեւանցի *104*
Աստվածատուր Համադանեցի կթղ.- *30, 45, 64, 101*
Աստվածատուր վրդ. *58*
Ավագ աթաբեկ (որդի Իվանեի) *36*
Ավագ պարոն *58*
Ավագյան Սուրեն *57*
Ավետիք (Հավուց թառի միաբ.) *39*
Ավետիքյան Գաբրիել *28*
Արապ խաթուն *43*
Արեւշատյան Աննա *27*
Արեւտիկին *35*
Արկադիոս կայսր *9*
Արշակունիներ *10, 12, 18*
Արքա *35*

Բաբիջան (որդի Գասպարի) *105*
Բագրատունիներ *18, 52, 94, 100*
Բախտուտ *50*
Բարդուղիմեոս առաքյալ 94
Բարխուդար *105*
Բարսեղ Ա Անեցի կթղ. *19*
Բեյթ-ուլ-մալ *63*
Բեսութա *36*
Բեսուլան *42*

**Գ**աբրիել Վրաց կթղ. *91*
Գագիկ Ա Բագրատունի թագ. *5, 13-15, 18, 22-25, 91, 101*
Գագիկ Արծրունի թագ. *52*
Գագիկ Բ Բագրատունի թագ. *25*
Գեւորգ Բ Գառնեցի կթղ. *12, 89*
Գեւորգ Դ Կոստանդնուպոլսեցի կթղ.- *64, 84*
Գեւորգ (Գէորք) իշխան *5, 8, 13-19, 22, 23, 26, 27, 47, 48, 55, 59, 91, 94-96*
Գեւորգ (Հավուց թառի միաբ.) *33*
Գեւորգ «Մարզպետունի» *16-18*
Գեւորգ նվիրատու *58*
Գեւորգ վանահայր Հավուց թառի *35, 81, 85*
Գոռ *16, 17*
Գրիգոր աբղ. ծաղկող *38*
Գրիգոր Ապիրատ *13-15, 18, 19, 56, 59, 91*
Գրիգոր Ա Լուսավորիչ կթղ. *8, 25, 41, 90*
Գրիգոր Բ Վկայասեր կթղ. (*տե՛ս նաեւ* Գրիգոր Վահրամ պատանի) *25, 28, 81, 101*
Գրիգոր Գոնթնոնց քհ. *57*
Գրիգոր գրիչ Հավուց թառի *36, 37, 46*
Գրիգոր գրիչ (*16*-րդ դ.) *40*
Գրիգոր Է Անավարզեցի կթղ. *36, 81*
Գրիգոր Ժ Ջալալբեկյանց կթղ. *102*
Գրիգոր Խուլ *40*
Գրիգոր «կատեպան» *56*
Գրիգոր (հայր Շրուիկի) *58*
Գրիգոր (հայր Սահակ քալանթարի) *104*
Գրիգոր Մագիստրոս Պահլավունի *14, 15, 21-30, 47, 81, 94, 95, 100-102, 106*
Գրիգոր Մամիկոնյան (*7*-րդ դ.) *21, 62*
Գրիգոր Մամիկոնյան (*8*-րդ դ.) *100*
Գրիգոր «մեծ եպս.» Բջնիի *35, 36, 81*
Գրիգոր (մտերիմ Ումեկի) *37*
Գրիգոր շպետ *56, 57*
Գրիգոր Վահրամ պատանի *21, 24-29, 94, 101, 102*
Գրիգոր վանահայր Հավուց թառի *31, 32*
Գրիգոր Տաթեւացի *63*
Գրիգորես (Հավուց թառի միաբ.) *35*
Գրիգորես վրդ. *35*

**Դ**անիել վրդ. Սեւանեցի *38, 47*
Դավիթ գրիչ *37, 38*
Դավիթ Դվնեցի *62, 90, 91*
Դավիթ կայմող խաչքարի *58*

Դավիթ (Հավուց թառի միաբ.) 39

**Ե**ղիա վանահայր Հավուց թառի 32, 33, 63, 81, 85
Եղիա «Աւղասենց» 58
Եղիազարյան Հ. 48
Եղիա քհ. (Հավուց թառի միաբ.) 33
Ենոք 36
Եսուական 37
Երամ լուսարար 105

**Զ**աքարիա Ա վանահայր Հավուց թառի 38, 82, 85, 102
Զաքարիա Բ վանահայր Հավուց թառի 29, 63, 82, 85, 102
Զաքարիա Գ վանահայր Հավուց թառի 82, 85, 103
Զաքարիա (որդի Խոշաքի) 36
Զաքարիա Քանաքեռցի 6, 64, 84
Զաքարյաններ 19, 34, 43

**Է**մին (մայր Ստեփանոսի) 39
Էրմանի 42

**Թ**ադեոս առաքյալ 62
Թահմազ շահ 103
Թամար (պարոն) 42-44
Թամար (քույր Մխիթար վրդ.-ի) 57
Թանգուք 43
Թադեոս (Հավուց թառի միաբ.) 33, 34
Թերզյան Գալինա 5
Թերզյան Ռաֆայել 5
Թովմա Մեծոփեցի 6
Թովմա Վանանդացի 52
Թորոս իշխան 92
Թուխիկ 50
Թովմա Մեծոփեցի 63, 82

**Ի**գնատիոս գրիչ 32-34, 37, 46, 81
Իսմայիլ շահ 102
Իվանե Զաքարյան 33, 36

**Լ**իլիփար 51

**Խ**ալաֆ 104
Խաչատուր Երեւանեցի 40, 59
Խաչատուր (որդի Հախնազարի) 106
Խաչիկյան Լեւոն 9, 40
Խլկեցի 38
Խոյանձա 36
Խոշաք 36
Խոռաս 34
Խոսրովիդուխտ 89
Խոցադեղ 35
Խուցիկ 58
Խուպանց Սավրազ 105

**Կ**ատրամիդե թագուհի 13, 22
Կարապետ Գառնեցի 37
Կարապետ (Երեւանցի) 105
Կիրակոս Ա Վիրապեցի կթղ.- 38, 82, 102
Կիրակոս Գանձակեցի 6, 32, 81
Կոստանդին Ա Բարձրբերդցի կթղ.- 62
Կոստանդին Ը կայսր 22
Կոստանդին Մոնոմախ կայսր 25
Կուկոր պարոն 56
Կունդիկ 58

**Հ**ազարշահ 56
Հախնազար 106
Հակոբ Դ Ջուղայեցի կթղ. 84
Հակոբ Կոնկորենց (կոնդեցի) 106
Հակոբ սրկ. -48
Հակոբ փակակալ Հավուց թառի 33
Հակոբ (Հավուց թառի միաբ.) 39
Համազասպ Ա վանահայր Հավուց թառի 82, 85, 103
Համազասպ Բ վանահայր Հավուց թառի 35, 59, 83, 85
Համբարձումյան Վազգեն 54
Հայրապետ գրիչ Ուռընկարում 42
Հայրապետ (Հավուց թառի միաբ.) 33, 34
Հասան (Գեւորգ իշխանի հայր) 13-16, 19, 91
Հասան (Գեւորգ իշխանի որդի) 19
Հասան (Սմբատի որդի) 19, 55
Հեթում Բ թագ. 36
Հերակլ կայսր 100
Հզարդեղ 35
Հովհաննես Ա վանահայր Հավուց թառի 35, 81, 85
Հովհաննես Անեցի 56
Հովհաննես ավետարանիչ 20, 24, 26, 29, 93, 95, 101
Հովհաննես Բ վանահայր Հավուց թառի 37, 82, 85
Հովհաննես Գ վանահայր Հավուց թառի 82, 85
Հովհաննես Գ Օձնեցի կթղ. 91
Հովհաննես Դ վանահայր Հավուց թառի 60, 83, 85
Հովհաննես Ե Դրասխանակերտցի կթղ. 8, 11, 12, 16, 89
Հովհաննես Ե վանահայր Հավուց թառի 84, 85, 104
Հովհաննես Զ Սսեցի կթղ. 33
Հովհաննես Երեւանցի 105
Հովհաննես (Հավուց թառի միաբ.15-րդ.դ.) 39
Հովհաննես (հայր Սիմեոն-Պետրոսի) 35
Հովհաննես (հայր Ստեփանոս գրչի) 39
Հովհաննես (հայր Ներսեսի) 58
Հովհաննես մահտեսի 104
Հովհաննես Մեծոփեցի 63
Հովհաննես մետրոպոլիտ Սյունիքի 22
Հովհաննես (մտերիմ Ումեկի) 37
Հովհաննես Ոսկեբերան 9
Հովհաննես Ոսկեփորիկ 24
Հովհաննես (որդի Ստեփանոս գրչի) 39
Հովհաննես պարոնտեր 37
Հովհաննես Ջուղայեցի 40
Հովհաննես Սմբատ թագ. 14, 18, 91
Հովհաննես (ստացող Շարակնոցի) 38
Հովհաննես փակակալ Կաթողիկեի 47
Հովհաննես Քուրդ վրդ. 23, 30
Հովսեփ (ազգական Ստեփանոս գրչի) 39
Հովսեփ Արիմաթացի 20, 93
Հովսեփ Գայլկոնց 58
Հովսեփ (եղբայր Հովհ. փակակալի) 34
Հովսեփ նոր վկա 51, 62, 63, 92
Հովսեփ (տեր Մովսեսի որդի) 105
Հովսեփ փակակալ Հավուց թառի 33
Հովսեփյան Գարեգին 7, 8, 21-26, 41, 42, 47, 48, 57
Հռիփսիմյաններ 8

**Ղ**ազան խան 36
Ղազար (Հավուց թառի միաբ.) 39
Ղեւոնդ պատմիչ 20
Ղուկաս (Հավուց թառի միաբ.) 39

**Մ**ահան 56
Մահեւան 36
Մահմեդ (Մուհամմեդ իբն Օկբա) 100
Մաղավ խաթուն 43
Մաղաքիա վանահայր Հավուց թառի 84, 85, 105
Մամխաթուն 36
Մամքան 58
Մանաս Երեւանցի 42, 59
Մանվել Բջնեցի եպս. 9, 12, 18, 24-29, 93
Մանուել վանահայր Հավուց թառի 83, 85
Մանուել (Հավուց թառի միաբ.) 39
Մանուկ 104
Մաշտոց Եղիվարդեցի կթղ.- 89
Մատթեոս (Հավուց թառի միաբ. 13-րդ դ.) 35
Մատթեոս (Հավուց թառի միաբ. 15-րդ.դ.) 39
Մատթեոս Ջուղայեցի վրդ. 62
Մատթեոս վանահայր Հավուց թառի 84, 85
Մատթեոս Ուռհայեցի 14, 16, 19
Մատթեոս քհ. Հավուց թառի 37
Մարեմտեր 50
Մարեմտիկին 31
Մարիամ Աստվածածին 20, 24, 29, 93, 94, 100, 101
Մարկոս (Հավուց թառի միաբ.) 33
Մարկոս վանահայր Հավուց թառի 84, 85, 104
Մելքիսեդեկ 37
Մեհեւան 50
Մեսրոպ Մաշտոց 5, 8-12, 41, 90, 96, 97
Միքայել վանահայր Հավուց թառի 64, 84, 85
Մլքան խաթուն 58
Մխիթար Այրիվանեցի 6, 13, 16, 59
Մխիթար Անեցի 15
Մխիթար (դեռաբոյս քհ.) 36, 37
Մխիթար (Հավուց թառի միաբ.) 33
Մխիթար (հայր Գրիգոր գրչի) 36
Մխիթար վանահայր Հավուց թառի 81, 85
Մխիթար վարդապետ նվիրատու 57
Մխիթար քհ. վարդպետ 32, 50
Մկրտիչ գրիչ 60, 83
Մկրտիչ վանահայր Հավուց թառի 83, 85
Մովսես Գ Տաթեւացի կթղ. 83
Մովսես եպս. Մովսիսյան 5
Մովսես մարգարե 93
Մովսես վանահայր Հավուց թառի 84, 85
Մովսես քհ. 105
Մուրացան 17

**Յ**ակոբ *տե՛ս* Հակոբ
Յովհաննես *տե՛ս* Հովհաննես
Յովսեփ *տե՛ս* Հովսեփ

Նաթանայել վանահայր Հավուց թառի 5-14, 16, 19, 21, 23, 25, 31, 37, 41-44, 53-55, 62, 82, 85, 89-91
Ներսեհ Կամսարական 21
Ներսես (աշակերտ Թադեոսի) 33
Ներսես Գ Շինող կթղ.- 90
Ներսես (որդի Հովհաննեսի) 58
Ներսես Չարաբերդցի 57
Նիկոդեմոս 20, 93
Նրջիս 35

**Շ**ահեն 63, 82
Շահխաթունյանց Հովհաննես 7, 24, 25, 81
Շահնշահ Գ Զաքարյան 42-44
Շարապար 35
Շաքար 58
Շեխ Օջախ 102
Շիրիկ 58
Շողակաթ
Շրվանշահ Զաքարյան 42-44
Շրուիկ 58

**Ո**ներիոս կայսր 9

**Չ**ալապի (պարոն, իշխանաց իշխան) 37
**Չ**ամչյան Միքայել 17

**Պ**ալճյան Սիրանույշ 31
Պահլավունիներ 13, 25, 95
Պետրոս առաքյալ 28
Պետրոս Երեւանցի 105
Պողոս Երեւանցի 105
Պողոս վանահայր Հավուց թառի 81, 85

**Ջ**իհանշահ 82

**Ռ**ատ 37

**Ս**աթար 57
Սահակ Ա Պարթեւ կթղ. 5, 8-12, 41, 53, 90, 96, 97

Սահակ Գ Ձորափորեցի կթղ. 100
Սահակ քալանթար 104
Սահմադին 36
Սամվել Անեցի 6, 9, 42, 44, 82, 89, 90, 91
Սամվել (ազգական Ստեփանոս գրչի) 39
Սատիվախկապ 102
Սարգիս աբղ. 58
Սարգիս Ա Սեւանցի կթղ. 13, 15, 101
Սարգիս Երեւանցի 50, 59
Սարգիս ծեր քհ. Հավուց թառի 37
Սարգիս կրոնավոր Հավուց թառի 40
Սարգիս (հայր Գրիգոր Գոնթնոցի) 57
Սարգիս (հայր Հովհ. Անեցու) 56
Սարգիս (հայր Տիկնացտիկնոջ) 56
Սարգիս (մտերիմ Սիմեոն-Պետրոսի) 35
Սարգիս (մտերիմ Ումեկի) 37
Սարգիս վանահայր Հավուց թառի 83, 85, 104
Սարգիս փակակալ Հավուց թառի 39
Սարգիս քհ. (Հավուց թառի միաբ.) 35
Սարգիս քհ. (12-րդ դ.) 92
Սարգիս քհ. (Այրիվանքից) 37
Սարգիս (քեռի Ներսես Չարաբերդցու) 57
Սարգիսյան Բարսեղ 33
Սարգսյան Գագիկ 7, 23, 48, 50, 51, 55, 84, 92
Սեթ (Հավուց թառի միաբ.) 35
Սիմավոն (Հավուց թառի միաբ.) 35
Սիմեոն Երեւանցի կթղ. 5, 6, 24, 25, 29, 54, 60, 63, 84, 100
Սիմեոն Ջուղայեցի վանահայր Հավուց թառի- 40, 47- 52, 59, 60, 64, 83, 85, 97
Սիմեոն-Պետրոս գրիչ 35, 81
Սիսոեւ Ն. 7
Սմբատ Ա Բագրատունի թագ. 53
Սմբատ Բագրատունի 100
Սմբատ (Գեւորգ իշխանի թոռ) 19, 55
Սմբատ Մագիստրոս 13
Սմբատ (որդի Աշոտ պատրիկի) 20, 22
Սոսթենես (Հավուց թառի միաբ.) 35
Ստեփանոս գրիչ Հավուց թառի 38, 39, 46
Ստեփանոս Լեհացի 40
Ստեփանոս (հայր Գեւորգի) -
Ստեփանոս Հովհաննիսյանց 58
Ստեփանոս (Հռիփսիմյանների ընկ.) 8
Ստեփանոս վանահայր Հավուց թառի 84, 85
Ստեփանոս Օրբելյան 6, 22, 53, 81
Սրապիոն Ուռհայեցի 83

Սուլեյման 105
Սուլթան Մելիք (քույր Ստեփանոս գրչի) 39
Սուրհան *տե՛ս* Դավիթ Դվնեցի

Վազգեն Ա կթղ. 31
Վահրամ Երեւանեցի 50, 59
Վահրամ Պահլավունի 13
Վահրամ (պատանի) *տե՛ս* Գրիգոր Վահրամ պատանի
Վասակ (Գր. Ապիրատի որդի) 19
Վասակ Պահլավունի 100
Վասիլ Բ կայսր 5, 21, 22, 26, 27, 91, 94, 95
Վարդ (եղբայր Հովհ. փակակալի) 34
Վարդ (Հավուց թառին օժանդակող) 50
Վարդան Արեւելցի 6, 15, 62
Վարդան վրդ. 35
Վարդան քհ. 40
Վարդան Քեղեցի 56
Վարդիկ (Հավուց թառի միաբ.) 33
Վեստ Սարգիս 56
Վռամշապուհ թագ. 9
Վրթանես գրիչ 40

Տաքտիկին 36
Տեր-Ներսեսյան Սիրարփի 20, 33
Տերուն Երեւանցի 104
Տիկնացտիկին (դուստր Գր. Ապիրատի) 56
Տիկնացտիկին (մայր Կուկոռի) 56
Տիրատուր 37
Տրդատ Գ թագ. 89, 96

Ուլուբեկ 104
Ումեկ 37

Փափայան Հակոբ 63
Փիլիպոս Աղբակեցի կթղ. 40, 59, 60
Փիլիպոս քհ. 31, 81
Փիլում 104
Փիրով 58
Փիր Թուման 82

Քրիստոս 9, 13, 20, 21, 24, 26, 28, 47, 56, 92, 93, 94, 99-101
Քուրդ 36

Օրմանյան Մաղաքիա 28




## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ


Աբիսողոմի այգի 105
Ագարակ 63, 102
Ազատ գետ 5, 54
Ալեքսանդրապոլ 61
Ալիկրաղի 54
Աղջոց վանք 8, 38, 55, 56
Ամիրբեկի այգի 105
Այրարատյան նահանգ (գավառ, տուն) 26, 36, 37, 94, 96
Այրիվանք *տե՛ս* Գեղարդ
Ամենափրկիչ վանք *տե՛ս* Հավուց թառ
Անանիա առաքյալի մենաստան 106
Անի 13, 17, 19, 22, 24, 25, 32, 43, 44, 52, 81
Ավազներ (տեղանք Հավուց թառի մոտ) 104
Ավանասար գյուղ 82, 102
Ավանիկ գյուղ (թերեւս նույնն է նախորդի հետ) 63, 82, 102, 103
Ավետի այգի 105
Արամա երկիր 96
Արեւիք գավառ 53
Արկական Ս. Ստեփանոս 15
Արճեշ 42
Արջառերկ անապատ 40
Արցախ 31
Արուճ 21, 90

Բագնայր 13
Բլրաշեն 54
Բյուզանդիա 20
Բյուրական 12
Բջնի 24, 25

Գառնի 5, 6, 8, 10, 12, 31, 37, 44, 46, 54, 60, 62, 82, 89-100, 102, 106
Գառնու ձոր 10, 12, 53, 60, 83, 90
Գեղամա գավառ 96
Գեղա լեռ 8
Գեղարդ (Այրիվանք) 5, 8, 31, 37, 54, 55, 81, 84
Գետոց վանք 10, 14, 53, 54, 90, 91
Գողթ գետակ 5, 54
Գողթ (Կոխտ) գյուղ 5, 14, 53, 60, 63, 91, 102, 103

Դաղվերթ 102
Դարաղքիլան 54
Դարոյնք 20, 21, 28
Դվին 8, 12, 16, 62, 90-92
Դրուսանկ 54

Եղիվարդ 82
Երեւան 5, 22, 42, 59-61, 83, 92, 102, 106
Երուսաղեմ 38

Զանգիբախար 105
Զվարթնոց 13, 90

Էջմիածին 5, 38, 40, 60, 62, 82, 100, 102

Թաբոր լեռ 96
Թալին 21
Թառնիս գյուղ 63, 82, 102, 103
Թարաքյամի գյուղ (*տե՛ս նաեւ* Գետոց վանք) 54, 63, 102

Իլի 52

Լիբանան 96
Լոռե 32, 35, 81

Խառան 100
Խարբերդ
Խծկոնք 37
Խոր Վիրապ 90

Կատեպանի կոնդ 103
Կաքավաբերդ *տե՛ս* Քեղի
Կոնդ 60, 102
Կոստանդնուպոլիս 28, 100
Կոտայք 14, 62
Կեչառիս 13-15, 52, 56, 59
Կըզըլ վանք գյուղ 82, 100
Կոխտ (*տե՛ս նաեւ* Գողթ) 14, 53, 60, 82, 91
Կովկաս 96
Կուդիս (Կուտիս) գյուղ 82, 102
Կուտուց վանք (*տե՛ս նաեւ* Գետոց վանք) 54, 82, 102, 103

Հաղբատ 19
Հայաստան 5, 20, 31, 52, 54, 59, 62, 64, 91
Հայոց թառ *տե՛ս նաեւ* Հավուց թառ 9-11, 24, 36-38, 40, 41, 43, 44, 47, 60, 62, 63, 90, 92, 96, 97, 101
Հառիճի վանք 61
Հավուց թառ գյուղ 60, 63, 100, 102, 103
Հավուց թառ վանք 5 10 եւ այլուր
Հավուց թառի եկեղեցիներ՝
  Կաթողիկե (Ս. Սիոն) 14, 33, 36-39, 46, 47, 49, 56, 91, 97
  Ս. Աստվածածին 37-40, 46, 47, 49, 98
  Ս. Կարապետ 35, 37, 45,
  Ս. Հարություն 37, 49, 98
Հավուց թառին պատկանած այգիներ՝
  Դարպասի խաչի 58
  Լոք Սահմադի 104
  Մահտեսի Հովհաննեսի 104
  Մսրխանի 104

Նորագյուղի *105*
Շիկի նորք *58*
Սեւահող *57*
Քյություրի *104*
Հավուց թառին պատկանած հանդամասեր՝
Գրիգորի հող (Գառնիում) *106*
Դաստագյուլենց (Գառնիում) *106*
Դատենց հող *103*
Խորագետիկ *103*
Ծվարներ *103*
Հղի գլուխ *103*
Հղի տակ *103*
Ռեգանտափ *103*
Վարդկենց *58*
Տանձոլանջ *58*
Օձակենց *58*
Հավուց թառին պատկանած աղբյուրներ՝
Սաբաթ *104*
Ջպաձորի ջուր *104*
Իշխանախոռ *104*
Հավուց թառին պատկանած տներ՝
Ագուլեցի Աղասու (Գողթում) *104*
Վանանց տուն (Երեւանում) *105*
Հերմոնի վանք *38*
Հոգյաց վանք *94*
Հովհաննավանք *44*, *47*
Հոռոմոսի վանք *32*, *34*, *52*
Հռոմ *20*, *21*, *25-28*, *94*, *95*

**Ձ**ագ գյուղ *62*
Ձորո վանք *89*

**Մ**աղասբերդ *43*
Մանազկերտ *91*
Մանկուս գյուղ *63*, *82*, *102*, *103*
Մաքենոցաց վանք *31*
Մարմաշեն *13*
Մեծ Բանանց *31*
Մեծ սելավատեղ *103*
Մսրխանենց այգի *104*

**Ն**որագյուղ *60*, *102*, *106*

**Շ**ենգավիթ *60*, *102*
Շիկաքար *54*

**Ո**վա գյուղ *14*, *91*

**Ջ**րվեկ (Ջրվեժ) *60*, *102*

**Ռ**ուսաստան *5*, *7*
Ռշտունյաց երկիր *94*

**Ս**ալմանի այգի *105*
Սանահին *37*, *52*
Սեւան կղզի *8*, *16*
Սերկեւիլ գյուղ *101*
Սեբաստիայի Ս. Նշան *8*, *41*
Սինա լեռ *94*, *96*
Սյունիք *22*, *53*
Սոթք *53*
Սուրբ Մարի *35*
Ս. Սարգիս գյուղ *54*, *63*, *82*, *102*, *103*

**Վ**աղարշապատ (*տե՛ս նաեւ* էջմիածին) *12*
Վանա լիճ *52*
Վանստան *55*
Վասպուրական *89*
Վարագա վանք *95*

**Տ**աթեւի վանք *40*, *53*
Տարոն *21*, *25*, *26*, *94*
Տեկոր *56*
Տիվրիկ *38*
Տավրոս (Տորոս) *96*

**Ու**ռընկար *42*

**Ք**աղբերդ (Քեղվարդ) *82*, *103*
Քանաքեռ *40*
Քարսաղ բլուր *96*
Քեղի (Գեղի) *5*, *13*, *16*, *19*, *56*
Քեղոձոր *54*
Քյալբալու այգի *105*
Քոշան լեռ *96*

**Օ**լիմպիա լեռ *96*
Օշական *36*, *102*



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք ........ 5
Սկզբնաղբյուրներ եւ ուսումնասիրություններ ........ 6
Հիմնադրումն ու անվան ստուգաբանությունը ........ 8
Գեւորգ իշխանը եւ Կաթողիկե եկեղեցու կառուցումը ........ 13
Գեւորգ իշխանի տոհմը ........ 16
Ամենափրկիչ խաչը ........ 20
1013 թ. արձանագրության առեղծվածը ........ 23
Գրչության կենտրոնը ........ 31
Նաթանայել եպիսկոպոս Հավուցթառեցի ........ 41
Վանական համալիրը եւ եկեղեցիները ........ 45
Գետոց վանքը ........ 53
Վիմագրական ժառանգությունը ........ 55
Հավուց թառ – Երեւան ........ 59
Պատմական խճանկար ........ 62
Հավուց թառի վանքի առաջնորդները ........ 81

Հավելված (Հավուց թառի վանքին վերաբերող բնագրեր) ........ 87
1. Նաթանայել Հավուցթառեցու ժամանակագրական գրառումները ........ 89
2. Մանվել Բջնեցու Ամենափրկիչին նվիրված գանձը ........ 93
3. Սիմեոն Ջուղայեցի, «Դրուատիք յուխտն Հաւուց թառ» ........ 97
4. Սիմեոն Երեւանցի, «Սուրբ Ամենափրկիչ վանքի որպիսությունը» ........ 100

Ամփոփում (անգլերեն) ........ 107
Ամփոփում (ռուսերեն) ........ 108

Օգտագործված աղբյուրներ եւ գրականություն ........ 109
Անձնանուններ ........ 113
Տեղանուններ ........ 117

Կարեն Արտաշեսի Մաթեւոսյան
Պատմական գիտությունների դոկտոր

# ՀԱՎՈՒՑ ԹԱՌԻ ՎԱՆՔԸ



Karen Matevosyan
Doctor of Historical Sciences

HAVUTS TAR MONASTERY

Карен Арташесович Матевосян
Доктор исторических наук

МОНАСТЫРЬ АВУЦ ТАР

«ՄՈՒՂՆԻ» հրատարակչություն

Լուսանկարները՝ Արտաշես կրտսեր Մաթեւոսյանի
Ձեւավորումը՝ Վարդան Դալլաքյանի
Տպագրված է «ԳԱՍՊՐԻՆՏ» տպագրատանը

Երեւան • 2012




**Կարեն Մաթեւոսյան**

*պատմական գիտությունների դոկտոր, Մ. Մաշտոցի անվ. Մատենադարանի արվեստի պատմության եւ գրչության կենտրոնների ուսումնասիրության բաժնի վարիչ*


Ծնվել է 1958 թ. Երեւանում, վաստակաշատ պատմաբան, ձեռագրագետ Արտաշես Մաթեւոսյանի (1922-2004) որդին է:

1980-2004 թթ. աշխատել է Հայաստանի ազգային պատկերասրահում (1995-ից՝ գիտքարտուղար): Եղել է «Լուսաւորիչ» (1994-1996), «Քրիստոնեայ Հայաստան» (1997-2000) թերթերի, «Գիտելիք» (2001) եւ «Հայ արվեստ» (2002-2008) ամսագրերի գլխավոր խմբագիր, «Մոմիկ» մշակութային միություն ՀԿ-ի նախագահ (2000-2007):

2005-ից աշխատում է Մատենադարանում: Գիտությունների դոկտոր՝ 2008-ից: Հանդիսանում է ՀՀ Բարձրագույն որակավորման հանձնաժողովի Հայոց պատմության 004 եւ Հնագիտության ու ազգագրության 007 մասնագիտական խորհուրդների անդամ:

Դասավանդում է Գեւորգյան հոգեւոր ճեմարանում եւ Խ. Աբովյանի անվ. հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Հեղինակ է միջնադարյան Հայաստանի պատմությանը, մատենագրությանը, մշակույթին ու արվեսին նվիրված 12 գրքի եւ ութ տասնյակ գիտական հոդվածի:

Վերջին տարիներին տպագրված գրքերից են՝

- Սամվել Անեցու ժամանակագրության ձեռագրերը եւ նորահայտ լրացումները, Երեւան, 2009:
- Մոմիկ (հայերեն, անգլերեն), Երեւան, 2010:
- Անի-Շիրակի պատմության էջեր, Երեւան, 2010:
- Հեթում պատմիչ Կոռիկոսցին եւ նրա ժամանակագրությունը, Երեւան, 2011:
- Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը, Ս. Էջմիածին, 2012:


Հեղինակի էլեկտրոնային հասցեն՝ karenmatevosian@gmail.com



ISBN 978-99941-33-70-3